







Հրատարակութիւն «ՇԻՐԱԿ», Տպարանի

891.99

9-


ՍՄԲԱՏԻ ՀԵՔԻԱԹԸ

Աօխասաօիրուքիւն
Մ. ԳԻԻԼԳԵՈՋԵՈՆԻ

Արկարց սպագրուքիւն

A 3961

Գիտական ժողովրդոց համար



Տպարան «ՇԻՐԱԿ», Ալեքսանդրապոլ

1915

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS 101

LECTURE 1

1950

PHYSICS 101

Հրատարակութիւն «ՇԻՐԱԿ» Տպարանի

ՍՄԲԱՏԻ ՀԵՔԵԱԹԸ

Աօխասաօրուքիւն
Մ. Գ. ԻԻԼԳԵՆՁԵՆՆԻ


Արկարդ օպագրօւքիւն

Գիտական ժողովքոց համար




Տպարան «ՇԻՐԱԿ» Ալեքսանդրապօլ

1914



Դեռ մանուկ հասակումս, երբ իմ նախնիքը նահապետական սովորութեամբ գիւղական տաք գոմի սենեակներում ձիթով ճրագի լուսով նստաւած հին աւանդական հերեաթներ էին ասում և սիրով ականջ անում, ես սրտով ցաւկահում էի այդ հեքեաթներից մի բանիսը դիտենալ, և իմ մեծերի նման, ես ևս պատմել էի ուզում ուրիշներին: Աստուած տուեց մեցածայ, բայց շկարողացայ բոսարժանոյն ուսումնարան գնալ և կատարելագործուել ուսման մէջ, այնուամենայնիւ ես դարձեալ չէի մտնում իմ մանկական հասակում մտածածս: Վերջապէս 1890 թուին, իմ ուսման կարօտ ուղեղը յոգնեցնելով սկսեցի յօրինել այս հերեաթը և վերջտուի շորս ամսուայ ընթացքում, որը պարունակում է իւր մէջ մօտ 70 երգեր, հարց և պատասխան, առնուած սուրբ գրքերից, վկայութիւններով, քաջ և յաղթող պատերազմներ:

Խոստովանում եմ նաև այն, որ ես մի գիւղական և անուսում անձնաւորութիւն լինելով, կարող եմ իմ գրութեանց մէջ անկանոն նախադասութիւններ և խորթ բառերը երևալ, այդ մասին ներողութիւն եմ խնդրում պ. ընթերցողներից:



ՍՄԲԱՏԻ ԵՒ ՍՕՖԻԱՅԻ ՀԵՔԵԱԹԸ



ժամանակներում Արմաշի քաղաքում ապրում էր մի վաճառական Սաղաթէլ անունով. Սաղաթէլը շատ հարուստ, մեծատուն և առաջադէմ մի իշխան էր. ունէր նաև մի կին Մարգարիտ անունով.

Սաղաթէլը մեծ կալուածատէր մարդ էր այդ քաղաքում. ունէր նա իրան 30 հատ բազազի խանութ, 20 հատ կուպեցի խանութ, 15 վառարան, 12 սրճարան, 10 պանդոկ (խան). այս բոլորը նա կառավարում էր վարձուած կառավարիչներով. Թէև ամեն մի բանով նա լի էր և տարեկան ամեն մի ծախսից դուրս 6000-ի չափ ոսկի եկամուտ էր ստանում, բայց այս ամենը նրանց չէր ուրախացընում. նրանց անզաւակ լինելը ոչ թէ միայն տըխրութիւն էր նրանց, այլ ամօթանք էլ էր համարւում:

Սաղաթէլը յիսուն և հինգ տարեկան էր և իւր կին Մարգարտին էլ նմանապէս իւր հասակն առած անդաւակ կին էր։ Սորա մի լաւ սովորութիւն ունէին, այն է՝ իրիկուն, առաւօտ եկեղեցուց յետ չմնալով կադօթէին իրանց անդաւակութեան և աշխարհի խաղաղութեան համար։

Նրանց սգորմութեանը չափ չ'կար, սրովհետև, երբ իրիկուն կամ առաւօտ եկեղեցի գնալու կլինէին, քաղաքում ապրող այրատ և անճար մաքդիկ նրանց դռնից սկսած մինչև եկեղեցին հասնելը աջ և ձախ կանգնած կը լինէին. նրանք ըստ-սովորութեան առատ ողորմութիւն տալով կ'հասնէին եկեղեցին և այնտեղից դառնալով դարձեալ նմանապէս մինչ տուն։ Յայց այս ևս պէտք է ասել որ, Սաղաթէլը իւր կին Մարգարտին միշտ իւր ձախ կողմն ունենալով կշրջէր, և Սաղաթէլը միշտ աջ կողմի դռնուող այրատներին կտար ողորմութիւն, իսկ Մարգարտը իւր ձախ կողմններին։ Յացի այդ յիշուած առատ տուրքերը, տարուայ իւրաքանչիւր տաղաւարներին մի մի ևզ մատաղ կանէին, ու քաղաքի մէջ գանուող անճար այրատներին առատ կերակուր կ'ըրաչխէին. մերկերին հագուստ, պարտատէրին իրանց տալիքներից կ'ազատէին. վերջապէս Աստուածային ամէն մի պատուիրանք այդ բարի և ընտիր ընտանիքը՝ անձանձրոյթ կ'կատարէին։

Այս Աստուածահաճոյ ամուսինների ս. աղօթքը

արձագանք գտաւ Տիրոջ Աթոռի առաջ, և նրա ուրբմած ծառաները, մեծ օգորմութիւն գտան ամենարարձրեալ Արարչից: Երբ Սաղաթէլի կին Մարգարիտը յղացաւ և նրա յօութիւնը յայտնուեց, նըրանք անսպասելի մի ուրախութիւն տեսնելով կըրկնապատկեցին և եռապատկեցին իրանց տուրքը և օգորմութիւնները: Անցաւ ինն ամիս, ինն ժամ և ինն րոպէ և ահա Մարգարիտը ծնաւ մի շատ գեղեցիկ ու աննման արու զաւակ. և ըստ սովորութեան, ութ օրից յետոյ Մկրտեցին և անունը Սմբատ դրին: Աստուծոյ հովանաւորութեամբ Սմբատը աճում և մեծանում էր և երբ ութ տարեկան դարձաւ, Սաղաթէլը տարաւ նրան մի Ղազարոս անունով ուսուցչի մօտ, որպէսզի իւր սրդին կատարեգործուի ամեն մի բանում և աստուածային ս. պատուիրանները ուսումնասիրէ: Ուսուցչի հետ պայմանաւորուեցան հինգ հարիւր սօկով, հինգ տարուայ ընթացքում սովորեցնելու:

Սաղաթէլը Սմբատին թողեց ուսուցչի մօտ և ինքը վնաց իւր գործին: Մնացան որոշուած հինգ տարիները և Սմբատը Ղազարոսի մօտ իւր եռանդուն աշխատութեամբ սովորեց ոչ միայն հայերէն, այլև տաճկերէն լեզուին: Էլ ամենահմուտ մի կարգացող դարձաւ. մինչև անդամ իւր վարժապետ Ղազարոսն էլ զարմացել էր նրա ընդունակութեան վրայ:

Թէ Հայկական և թէ տաճկական ուսումնարանները անկարող էին Սմբատի հետ բանակ-

ցութեան մանկի և նրան պատասխանելու տկարա-
րանում էին: Մէկ օր, նա ուսումնարանից տուն վե-
րագանալիս, երբ անց էր կենում մի որջարանի
դռնով, տեսաւ այդտեղ մի երգիչ. որ նուագում
էր բազր և երգում զմայլեցաւ նրա ձայնից և կան-
գնեց այդտեղ: Վերջոպէս Սմբատը սաստիկ յուզ-
ւած կանգած մնաց այդտեղ մինչև երկիոյնան
եկեղեցոյ զանգակների խփելը, և երբ Մայր Եկե-
ղեցոյ զանգակը որոտաց, Սմբատը սթափուեց իւր
յուզմուրնից և օրուայ միջնելը տեսնելով, շտապեց
ղէպի տուն. բայց ճանապարհին մտածում էր եր-
գեցողութեան վրայ: Սմբատը հասաւ սուն, նա ներս
մանկիս մայրն հարցրեց ինչի ախար ճաշից յետ
մնացիր, ինչ պատահաւ քեզ: Սմբատը իրանպատա-
հած անցրը ծածկելով ասաւ, որ մի բիշ տկար եմ
այսօր: Մարգարիտը փաթաթուելով որդուն համբու-
րեց նորա մի բիշ գունատուած թշները և խփոյն
սեղանի վրայ կանչեց ճաշելու. բայց Սմբատը փո-
խանակ ուտելու. դարձեալ լսած եղանակների և
երգերի վրայ էր մտածում: Հայրն էլ նկատեց որ
Սմբատը հաց չի ուտում, հարցրեց՝ Սմբատ ջան,
ինչպէս երկում է դու տկար չես, բայց չգիտեմ
քեզ ինչ է պատհել, ինձանից մի պահի օրդի, ասա
զունէ ուղիղը, մի հնար կ'իլնի: Սմբատը տեսաւ
որ հայրը շատ է ստիպում, ասաւ, հայրիկ, այսօր
ճաշին տուն գալիս, մի սրճարանի դռնով անց էի կե-
նում լսեցի մի անուշ ձայն, ներս գնացի, որ մի

երգիչ գեղեցիկ նւագում էր և երգում. նրանով
զմայլած ճաշից ետացայ. և մինչև հիմայ էլ կար-
ծես աչքիցս և ականջիցս շին հնւանում թէ յնրը
երգիչը և թէ նորա եղանակները, ան հայրիկ, ե-
րանի թէ ես սովորած լինէի այդ արհեստը և
հիմայ ես էլ նրա պէտերգէի նուագէի, այն ժամանակ
շատ ուրախ կանցնէին իմ օրերը. Հայրը պատաս-
խանեց, Սմբատ ջան, ամեն մի բան մարդ կարող
է իւր ժամանակին սովորիկ, սրովհետև դու դեռ
փոքր ես, հիմայ քո ուսումնարան գնալու ժամա-
նակդ է և երբ մի փոքր կ'մեծանաս, ուսումդ
կաւարտես, այն ժամանակ կարող ես սովորել և այն
ինչ որ ցանկանում ես, սրովհետև ամեն մի գիտու-
թեանց մայրը, կարգալն է; երբ իւր ժամանակին
կարգալը լաւ շ'սովորես, երբ մեծացար նրանից
յետոյ քեզ ուսումնարան գնալը անվայել կ'լինի
և ուսումդ թերի կ'մնայ:

Սմբատն ասաւ, հայրիկ ջան, այդ կողմից ան-
հոգ եղիր, սրովհետև, բացի իմ հայերէն լեզուիս
աւարտելը, Տաճկերէն ես լաւ գիտեմ. կարգալու
կողմից իմ գիտեցածս ինձ բաւարար է, ցանկա-
նում եմ որինձ այդարհետին ուղարկէք սովորելու,
սրովհետև ես շատ եմ սիրում նուագել ու երգել.
Հայրն ասաւ, ուրեմն ես վաղը անպատճառ կ'զը-
նամ քո վարժապետի մօտ և քո գիտութեան մա-
սին տեղեկութիւն կաւնեմ և նրանից յետոյ քեզ
կուղարկեմ այդ արհեստն էլ սովորելու:

Միւս առաւօտ շատ կանուխ Սոգաթէլը գը նայ Ղազարոս վարժապետի մօտ և նրանից իմացաւ Սմբատի ուսման, զարգացման մասին. վճարեց նրան խոստացած 500 ոսկի վարձը և տուն վերադառնալով ասաց. — Սմբատ, որդեակ, այժմ ես հասկացայ քո ասածների, ճշտութիւնը. հմիայ կարող ես քո ցանկացած արհեստը սովորել. վերկաց գնանք քո տեսած վարպետի մօտ, որը սրճարանում երգելիս դու տեսել էիր:

Եյգ երգիչ վարպետ անունը Մելքիսեղեկ էր, Սոգաթէլը նորա հետ սլայմանաւորուեցաւ մի հարիւր ոսկով, երեք տարուայ ընթացքում լաւ նուագել և երգել սովորեցնելու Սմբատին: Մելքիսեղեկ վարպետն էլ մի օրդի ունէր ևս Սմբատ անունով: Վարպետը Սմբատին իւր օրդուն անուանակիցիինեուն, նրա վարրի գերազանցութեան և ձայնի բազմաբնութեան համար շատ էր սիրում և բարի աչքով նայում նրա վերայ: Մելքիսեղեկը Սմբատին հարցրեց, թէ ո՞ր նւագարանն ես սիրում, օրի վրայ սովորես և երգես. Սմբատը վինը (սանթուր) վերառաւ: Մելքիսեղեկը ամեն ջանք գործէր գնում իւր աշակերտին սովորեցնելու և մինչև մի տարի լըանալը Սմբատը նւագածութիւնը բաւականին սովորած էր. երկրօրդ տարում Սմբատը համարեայ ամեն ինչ սովորել էր. վերջապէս լրացան երեք որոշուած տարիները և Սրմաւիր բազարում մի հռչակաւոր և անւանի երգիչ ու բանաստեղծ ան-

ւանուեց Սմբատը, որի հետ համարեայ իւր վարպետն անգամ չէր կարող մրցել: Սմբատի անունը հռչակեց ամբողջ Արարատեան աշխարհում: Մեխիբսեդեկը իւր աշակերտի վրայ այլիս պակասութիւն չ'գտնելով ըստ հին սովորութեան իւր աշուղական օրհնութիւնը տւեց Սմբատին և արձակեց: Սմբատը իւր վարպետի ձեռքը խոնարհաբար համբուրելով վերառաւ իւր սանթուրը և գնաց իրանց տուն: Նա շարունակ երգելով ու նուագելով էր անցնում օրերը:

Մէկ օր Սմբատը քաղաքում ման գալիս տեսաւ արարական շուտագնաց նժոյզների վերայ նըստած երկու զինուորներ գեղեցիկ հագնուած, փայլուն զէնքերով կոյտուած, օրսօրդական պարկերը ուսերին մի քանի գամբռներ և բարակները յետներկից գցած գաշատից քաղաքը մտան Սմբատը դրանց տեսնելիս ցանկացաւ նրանց արհեստն էլ սրվօրիչ և դրա համար հարցնել կամեցաւ նրանցից, թէ արդեօր նրանք էլ կ'կամենան այդ արհեստով իրանց աշակերտ և հետեւոյնք ունենալու: Երբ Սմբատը դիմեց նոցա, նրանք ևս Սմբատի շարժման և գեղեցկութեան հաճութիւն տալով, սիրով բնդունեցին Սմբատի առաջարկութ ընը պատասխանեցին: սիրուն պատանի, մեր արհեստի սկզբունքը ազատ կեանք վարել է նշանակում, մենք նժոյզների վրայ նստած ազատ շրջում ենք դաշտ և անտառ, որսում ենք համեզ միս ունեցող թռչուններ և այդ թռչունների համեզ մտից քաղցրահամ

խորտիկներ և խորովածներ ենք պատրաստում և ազատօրէն վաճիլում. Սմբատը որ իւր կեանքը մինչ այդ օր ուսումնական շրջաններում բանդարկեամ էր համարում, ազատութեան ձայնը լսելուն պէս, խուսիչ և ե՛՛ժ միտքը դրաւ նրանց արհեստին հետեւել և որի համար էլ տուն գնալով, հօրը առաջարկեց, հայրիկ, ասաւ նա, ես կամենում եմ սրսկանների շարքն անցնել, եթէ կ'բարեհաճես, ինձ համար մի լաւ ձի և մի ձեռք հանգերձ և դէնքեր պնիր և ես գինուած կ'հեծնեմ ձիս և սրսի կ'գնամ իմ ընկերների հետ: Հայրը թէև կամք ունէր, բայց որդուն փորձելու համար ասաւ, Սմբատ ջան, դու դեռ փոքր ես, չես կարող ձի նստել. դուցէ ձին չափ ընկնելիս դու չ'կարողանաս վրան մնալ և դրա համար էլ չեմ ուզում: Որդին ասաւ հայրիկ, եթէ ես հիմիկեանից չ'պատրաստուիմ այդ արհեստում, դուցէ վաղը կամ միւս օրը ես թշնամիներ ունեցայ, նրանցից ինչպէս կարող եմ պաշտպանուել շէ աւելի լաւ է նախօրօք պատրաստել, սրովհետև այրական բաջութիւնը զինավարժութիւնից է կախած: Վերջապէս Սմբատը հօր հաճութեամբ սսկանի ամեն մի պիտոյքը պատրաստեց, մի լաւ ձի առնել տեց, օրովհետև Սմբատը մի հատիկ դաւակէր, դրա համար հայրը նսրա ամեն մի խնդիրները շէր մերժում, հայրը Սմբատին թանգազին շորեր գնեց, սսկէ ժամացոյց և մի արհեստական մատանի, գեղթափակներով. նրա մատանու աղը այս շնորհքը ունէր,

պատահէր դեղւած (թունաւորւած) կերակուր, այդ մատանու ախտի, իսկոյն կ'լաւանար այդ թունաւորուած կերակուրը կամ մարդը: Վերջապէս Սմբատի համար ոչ մի բան սակաւ չէր, նրա ձին արդէն ծառաները ամեն ջանք գործ դրած պահպանուած էին. մի ամսու շափ Սմբատը օրական երեք անգամ հեծնուած էր ձին և քաղաքի փողոցներում շուռ էր գալիս:

Ամիսը լրանալուց յետոյ մի Հանքարձում անունով զինաւորի և որսորդի պատահելով նորա հետ պայմանաւորուեց և միմեանց ժամադիր եղան, որպէս զի միւս օրը ամենը իւր կողմից պատրաստուած կանուխ գան որոշուած տեղը և նշանակւած ժամանակին վնան իրանց ցանկացած գործին: Վերջապէս միւս օրը, արշալոյսը գեռ նոր էր բացւել, Սմբատը վեր թռաւ տեղից, հագաւ իւր գեղեցիկ որսորդութեան շորերը, զինուեց իւր մարտիկ և փայլուն զէնքերով, հրամայեց ծառաներին, ձին դուրս բերին և կանգնացրեցին դուռը: Սմբատը դուրս եկաւ և նրանք դարձնելով դէպի արեւմտան, խաչակնքեց և աղօթեց, Տէր, դու մեզ հետ եղիր, ասելով հեծաւ ձին սլացաւ դէպի նշանակւած տեղը: Արևը դեռ նոր էր իւր փայլուն ճառագայթները տարածել Արմաւիրի շրջակայ լեռներն ու դաշտերը. ամեն մի խոտի, ամեն մի ծաղկի քթից մի մի մարգարիտէ ցօղ կախուած փայլին էին տալիս. Սմբատը կարծես նոր աշխարհ եկած, նոր լոյս տեսած

զմայլած մնացել էր հաղարաւոր ծաղիկների և
գոյնզգոյն վարդերի հոտերով. վերջապէս Համբար-
ձումն էլ եկաւ և միմեանց բարի լոյս մալթելով
առաջ գնացին, հասան գաշտը. նրանք աշրիբը
յառած աջ ու ձախ նայելով գնում էին. յանկարծ
մի այծիամ ընկաւ նրանց աշրովը. Համբարձումը,
որ փորձուած մի որսորդ էր, խսկոյն շտապեց յար-
մար դիրքի կողմը և այնտեղից նշան բռնեց այ-
ծեամի կրծքին և նետը բաց թողնելով զլորեց այ-
ծեամին:

Սմբատը շտապեց, ձիով վրայ հասաւ և բռնեց
վիրաւոր այծեամին:

Նրանք ուրախանալով վեր առան այծեամը և
քաշեցան մի կողմ, իջան ձիերից և թողին, որ
արածեն, խսկ իրանք շոր ցախեր ժողովելով կրակ
արին և այծեամի մտից սիրուն խորոված պատրաս-
տեցին և նստան ուտելու. գինի էլ ունէին, գինով
և խորոված մսով լաւ ճաշից յետոյ մի քիչ էլ
հանգստացան և իրանց բազդը սրհնելով՝ հեծան
ձիերը և դարձան դէպի քաղաք. Համբարձումը ա-
մեն մի կերպ աշխատում էր Սմբատին վարժեցնել
այդ արհեստում՝ թէ ձիախաղերի և թէ զինավար-
ժութեան մէջ: Այդ երկուսը բազաք հասնելիս Համ-
բարձումը Սմբատին տարաւ դէպի իրեց տան կող-
մը և ցոյց տուեց իրենց տները ու պատուիրեց որ,
ամեն առաւօտ գոյ իրան իմաց տայ և միասին գը-
նան դաշտ: Գրեթէ բաւական ժամանակ նրանք

շարունակեցին իրանց որսկանութիւնը: Միայն Սըմբատի սովորութիւնն ինչ էր. ամեն իրիկուն գէպի քաղաք դառնալիս, նա կսկսէր ձիախաղը և վարմանալի կերպով զէնք խալացնելով կ'մտնէր քաղաք, համարեայ ամեն երեկոյերն ամբողջ քաղաքը տնօրթեան դուրս կ'գար Սմբատի զինավարժութեան, և վարմանալի շարժումներին:

Ձիուց իջնելիս, ծառաները կ'տանկին խընամելու, իսկ ինքը մի քիչ հանգստանալուց յետոյ՝ կառնէր նուագարանը, կ'նուագէր և կ'երգէր: Նրանից յետոյ վեր կառնէր ո. գրքերը և մի առ մի աչքից անցնելով, նրանց միջից ս. աղօթքներ վեր առնելով, կ'գրէր և ըստ նահապետական դարուց կ'կարէր իր վրան շար աչքից ազատ մնալու և պատերազմների մէջ յաղթունակ տանելու նպատակաւ:

Սմբատի քաջութեան անունը տարածուեց ամբողջ աշխարհը և հեռաւոր տեղերից Սմբատի քաջութեան և զեղեցկութեանը տեսնելու կուգային:

Մի օր Սմբատը Համբարձումի հետ սրտի վընացած ժամանակը, անտառի մէջ սլտուելիս յանկարծ իրարից անջատուեցան և կորցրին իրար. Համբարձումը մենակ մի եղնիկ տեսաւ և շատ շարշարուեցաւ մինչև անտառի ծայրը հասցրաւ, յետոյ մթութեան պատճառաւ կորցրեց. Համբարձումը իր յանաջողութեան համար բարկացել էր և քիչ էր մնում որ բարկութիւնից տրաքուէր: Այդ միջոցին յանկարծ քաւտսուն ձիաւոր մի աւազակախումբ մէ-

կէն յարձակուեցին Սմբատի վրայ. բայց քաջ Սմբատը անհրկիւզ սուրբ մերկացրեց և այդ բառասունին էլ առաջ խառնած տորաւ մի բարձր քարափից թափեց. նրանց ձիերը առաւ և բոլորն էլ տարաւ քաղաք և յանձնեց նահանգապետին, որի համար Սըմբատի և իւր նժոյգի նկարը վեր առած տարածեցին ողջ աշխարհում և կայսերական պարզկնեհով վարձատրեցին Սմբատին. Այնուհետև Սմբատը առանձին էր գնում որսորդութեան, որովհետև էլ ոչ երկիւզ սւնէր և ոչ մէկից կախում ունէր. Մի օր էլ Սմբատը դարձեալ առանձին գնաց սրսի և դէպի այն կողմը, որտեղ որ սպանել էր աւաղակնորին, մինչ կէս օր լինելը ոչ մի որս չ'պատահեց նրան. մենակութիւնից նա յոգնած ձիուց իջաւ մի աղբիւրի մօտ. սառը ջրով մի քիչ դովացաւ, հաց կերաւ և իր վերարկուն գլխին բաշելով պարկեցաւ քնելու. Այդ տեղում շատ էր քնել թէ քիչ, երազում իւր գլխու մօտ կանգնած տեսաւ մի սպիտակ ձիաւոր. Սմբատը նրան տեսնելիս վախեցաւ. նրան աւաղակ կարծելով. բայց զինուորը, նրան ասաւ, մի վախենար Սմբատ, ես քո կարածածդ շեմ. այլ երազահաս ս. Մարգիսն եմ, վեր կաց, ձիդ նստիր և իմ յետեւիցս արի:


Սմբատը թէև քնած ու հրազումն էր տեսնում այդ ս. զինաւորին, բայց նրան այնպէս թւաց, թէ ինքը արթուն և կենդանի աչօք է տեսնում ամէն մի երևոյթ. նա սրայէս թէ իւր ձին նստած գնաց

Նոյա յևոյց և յանկալ ծ իբան մի անձանօթ քա-
 դարում մի բարձր դարպազի դրան կանգնած տե-
 սաւ իւր առաջնորդող զինաւորի հետ. զինաւորը
 ձայն տաւ, Սօֆիա, դուրս արի. և ահա դարպազի
 դռները բաց եղան և ներսից մի գեղեցիկ ու ան-
 նման օրիորդ դուրս եկաւ և նրանց դիմացը կանգ-
 նեց. բայց թէ ինչ օրիորդ, մի չքնաղ և արեգակի
 նման փայլուն և պայծառ դէմքով՝ հրեշտակ կար-
 ծես լինէր:

A 3961

Սյլտեղ զինաւորը իր մօտից հանեց մի շիշ զի-
 նով լիք և բիւրեղեայ բաժակը լցնելով դէմ արեց
 Սմբատին և ասաւ, վեր առ այս բաժակը և խմիր,
 այս օրիորդի կենացը և սիրոյ համար. Սմբատը ա-
 ռաւ բաժակը սիրով և ողջ լերուք ասելով ընդու-
 նեց. զինաւորը մին էլ յցրեց և տաւ օրիորդին ա-
 սելով, դու էլ խմիր Սմբատի սիրոյ և կենաց
 համար. նա էլ միևնոյն բանը կրկնելով խմեց:

Զինաւորը առաւ, Սմբատ, այս քաղաքը Զէյ-
 թուն քաղաքն է, և այս օրիորդը Տիգրան վաճա-
 ռականի դուստրը, ահա այս բարձր վիթխարի շինու-
 թիւնները բոլորն էլ Տիգրանինն են, ես ձեր եր-
 կուսի սրտերումն էլ սարսափելի սէր եմ դցում, որ
 միմեանց սիրէք, բայց ձեր զլխից շատ անցքեր կանց-
 նեն մինչ կատարումն. միայն անհոգ եղէք, ես ամեն
 գործում ձեզ կ'պաշտպանեմ. Սմբատ, վեր արի ձիէդ
 և Սօֆիային ձեռք խփիր և ծանօթացէք. Սմբատը



իջաւ ձիուց և դէպի Սօֆիալին գնալիս Սօֆիան
դէպի տուն փախաւ. Մմատը շտապեց դէպի նը-
րան և դռնից ներս մտնելիս ոտքը սլկհաց և վայր
ընկաւ. դուլսը դրան դիպչելիս Մմատը ցնցւեց և
արթնացաւ քնից. հասկացաւ որ երազ էր տեսա-
ծը, որտի կսկծից ուշագնաց կգաւ. Համարեայ մի
ժամայ չափ էլ այդպէս մնալով, վերջապէս ուշքի
եկաւ և աչքերը բաց արաւ ու տեսաւ, որ արդէն
գիշեր է և աստղերը փայլում են, տեղից եկաւ և
դէպի ձին գնաց. իսկ ձին, Մմատի ուշագնաց ե-
ղած ժամանակին ոտքերով այնքան էր խփել գետ-
նին, որ գետինը կարծես հերկած լինէր. Մմատը
մի քիչ շոյեց իւր ձին և նստելով նրա վերայ գը-
նաց բաղար, ձին յանձնեց աստուազանին և գնաց
տուն: Ծնողները նրան որ դունատուած տեսան
ներս մտնելիս, ռարսափահար եղան և իսկոյն հաս-
կացան, որ Մմատին մի բուն պատահել է. շփոթուած
հարց ու փորձ էին ուզում անել և իմանալ եղած
անցքը. սակայն Մմատը ոչ խօսում էր և ոչ պա-
տասխանում, այլ քիթ ու բերանի վերայ ընկած
լուռ էր մնում. վերջապէս իւր ծնողաց թախան-
ձանքին զիջանելով խօսեց և ասաւ, իմ ցաւը ձեզ
միայն սանթուրովս կարող եմ յատնել. Մայրը իս-
կոյն շտապեց և սանթուրը հանցրաւ Մմատին.
Մմատը մի լաւ լարելուց յետոյ սկսեց նւագել մի
դիւան եղանակ և երգեց այնպէս.

Մի հայրիկ ինձ ս. Սարգիսը մի բարի պայման
տուեց.

Երազի մէջ ինձ երևաց և սիրոյ նշան տուեց.

Ականատես ու յայտնապէս ցոյց տուեց **Ջէյթուն**
բաղաբ,

Տիգրան կուպեցի աղջիկը **Սօֆիէն** սիրական տուեց:

Սյդ պատճառով ևս դառել եմ խենդ ու խելագար,
Ձէ կարիկի որ մոռանամ թէկուզ անցնի ամ հազար.
Պարմիր վարդի թեր թշերը ունբերը մարգարտաշար,
Հրեղէն ցեղից ընտրուած ինձ մի աննման տուեց:

Եթէ Աստուած արժան անէ կամիմ տեսութիւն գեամ,
Թէ չ'տեսնիմ մի ըողէ, պէտք է որ էրուիմ մնամ,
Ով հայրիկ իմ, քո Մմբատիդ խղճալով արա խնամ,
Սյս նպատակիս գնալու Աստուած հրաման տուեց:

Մմբատը այս երգը աւարտելուց յետոյ նրա
հայրն ու մայրն սկսեցին հարց ու փորձ անել. որ-
դի, ասում էին, այս ինչ խօսքեր է, որ ընդանից
դուրս խօսում ես, **Ջէյթուն** սրտեղ, դու սրտեղ,
Տիգրան սվ և նրա աղիջիկը սվ. մի սխալուի որդի,
այդպէս բան չ'կայ. նրանք ծածուկ Մմբատի ձիւ
տեղափոխեցին և զէնքերը նոյպէս ուրիշ տեղ պա-
հեցին, որպէս զի անզէնք և առանց ձիու չ'կարո-
ղանայ գնալ. բայց Մմբատը ասաւ, որ ևս առանց
ձիու և զէնքի էլ կարող եմ գնալ, բայց վերջը մը-
տածեց, որ առանց իւր ծնողաց օրհնութեան եթէ
գնալու լինի, գուցէ գործը չ'յաջողուի, ուստի միտ-

բը դրաւ, որ նրանց օրհնութիւնը առնի և յետոյ
 գնայ. առաւ նուագարանը ձեռքը և սկսեց քէշիշ
 օղլու եղանակով երգել այս երգը.

Հազար ու մէկ անուան տէրը կ'սիրէի,
 Ո՛ր ծնողք, ինձ տուէք հրաման գնամ.
 Խնդրեմ տուրք ու ողորմութիւն նուիրէք,
 Որ Աստուած ինձ լինի օղնական գնամ:

Ծնողները տեսան, որ սա հաստատ պիտի գը-
 նայ, հայրն ասաւ, որդի, սպասիր մի քանի խօսք
 էլ ևս ասեմ, եթէ կ'ուզես լսիր իմ խօսքերը և ա-
 սաւ.

Հ ա յ ը ը

Այդ ինչ միտք է որդի, կամ այդ ինչ սէր է,
 Մեզ տխուր թողնելով չէ արժան գնաս.
 Քեզ կաղաչեմ մէկ քանիմ օր համբերէ,
 Հօրդ թաղես անես գերեզման գնաս:

Ո ը ղ ի

Հայրիկ, մի արգելիր ինձ ճանապարհից,
 Միբելին չի ջոկուի իւր սիրահարից.
 Թէկուզ գնամ ընկնեմ մեծ գնաթ քարից,
 Մօֆիի սիրուն կուգեմ դէմ մահուան գնամ:

Հ ա յ ը ը

Ո՛ր դու իմ մէկուճար ազնիւ որդեակ,
 Քո գնալուդ տեղը, մեզ ասան շիտակ,
 Ծերունի ծնողքդ մի թող անզաւակ.

Կ'կարծեմ որ թողնես յաւիտեան գնաս.

Ո ը ղ ի ն

Սմբատն եմ գնայուս տեղը Ջէյթուն է,
Երազուժս տեսած սիրելիս հոն է,
Թէ ես ձեզ մոռանամ, Տէրն ինձ սպանէ,
Կ'ցանկամ սիրելուս տեսութեան գնամ:

Հ ա յ ը ը

Ո՛վ դու Սաղաթէլի որդի հարազատ,
Որովհետև գնայուս ես դու հաստատ,
Աղօթք անեմ մնաս փորձանքից ազատ,
Տէրը միշտ բեզ լինի օգնական գնաս:

Երգեցողութիւնը վերջանալուց յետոյ թէև ի-
րաւունք տուին գնայու, միայն ձին և գէնքերը շը-
տուին, մտածելով թէ, նա մի ջահել երիտասարդ է,
նա ինչ գիտէ Ջէյթունը կամ նրա ճանապարհը,
քաղաքից դուրս կ'գայ մի քանի օր կ'պտոռուի և է-
լի կ'վերադառնայ տուն: Բայց Սմբատը հագաւ իր
տնական հասարակ հագուստը, ոսկէ քամարը կա-
պեց և ժամացոյցը վրան առաւ և այն աղօթքի
գրուածքները հետը վերցրեց, նաև այն թանկագին
և դեղթափ ակնեայ մատանին ու իր սանթուրը, մը-
նաք բարով առաւ և ընկաւ ճանապարհ, Տէր դու
օգնիր աղօթքը մըմնջալով: Բայց Սմբատը իր ման-
կութիւնից մինչև այդ ժամանակ ոտքով ճանապարհ
չէր գրացել, որի համար շատ դժուար էր թուում
Սմբատին. թէև մենակ մարդու համար մեծ դժ-

ուարութիւն է հեռաւոր ճանապարհ շարունակելը, բայց Սմբատը Սօֆիայի սիրով տարացած ոչ մի բան չէր դժուարանում նորա համար, ոչ հեռու և անձանօթ ճանապարհը և ոչ միայնակութեան երկիւզը կարողացան Սմբատին իւր սիրելի տեսութեան ճանապարհից յետ կարգնեցնել: Արժաւիրից մինչև Ջէյթուն երկու ամսուայ ճանապարհ էր, այն էլ սուրհանդակի համար: Վերջապէս մի ամսեայ ճանապարհորդութիւնից յետոյ, մի օր հասաւ մի հայարնակ քաղաք, հարցրաւ քաղաքի մասին և իմացաւ որ Քալէշ (Քիթլիդ) քաղաքն էր, իրան լիջևանելու համար մի կարմիր դռնով սրճարան ցոյց տուին, որ Սարգիս Մատաթեանցին էր պատկանում: Վասն զի նրա սանթուրից հասկացան որ երգիչ էր, նրա համար տարան այնտեղ ու մի փոքր շահուի: Սմբատը ներս մտաւ սրճարանը խոնարհ կերպով բարևեց և նստեց դրան մօտերում: Սրճարանը լի էր բազմաթիւ մարդկանցով, կային նաև նուազածուններ, որոնց գլխաւորի առաջ մի թաշկինակ կար փռած և վրան ոսկի և տրծաթ դրամներ կիտուած, երգում էին երգիչները բաւարար եղանակներով, որոնց գլխաւորի անունը Մաղար էր և ունէր եւթ աշակերտներ: Սրճարանի բարձրագոյն տեղը բռնել էր մի իշխան մարդ, որի հրամանները իսկոյն և եթ կատարում էին այնտեղ գտնուողները, այդ մարդը տեսաւ Սմբատին և ձեռքի գործիքից հասկացաւ, որ երգիչ է, մօտեցաւ

նրան և հարցրաւ, երևի դուք էլ երգիչ կ'լինիք եղ-
բայր, համեցէք վերև, և մեր երգիչների շարքն ան-
ցած ելգեցէք մի բան էլ դուք, եթէ կարելի է:
Բայց Սմբատը աշուղական մրցումներից զգուշանա-
լով, պատասխանեց, հայր իշխան, որովհետև ես օ-
տար երկրացի մի անձանօթ մարդ եմ, գուցէ իմ
կոյմից այս ժողովքում մի անբաւակութիւն տես-
նուի, այն ժամանակ ինձ իմ յանցանքը ներող և
ինձ պաշտպանող չունենամ, ինձ լաւ չի լինի. ա-
ւելի լաւ կ'լինի թոյլ տար ինձ այս երեկոյ իբրև
հիւր հանգստալու և վաղը իմ ճանապարհը շարու-
նակելու:

Իշխանը ասաւ, սիրելի, մենք բալորս էլ հայեր
ենք, բեզ այստեղ ոչինչ ասող չի լինի. և բացի
դրանից եթէ, դու մի լաւ բան պիտեսնաս, այն ժա-
մանակ քեզ համար մի բիշ ճանապարածախս էլ
կ'հաւարենք, մի վախենար, այս սրածրանը իմս է,
ինձ Սարգիս Մատաթեան կասեն, քաղաքիս դա-
տաւորներն առանց ինձի ոչ ոքի պատժելու իրա-
ւունք չունին: Իշխանի այս խօսքերից Սմբատը սր-
տապնդուեցաւ. և առաւ, պարոն, եթէ դուք կըբա-
րեհաճէք ինձ մի փոքր պաշտպան հանդիսանալ,
ես էլ իմ կարեաց չափ, իմ շնորհքը ցոյց կ'տամ:
Իշխանը դարձաւ վարպետ Մաղաբին ասաւ, վար-
պետ, խնդրեմ բարեհաճէք թոյլ տալ մեր օտար
եղբօրն էլ մի տեղ նստել և մի բիշ երգել:

Վարպետ Մաղաբը նախանձութիւնից լցուած

վեհանձնաշար ցոյց տուեց ամենից ստոր աշակերտի մօտ նստելու: Իսկ Սմբատը փոխանակ վարպետի ցոյց տուած տեղը նստելու, բարձրացաւ և վարպետ Մաղաբի մօտը նստեց: Մաղաբը այս որ տեսաւ, մտրումն ասաց, սա կամ իրանից յոյսով մի գիտնական է, և կամ մի շատ տպէտ տղայ է, հարկաւոր է սորան մի կերպ փորձիլ: Բայց Սմբատի գեղեցկութեան և շարժումներին բոլորն էլ հաւանեցին և սրտով սիրեցին: Մաղաբը նուագեց դիւանու հղանակը և ասաւ Սմբատին, պատրաստ կաց, այստեղ նստելը օրէնքով է, սիրելիս, Սմբատն ասաւ ես պատրաստ եմ, համեցէք: Եւ Մաղաբը հարցրեց այսպէս.

Մաղաբն

Այն ինչն է, որ աշխարհի մէջ ամեն բանի վրայ կայ, Ստեղծուած ոչինչ չկայ, որ ճատաշուի տուանց նա. Դու որ այգրան համարձակուար բեղնից պատասխան կուզեմ.

Եթէ կարողութիւն չունիս սանթուրդ տուր ու գնայ:

Սմբատը

Այն անունն է աշխարհի մէջ ամեն բանի վրայ կայ, Ստեղծուած ոչինչ չ'կայ, որ նա անուն չու նենայ. Քեզ կաղաչեմ չ'բարկանաս շնորհալի վարպետ Մաղաբ

Խնայէ պանդխտութեանս շատ էլ մի հպարտանայ:

Մաղաբը

Այն ինչն է որ տարուայ մէջս ծնունդ կաննի տա-

սըն և մէկ,

Ամսէ ամիս կ'ծնանի, մինը արու մինը էգ.

Այն Բ'նչն է, որ ոսկորը սև, միսն սպիտակ կաշին
չէկ,

Չատ ժամանակ կաշին կուտայ մերկ մտովը կ'մնայ:

Սմբատ

Աղաւնին է տարուայ մէջը ծնունդ կառնէ տասն և
մէկ,

Ամսէ ամիս կ'ծնանի, մինը արու, մինը էգ.

Այն փշատն է ոսկորը սև, միսը սիպտակ, կաշին շէկ,
Չատ ժամանակ կաշին կուտայ, մերկ մտովը կ'մնայ:

Մաղաքը

Այն Բ'նչն է, որ անունը կայ, ինքը չ'կայ աննիւթ է,
Չայնը գալիս կ'ճանաչուի, անտես, աներևոյթ է,
Ես քեզ վարպետ կանուանեմ, հարցերս գտնիս դու
թէ.

Մաղաքը այս փորձերովը, կուզէ շնորհդ իմանայ:

Սմբատը

Այն երգն է, որ անունը կայ ինքը չ'կայ աննիւթ է,
Չայնը գալիս կ'ճանաչուի, անտես աներևոյթ է,
Պատրաստ կաց, որայսուհետև քո օրդ սև ու մուրթ է,
Սմբատը ձեռքիդ քնարը անշուշտ առնել կ'ջանայ:

Այս հրդը աւարտելուց յետոյ, Մաղաքը ասաւ
"ուրեմն դու ինձ հետ հակառակուել կուզես: Սմբա-
տը ասաւ, եթէ ձեռքիցս գայ, իրաւունքով սազդ
պիտի խլեմ, ոչ թէ միայն հակառակուեմ, դրա հա-
մար Մաղաքը կարմրելով վեր առաւ սազը և մի

Թաջնիւի հղանակաւ ասաւ այսպէս.

Մաղաքն

Ս դղչրէկայրն Աստուած, հողէն մարդ շինեց
Քանի տարեկանի շափով կատարեց.

Այն ժամ որ Ադամին դրախտէն հանեց,
Հանդերձ շունէր, նա ինչով կառավարեց:

Սմբատն

Սկզբէն Հայր Աստուած, հողէն մարդ շինեց՝
Եւեսուն տարեկանի շափով կատարեց,

Այն ժամ որ Աւամին դրախտէն հանեց,

1) Աստուած, մաշկեղենից կտրեց հագցրեց:

Մաղաքն

Այն ինչ այգէգործ էր, այգուց չ'կերաւ,

Ո՞վ հրամայեց արեւ, լուսին դադարաւ,

Այն ով էր որ արեգակը դարձաւ

Ի՞նչ պատճառով այն նշան ցոյց տուեց:

Սմբատն

2) Ենովքն էր այգեգործ այգուց չ'կերաւ,

3) Յեսուսի խօսքով արեւ լուսին դադարաւ,

4) Յեսային էր արեգակը դարձաւ

Եղեկիայի համար նշան ցոյց տուեց:

Մաղաքն

Մաղաքն հմ քեղանից կուզեմ մեկնութիւն.

Այն ով էր մօտեցաւ իւրան մայրերուն,

1) Մննդ. 3 դ. 20 համար 2) Ժող, 30 երես. 3) Յես. 10 գ. 21, 14 համար 4) Թաղ. 20 գ. 8, 10, 11 հ.

Ո՞ր ազգի խօսուացքն է Ադամայ լեզուն,
Այն ո՞վ էր որ ծովը արօրով վարեց:

Սմբատն

Սմբատն եմ տրտնջուն կ'տամ մեկնութիւն,

- 1) Արիսողոմ լկեց իրան մայրերուն,
 - 2) Հայերէն խօսուացքն էր ադամայ լեզուն,
- Այն Արիստակէսն էր որ ծովը վարեց:

Այս հարցերի պատասխանը որ տուեց Սմբատը, Մարգիս աղէն ասաւ, վարպետ, հաւանեցանք տուած պատասխաններին, թէ ոչ: Մաղաքը քթի տակով ասաւ, ինչու չէ, և այնտեղ գտնուողները ասին, կեցցէ, շատ տեղով պատասխանեց, և Մարգիս աղէն ասաւ, ներողութիւն հիմայ հերթը Սմբատինն է. թող նա ասէ և դու Մաղաք պատասխանիր: Մաղաքը ահամայ կերպով միաս չունի ասաւ, Սմբատը վեր առաւ նուագարանը և մի աջամի թաջնիսի նուագելով ասաւ.

Սմբատն

Ով իմաստուն հանճար, ըջ վարպետ Մաղաք,
Պատրաստ կանց հարցմունքիս պատասխանը տու
Ո՞ւմ մազը սիպտակից ամենից առաջ,
Քննէ գրքերը ինձ էլ հասկացու:

Մաղաքն

Այդպիսի հարցմունքից ես լաւ եմ տեղեակ,
Զուր տեղը գրեանքներից վէճ մի քանա դու.

1) Բ. Թգ. 16 գլ. 20, 22 համար 2) Ճանապարհ հերկ. 366 երես

Արրահամ սպիտակից ամենից առաջ,
Այդ տղայոց հարց է, բան գիտես հարցու:

ՄՄՁատն

Դաւիթը որ եկաւ Սաւուղին փեսայ,
Ի՞նչ բան ընծայ տուեց թէ գիտես ասա.
Այն ի՞նչ կենդանի է, որ այժմուս էլ կայ,
1) Իսկ նա ստեղծուած է առանց Աստծու:

Այս տունը որ ասաւ, Մաղաքը չ'կարողացաւ
չուտով պատասխան գտնել, սազը վայր դրաւ և
սկսեց ծխախոտ ծխել, և մտածել թէ արդեօք
ի՞նչ կայ առանց Աստծոյ ստեղծուած: Սարգիս ա-
ղէն տեսաւ որ Մաղաքն էլ չի պատասխանում, հար-
ցրաւ, վարպետ, ինչո՞ւ չես պատասխանում: Մաղա-
քը ասաւ, ներողութիւն պարոն, որովհետև բաւա-
կան ժամանակ է, որ շեմ ծխել, մի քիչ ծխենք,
թող նա միւս տունն էլ ասէ և ես երկուսին մէ-
կէն կ'պատասխանեմ: Մտաւորը միւս տունն էլ ա-
սաւ այսպէս.

ՄՄՁատն

Մտրատնն եմ խորամիտ, հանճարեղ գիտուն,
Հաւրերն ո՞ւմ միս բերին առտու իրիկուն.

Այլ պատասխան չունիս փակուեց քո լեզուն,
Գամենն ո՞ւմ հս ասել, մեղայ Աստուծու:

Մտրատը իւր հարցը աւարտելուց յետոյ Սար-
գիս աղէն ասաւ, վարպետ, բաւական է, ծխախոտ

1) Այս կենդանու մասին Յայնմաւուրքի մէջ Փետր. 29 տեսէք:

ծխացնես, թէ կարող ես, պատասխանիր, եթէ ոչ,
 աշուղական պայմաններով այս մարդը ձեր սագերը
 ու այդ ձեր հաւաքած փողը կ'իսլէ: Մաղաքն ասաւ,
 պ. Մատաթեանց, եթէ այս գիշեր ինձ ժամանակ
 տար, վաղը անսպառնառ ես կ'պատասխանեմ: Մա-
 տաթեանն ասաւ, եթէ այդպէս է, պէտք է ձեր
 նուագարանները և այդ փողերը մեզ մօտ իբրև
 գրաւ մնան. դուք գնացէք: Մաղաքն ասաւ, թող
 այդպէս լինի. իրանք գնացին և սրճարանում եղած
 ժողովուրդն էլ ցրուեց. իսկ Սմբատը մնաց այն-
 տեղ, որովհետև Սարգիս աղէն չ'թոյեց ուրիշ տեղ
 գնալու: Մաղաքը գնաց տուն և այդ հարցի համար
 շատ մտածեց, և տեսաւ, որ չի կարողանում գտնի,
 ասաւ, ամենից լաւ է, որ ես այս քաղաքից փախ-
 շեմ և հեռանամ. մինչ նրա այստեղից գնալը, և
 այն գիշերը ելաւ և քաղաքից փախաւ առաւօտեան.
 քաղաքի ժողովուրդը հաւաքուեցան սրճարանը, որ
 տեսնին թէ կարողանում է Մաղաքը նորեկ աշուղի
 պատասխանը տայ, նրանք չ'գիտէին թէ Մաղաքը
 փախել է, երբոր տեսան Մաղաքը ուշանում է,
 մարդ ուղարկեցին նորա յետևից, բայց Մաղաքը
 տանը չ'գտնուելով, նորա կինը ասաւ, որ նա այս
 գիշեր տուն չի եկել. գնացողները թէև քաղաքում
 մի քանի տեղ փնտրեցին, բայց իզուր և վերջը ի-
 մացան որ նա փախել է. եկան և յայտնեցին որ նա
 փախել է: Մատաթեանը առաւ, Սմբատ, իրաւուն-
 քով այդ փողերը և սագերը բռնն են, ինչ ուզում

ևս արև, միայն կ'խնդրեմ, որ իմ սրճարանից չ'հեռանաս, որսովհետև այստեղի ծաղիկը Մաղաքն էր, երբ նա չ'կայ, դու եղիբ: Սմբատը մտածեց և առաւ, լաւ, մի բանի օր այստեղ կմնամ և ինձ մի բիշ ճանապարհածախս հաւաքելով կ'գնամ իմ գործին: Այս քաղաքի միւս երգիչները Մաղաքի փախչելը որ լսեցին, թանգազին ընծաներ հաւաքելով եկան Սմբատին տեսութեան, որովհետև նրանք էլ Մաղաքից դժգոհ էին, Սմբատն էլ առաւ սաղերը ընծայեց նրանց, իսկ փողերը ինքը վիր առաւ: Այնուհետև այդ սրճարանի երգիչը միայն Սմբատն էր: Քայց Սմբատը Ջէյթունը չէր մոռնում. ազատ ժամերում քաղաքից դուրս կեղնէր դէպի Ջէյթուն գնացող ճանապարհների մասին հարց ու փորձ կաներ, ծանօթանալու համար:

Հիմայ թող Սմբատը այստեղ մնայ, իսկ մենք ընթերցողին տաններ Սմբատի ծնողաց մօտ Արմոււիւր քաղաքը: Սմբատի ծնողները երբ նրա վերջին մնաք բարեաւր լսեցին, համարեայ չէին հաւատում որ նա հաստատ պիտի գնայ. դրա համար, թոյլ կերպով թողին նրան տանից հեռանալու, բայց երբ երրորդ և չորրորդ օրը վրայ հասաւ և Սմբատը արդէն հեռացել էր, նորա հայրը՝ Սաղաթէլը կընոջը Մարգարտին մնաս բարով ասաւ, ես մինչև Սմբատին չ'գտնեմ, էլ ինձ տուն դալ չ'կայ, ասաւ և իւր ձին հեծնելով, ընկաւ ճանապարհ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, ամեն մի անցորդից և պա-

տահողից հարցնում էր, բայց ոչ որ շէր իմանում նորա սրգու տեղը: Օրուայ մէկում Սաղաթէլը ճանապարհին տեսաւ որ առաջից մի կարաւան է գալիս, մտրումը դրեց, որ նրանցից հարցնէ, որանք ասաւ, ման հկող մարդիկ են, ամեն տեղից տեղեկութիւններ կունենան, տեսներ իմ Սմբատի մասին էլ մի բան գիտէն թէ ոչ: Երբ որ մօտեցան, Սաղաթէլը, յարգելով նրանց պետին, բարեկց խոնարհարար և ինդրեց որ կարաւանը կանգնեցնին նրանք այնպէս էլ արին: Սաղաթէլն ասաւ, տէր վաճառական, իմ ցաւը շատ խիստ է. եթէ բերանացի ասեմ գուցէ շ'հասկացուի, թողէր որ երգելով հասկացնեմ, և իր դաշտինը սազի տեղ համարելով. սկսեց հարցնել այսպէս.

Սաղաթէլն

Վաճառական բեզնից մի բան հարցանեմ,
 Պարզե՛ք մէկ բարի յուր վաճառական.
 Որդիս կորցրել եմ, հարց ու փորձ կանեմ.
 Սրտիս մէջ վառվում է հուր, վաճառական:

Վաճառականը որ լսեց դրա երգելը ասաւ,
 Եպատիր հերթով ասենք և ասաւ.

Վաճառականն

Այդ քնչպէս կորուստ է սիրելի եղբայր,
 Որդուդ անունն ինձի տուր իմ սիրելի.
 Պարտս լինի շուռ զամ ընդհանուր աշխարհ
 Գտնեմ, թէ կուզ լինի ուր իմ սիրելի:

Սաղաթէլն

Որդիս մէկ ու ճար է անունը Սմբատ,
Տասնութը տարեկան մի եբիտասարդ
Միջքին ոսկէ դօտի, ծոցին կայ սահաթ,
Երգելով կածէ սանթուր, վաճառական:

Վաճառականն

Սմբատին հս տեսայ Բողէշ քաղաքում
Սարգսի սրճարանը սանթուրն առաջին
Երգի միջով յաղթեց երգիչ Մալաբին
Չատերին էլ եկաւ գուր, իմ սիրելի:

Սաղաթէլն

Սաղաթէլն եմ կուզեմ Սմբատիս համար,
Ուրեմն իմ որդին տեսած ես եղբայր,
Գնալու եմ բայց չեմ գիտէ ճանապարհ,
Չուռ կուզամ այսպէս տխուր, վաճառական:

Վաճառականն

Վաճառական Կարապետն եմ Նազարով,
Առուտուրս միշտ է հազար-հազարով,
Ճանապարհը ցոյց տամ և գրեմ գրով.
Մի պտտուի անմեղ զուր իմ սիրելի:

Երգեցողութիւնը վերջացնելուց յետոյ, վաճառականը վեր առաւ թուղթ ու գրիչ և ճանապարհի գծագրութիւնը նկարելով ամեն նշաններով ցոյց տալու համար գրեց և յանձնեց Սաղաթէլին, և ասաւ, կ'զնաս Բողէշ և կ'հարցնես Սարգիս Մատթեանի սրճարանը. ճիշտ այնտեղ կ'փնտրես Սըմ-

բատին. Սաղաթէլը առաւ զիրը և շնորհակալ եղաւ վաճառականից ու ընկաւ ճանապարհ: Գնաց հասաւ Բաղէշ և հարցնելով զտաւ Սարգիս Մատաթեանի սրճարանը, իջտւ ձիուց. նրան տեղաւորեց ախոռուժ և ինքը մտաւ սրճարանը մի բանի սուրճ խմեց և տեսաւ որ Սմբատը այնտեղ է, նորան ոչինչ չ'ասաւ: Սմբատն էլ նրան ծանօթութիւն չըյայտնեց նորա համար, որ առանձին կերպով նրան համոզէ և յետ դարձնի: Այդպէս մնացին մինչև մուլթն ընկաւ, մարդիկ հեռացան և այդտեղ մնացին միայն Սմբատն, իւր հայրը և սրճարանում ծառայողը: Ծառան Սաղաթէլին ասաւ, եղբայր, դուլլ այստեղ պիտի մնաս թէ ուրիշ տեղ ունիս գնալու: Սաղաթէլն ասաւ, ուրիշ տեղ չտ'իմ, եթէ կ'յօժարանանը այստեղ կ'մնամ: Սմբատը առաւ զա, մեր երկրացի է, թոյլ տուր, թող այստեղ ընի: վերջապէս հայր ու որդի միասին անկողին մտան: Սաղաթէլն ասաւ, որդի, այս ինչ բան բռնեցիր, դու մեզի ասացիր ես սիրահարւած եմ և Զէյթուն պիտի գնամ սիրելոյս տեսնելու, ինչո՞ւ եկար այստեղ մնացիր և ինձ շտրշարելով այստեղ բերիր: Սմբատը հօրը միամտցնելու համար ասաւ, ների՞ր հայրիկ, ես սխալուեցայ, որ ձեզ չ'խեցի, հիմայ մի բիշ հանգիստ եղի՞ր ընիր, առաւօտը կելնենք և միասին կ'գնանք մեր տուն: Սաղաթէլը համոզուեցաւ այդ խօսքով և ընաւ: Առաւօտը երբ Սարգիս Մատաթեանը եկաւ սրճարանը, Սմբատը

իրան թոյլտուութեան համար Մատաթեանից խընդ-
րում է երգելով ու ասում այսպէս.

Սմբատն

Խնդրում եմ քեզանից ով բարի իշխան,
Որ թոյլ տաս ես գնամ իմ հայրենիքս.
Ցաւեր ունիմ սաստիկ, անթիւ զանազան,
Խնդրեմ թոյլ տաս, գնամ մի հայրենիքս:

Այս գիշեր երազումս տեսայ հայրիկիս,
Լալում մորմորում էր անուշ մայրիկս,
Արտասունք թափելով աչիւ թոյրիկիս
Խնդրեմ թոյլ տաս գնամ իմ հայրենիքս:

Սմբատն եմ ես մի նորահաս մին ու ճար,
Իրաւ այսօր զլիսիս մթնեւ է աշխարհ,
Հայր ու մայրս մորմորում են ինձ համար,
Խնդրեմ թոյլ տաս գնամ իմ հայրենիքս:

Մատաթեանը որ լսեց այս երգը, ասաւ, որ
այդպէս է Սմբատ, ես չեմ արգելի քեզ, գնա Աստ-
ուած քեզ հետ: Սմբատ Մատաթեանից շնորհակալ
եղաւ և մնաս բարով ասելով հօր հետ միասին
գուրս ելան սրճարանից, ձին բերել տուին և եր-
կուսն էլ հեծան ու ընկան ճանապարհ. մի քիչ որ
քաղաքից հեռացան, ճանապարհը երկուսի բաժան-
ուեց, Սմբատը թռաւ իջաւ ձիուց և միւս ճանա-
պարհով գնալու եղաւ, հայրն էլ իջաւ ձիուց և
փաթաթուեցաւ նրա վզով, համբուրում էր և լաց
լինում: Սմբատն ասաւ, մի լաց լինիր, հարիկ ջան,

ես երբէք քիզ չեմ մոռանայ. բայց մինչև իմ սիրելուոյս չգտնեմ, անկարելի է որ ես տուն դառնամ, աղօթիր ինձ համար, որ ես աջող ընթացք ունենամ, սիրելուոյս առնեմ և յետ դառնամ. իսկ հայրը դարձեալ անհամբեր լաց էր լինում և խնդրում մի գնար, իմ մէկ ու ճար որեղակ:

Մտքատր տեսաւ, որ հայրը շատ է լալիս և չէ թողնում զնալու՝ ասաւ, հայրիկ, ինձ բաց թող, մի երկու խօսք եկաւ միտքս երգելու, ասեմ, դու լսիր. հայրն ասաւ, ոչ որդի, ինչ որ ասես, զուր է. Մտքատըն ասաւ, տես հայրիկ սանթուրն ինչ է ասում և նուագեց դուրէյիթ եղանակով այս երգը.

Ո Ր Ղ Ի Ն

Մի լար այգսլէս անմխիթար

Մի լար հայրիկ, մի լար մի լար,

Օրհնութիւնով քից ճանապարհ

Մի լար հայրիկ, մի լար, մի լար:

Հայրն ասաւ լսիր որդեակ ես էլ ասեմ.

Հ ա յ Ր Ն

Որդի թէ որ ինձ կ'սիրես,

Մի գնա որդիս մի գնա,

Իրաւ իմ սիրտս կաւորես,

Մի գնա հոգիս մի գնա.

Ո Ր Ղ Ի Ն

Սուգ մի անիր, անմեղ ու զուր,

Ինձ գնալու հրաման տուր,

Գնում եմ սիրեկանիս հիւր,
Մի լար հայրիկ, մի լար, մի լար:

Հ ա յ ը ն

Ի՞նչպէս հրաման տամ գնաս,
Գնացիր այնտեղ կ'մնաս
Գուցէ պատահի մէկ վնաս
Մի գնա կեանքս, մի գնա:

Ո ը ղ ի ն

Եթէ որ ես այնտեղ մնամ,
Իմ ստեղծողս ուրանամ,
Կերպ-կերպ պատիժներ ստանամ.
Մի լար հայրիկ, մի լար, մի լար:

Հ ա յ ը ն

Սյդ երդմանդ հաւատացի,
Բաւէ որքան, որ ես լացի,
Քանիմ օր ինձ մօտ մնացիր
Մի գնա յոյսս, մի գնա:

Ո ը ղ ի ն

Հայր, Սմբատից մի նեղենար,
Գնալու եմ չ'կայ հնար
Բայց միայն ձեզ չեմ մոռանար
Մի լար հայրիկ մի լար:

Հ ա յ ը ն

Սաղաթէյն եմ հասակս առած,
Մի թող այսպէս ճիտս ծռած,

Մինչև գաս, կ մնամ մեռած

Մի դեար գառս մի գնար:

Երգեցողութիւնը վերջացնելուց յետոյ Սմբատն ասաւ, հայրիկ, օրհնիր ինձ, որ ես անխնաս իմ ճանապարհը շարունակեմ և իմ նպատակին հասնիմ: Սաղաթէլը տեսաւ որ էլ հնար չ'կայ, շի կարողանում օրդուն յետ կանգնացրել, ասաւ, որովհետև գու խոստացար որ ինձ չ'մոռանաս, Աստուած քեզ օրհնէ և պահպանէ, որ դու նպատակիդ հասնիս և բարով յեդ դառնաս: Սմբատն համբուրեց հօր ձեռքը և հայրը նորա ճակատն և լալով բաժանեցան: Սաղաթէլը նստաւ իւր ձին և դարձաւ դէպի իւր քաղաքը, իսկ Սմբատն ուղևորուեց դէպի Ձէյթուն: Սմբատն իր յոյսն Աստծոյ վրա դրած, շարշարուելով հասաւ իր ցանկալի Ձէյթուն քաղաքը: Պատահեց մի մարդու և իրան համար մի բնակավայր ուզեց գտնել հարցնելով: Այդ մարդն ասաւ, մի բիշ առաջ որ երթաս, կ'պատահիս մի աղբիւրի և այդ աղբիւրի մօտ կայ մի սրճարան, որ պատկանում է Մուշեղ Բագրատեանին, այս քաղաքում ամենից երևելի և մարդաշատ սրճարանն այն է, այնտեղ կարող ես երգելով օգտուել: Այնտեղ կայ նաև մի երգիչ օրիորդ նոյեմզար անունով, որն այդ սրճարանի տէր Մուշեղ Բագրատեանի աղջիկ է և Յովսէփ իշխանի հարսանացուն, թէ այս քաղաքում և թէ նորա սահմաններում նրա հետ երպոց և նրա հարցերին պատասխանող չ'կան: Յովսէփ Մելիքեա-

նը այս քաղաքի կուսակալի տեղապարհն է, նոյեմ-
 քարն այս հինգ տարի է որ նշանուած է այդ Յով-
 սէփի որդու հետ, միայն չի պսակուում, որովհետև,
 նա ուխտել է որ երբ իրան մի որևէ երգիչ յազ-
 թեց, այնուհետև նոր պիտի պսակուի: Եթէ շնորհք
 ունիս, այսպէս մի բան կարողարաս անել, բաւա-
 կանին օգուտ կ'ստանաս պ. Յովսէփից և նա այնու-
 հետև կ'ողտակէ իւր որդին և հարսանիք կանէ: Սըմ-
 քատն ասաւ, այդ իմ գործը չէ, ես մի անծանօթ
 մարդ եմ, ինձ ինչ պէտք է ուրիշների հետ հակա-
 ռակուել: Եւ այն մարդու մօտից հեռանալով զնաց
 ուղիղ այդ ցոյց տուած սրճարանը, ներս մտնելով
 տեսաւ որ մի սիրուն օրիորդ նստած է վերի կող-
 մը: Մտքառը նստեց մի քիչ հանգստացաւ, մի եր-
 կու սուրճ խեղ: Նոյեմբար տեղից ելաւ, նւագա-
 բանը մի լաւ լարեց և սկսեց նւագել կանգնած ու
 խաղալ և ուղիղ որ շատ հրաշալի ձայն և նուա-
 գել գիտէր, մի երկու հղանակ կրկնելուց յետոյ,
 Յովսէփ Մելիքեանը տեսաւ Մտքառին հիացած նրա
 գեղեցկութեամբ և նրա մօտի սանթուրն ես տես-
 նելով մտքումն ասաւ, սա մի շնորհալի վարպետ
 է երևում. եթէ իմ հարսին յաղթելու լինի, կարող
 է սա լինել, մտածեց և հացրաւ, այդ ինչ գործիք
 է մօտինդ եղբայր. սանթուր է պարոն, պատաս-
 խանեց Մտքառը, ուրեմն նուագել և երգել կարող
 ես, չէ այն պարոն, մի քիչ գիտեմ: Ուրեմն ես ձեզ
 մէ բան էլ կասեմ, եթէ կարողացար այս աղջկան

յայլթել, այն ժամանակ ինչ կամք ու նպատակ ունիս, անշուշտ ես կ'կատարեմ: Մերառն ասաւ, կըփորձուինք, եթէ Լ:տուած մի ըիչ շնորհք տուել է, կ'տեսնենք: Յովսէփը դառնալով նոյնմզարին ասաւ պատրաստ կաց, որ այս մարդի հետ պիտի փորձուիր: Նոյնմզարն ասաւ, ես պատրաստ եմ. ու սկսեց խաղալով նուագել դիւանիի եղանակով, այսպէս

Կոյնմզարն

Թէ կարող ես համարձակուի՝ արի առաջ պատանի Տեսնիմ թէ ինչ մարով մտար դու այս բաղաք պատանի,

Ուրեմն լաւ զգուշացիր, դու բեզն ու քեզ պաշտպանէ,

Թէ չէ սրտումդ կ'մխեմ հետուի նիզակ պատանի.

Սմբաւն

Համբերէ որ հերթն իմն է ո՛վ իմ տեղեակ նազանի, Քեզ նմանի հետ խօսալու ունիմ փափագ նազանի, Չուտափոյթ ինձ մի անարդիր խօսակցութեան միջոց տուր:

Ես մի տգէտ ու անկիրթ եմ, դու հեղինակ նազանի:

Շոյնմզարն

Երբէք ոչ որ չի անարգի եթէ իրան գիտենայ, Իմացիր որ կ'հայածուի ով ինձ դէմ վտահանայ, Մուկն ինչ է որ կարողանայ, կատուի ճանկին դիմանայ

Մկի համար մահ է, միայն կատուին կտտակ, պա-
տըանի:

Սմբատն

Այս մասին ես աշխարհի մէջ շատ ու շատ տեղ սը-
տըտայ
Մի երգիչ կամ մի հեղինակ ինձի յողթող չ'գտաւ,
Մի կարծիր թէ չ'գիտութեան ես այս քաղաք ներս
մտայ
Բերանդ ուզիդ բաց արան լեզուդ շիտակ, նազանի,

Ծոյնմ'զար

Հսէ ո՛վ դու անմիտ յիմար. ես քեզ ասեմ իրաւը
Որսի նման ճանկըս ընկար իմացիր գլխիդ ցաւը
եթէ որ յսած լինէիր նոյեմզարի համրաւը,
Մէկէն ի մէկ շէիր լինի դու հակառակ, պատանի:

Սմբատն

Բարի համրաւդ լսելով եկել եմ քեզ տեսութիւն
Կամ սանթուրս քեզ ընծայեմ կամ բու սազդ ինձի
դուն.
Բայց ասեմ իմ նպատակս յայտնի լինի ամենուն,
Սմբատն եմ ես քեզ որսալ ունիմ նպատակ, նազանի:
Այս երգից յետոյ նոյեմզարը նուագեց թաջ-
նիս ու կրկին երգեց մի դարա հէջջալ:

Ծոյնմ'զարն

Իմացիր տես ինչ եմ ասում ան տղան,
Թէ կարաս պատասխան տիուն, ո, հիւն ըրէ,

Թէ խելք ունիս վաղսվ 1) վինըդ տուր գնայ
Ընկար փոսը ինչպէս կէն ո, հիւն, բրէ:

Սմբատն

Արդէն պատրասուած եմ, խօսիր այ աղջիկ,
Բայց ինձ էլ մի փոքր լիուն, ո, հիւն բրէ,
Վինըս քեզ տվոյ չեմ. թոյ լսեմ մարդիք,
Ինչ ես դառել այդպէս մէն, ո՛ հիւն բրէ:

Նոյեմզարն

Որեմն դու չես գիտեր թէ ես ոյ եմ,
Ամբողջ աշխարհ գիտէ, գլուխս ինչ գովեմ,
Ես մի խոր ու անյատակ ովկիանոս ծով եմ,
Քեզ կ'սեպդեմ անմեղ զա ս, հիւն, բրէ:

Սմբատը

Դու թէ ովկանիոս եո, ես մի նաւապար,
Հանապազ ծովերում շուռ կուգամ ճարտար,
Խոր տեղից դուրս գալու կ'գտնեմ հնար,
Զկայ ինձ վնասոյ ջէ, ո, հիւն, բրէ:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ արգէն քեզ կ'տամ իմաց
Թշնամիտ ճանաչէ, աչքերդ լեն բաց.
Մտածէ պաշպանէ կեանքդ զգուշ կաց.
Մրտումդ կ'սղմեմ սէ, ո, հիւն, բրէ:

Սմբատն

Սմբատն եմ հակառակ քեզ նման չարին,
Գանշում եմ ս. Սարգիս քաջ զօղավարին

1) Վին՝ ստեթուր:

Իմացիր որ քեզ պէս հարիւր հազարին
Ես սպանեմ առանց թոյ, ս, հիւն, ըրէ:

Այս երգը աւարտելուց յետոյ Յովսէփ իշխանը
մէջ եկաւ և ասաւ, Նոյեմզար, բաւական է ինչ որ
դու ասիր, հիմայ էլ հերթը Սմբատինն է. բայց
Սմբատն ասաւ, ոչ պարոն, թող այսօր Նոյեմզարն
ասի, և վաղը ես կ'ասեմ. Յովսէփն ասաւ, դու գի-
տես ես քեզ համար եմ ասում, որ չ'ասես թէ ինձ
պաշտպանող չ'կայ. Ընորհակալ եմ պարոն, դուք
ողջ լինիք. Նոյեմզարը մտածեց որ հասարակ խօս-
քերով չի կարողանում Սմբատին կապել, «կսեց ս.
գրքերից և զանազան իմաստութիւններից հարցեր
առաջարկել. հիմայ տեսնէք Նոյեմզարն ինչ կ'հար-
ցնէ և Սմբատը ինչ կ'պատասխանէ:

Նոյեմզարն

Լսէ քեզ եմ ասում ով երիտասարդ,
Մտածէ հարցերիս պատասխան տաս,
Երբէք ինձ յաղթող շեմ տեսած մի մարդ,
Գիտեմ վերջը դու էլ սանուրդ կուտաս:

Սմբատը

Չատ մի բամահարի ով աղնիւ աղջիկ,
Իցէ թէ յաղթուիս, ինձ խոնարահանաս,
Յաղթող կ'գտնուիս հեզ խոնարհ մարդիկ,
Բայց դու հպարտ ու շատ վերիից կ'գաս:

Նոյեմզարն

Այն ինչ դուռ էր առանց փակելի մնաց փակ,

Ո՛վ բացեց այն դուռը, ներս մտաւ շիտակ,
Այն ով է միշտ տիրոջ կամքին հակառակ,
Ինչպէս որ դու աժմս հակառակ կառ:

Սմբատն

Այն տաճարի դուռն էր, որ մնում էր փակ,
Յիսուս տէրն էր բացեց ներս մտաւ շիտակ,
Մատանէն էր Տիրոջ կամքին հակառակ

1) Հպարտութեամբ երկնուց թափաւ, երեք դաս

Նոյեմզարն

Այն ով էր որ բարին զարկեց, բխաց ջուր,
Այն ով էր հազար մարդ մեռցուց առանց սուր,
Այն ով էր որ իրան կնոջն առաւ ըուր,,
Իբրև թէ մի ոքից չբաշէ վնաս:

Սմբատն

- 2) Մոլոսէս մարգարէն էր բարից հանեց ջուր
 - 3) Մամսոնն էր հազար մարդ մեռցուց առանց սուր
 - 4) Աբրահամն էր իրան կնոջն առաւ ըուր,
- Այդպիսով էլ մնաց ազատ անվնաս:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ երգիչապետ հաստատուած,
Ի՞նչ բանի համար էր զղջացաւ Շտուած,
Այն ով էր երկնքից կրակ թափեց ցած,
Այրեց մարդիկ յիսուն յիսուն և ոչ տաս:

1) Ժող. 134 երես: 2) Նլից 17 գ: 3) Դատ 15 գ. 18 համար

4) Մնդ. 20 1 գ. համար:

Սմբատն

Սմբատն եմ ս. Երրորդութեան յօռացած

1) Զրհնդեզի համար զղջացաւ Աստուած.

2) Եզիան էր երկնից կրակ թափեց ցած

Արեց մարդիկ յիսուն, յիսուն և ոչ տաս:

Այս հարցերից յետոյ, Յովսէփ իշխանը ոտքի կանգնեց և ասաւ. կեցցես վարպետ Սմբատ, կեցցես. և Նոյեմզարին ասաւ. ինչպէս է Նոյեմզար նոր վարպետը, ասաւ վնաս շունի, բայց վերջը նայեցէք: Նոյեմզարը նորից սկսեց նուագել և երգել այսպէս:

Նոյեմզարն

Այժմ բեզ հետ խօսենք երեք երեքով,

Երկնքումը վկայ երեքը ինչ է,

Երեք էլ կան երկրումը նոյն ձևով,

Փրկչական աւանդած երեքը ինչ է:

Սմբատն

Սյն երեք վկան որ երկնքումը կան.

3) Հայրը, որդին, հոգին երեքը այն է,

Երեք էլ կան երկրումը նոյն նման,

Զուրը, տրին հոգին, երեքը այն է:

Նոյեմզարն

Ո՛վ գրեց ցօղի տակ փորձելով բուրգը,

Ով ցրուեց Ագիթոփէլի խորհուրդը,

1) Մենք 9 10 համար: 2) Դ. Բարդ 1 գլ. 9 համար. 3) Յով
աննու. ա. Բղթ. 5 գլ. 7 համար:

Դաւիթը որ թուեց իւր ժողովուրդը,
Երեք բան յայտնուեց, երեքը ինչ է:

Սմբատն

1) Գեղէօն ցօղի տակ դրեց այն բուրդը,
Քուսինն ցրուեց Աքիթոփէլի խորհուրդը:

2) Դաւիթը որ թուեց իր ժողովուրդը,
Սովը, սուրը, մահր երեքը այն է:

Նոյեմզարն

Այն սով էր հաւաքեց մեծամեծք ընտիր,
Աստուած իրան մեղքի դէմ տուեց վճիւ,
Յանկարծ պատի վրայ գրուեց երեք գիր
Երբէք մարդ շիմացաւ երեքը ինչ էր:

Սմբատն

3) Բաղդասար հաւաքեց մարդկանց ընտիրը,
Այն գրերն էր իրան մեղաց վճիւրը,

4) Իսկ Դանիէլ կարգաց այն երեք գիրը,
Մանէ, թեկեց, փարէս, երեքը այն է:

Նոյեմզարն

Նոյեմզարն եմ մի օրիօրդ աննւման,
Դու ինձի դէմ մի ձեռնայ գիտնական,
Աստուած մարդուց պահանջում է երեք բան,
Գարնդ ես իմանայ, երեքը ինչ է:

Սմբատն

Սմբատն եմ Աստուած և իմ օգնականը,

1) Դատ 6 դ. 36-38 համար: 2) Բ. Թագ. 17 դ. 15 համարը
և Բ. Թագ. 24 դ. 10, 18, 20 և 25 համար: 3) Դան. 5 դ. 25: 4) Դատ-
եզ. 1, 2, 4, 5 համար:

Կուտամ քո հարցերիդ նուրբ պատասխանը
 Սիրելի քո ասած այդ երեք բանը,
 1) Հաւատ, յոյսը, սէրը հրեքը այն է:

Այս հարցմունքների ժամանակ բաւական փող
 հաւարեցին, որ ով որ յազթէ, փողը նրան տան,
 ու նոյնիմզարին ասացին. էլ թան ունիս հարցնելու
 թէ վերջ պիտի տաս, ասաւ ինչ վերջ տալ, ինչ
 բան, այս օր կամ ես իմ սազը նրան պիտի տամ,
 կամ նա իր սանթուրը ինձ, ու նորից նուագելով
 դուրէիթ հարցուց.

Նոյնմզարն

Դարձեալ նորէն քեզ հարցանեմ
 Սողոմոն տաճարն ո՞ւր շինեց,
 Քանի սիկզ արծաթ տուեց, (1 սիկզը 2 դրամ է)
 Սկզբից այն տեղն ո՞վ գնեց:

Սմբատն

2) Սողոմոն տիրոջ տաճարը
 Ուռնէի կալի մէջ շինեց,
 Յիսուսն սկզի արծաթ տուեց,
 Այն տեղը Դաւիթը գնեց:

Նոյնմզարն

Այն ո՞վ էր որ միշտ անդադար,
 Հալածում էր այրն արդար,
 Սաւուղ թագաւորի համար,
 Սամուէլին ո՞վ վեր հանեց:

1) Ա. Կորն. 13 գլ. 13 համար: 2) Բ. Թագ 24 գ. 24 համար:
 3) Բ. Մնոյ 3 գ 1 համար:

Սմբատն

Այն Սաւուղն էր միշտ անդադար,
 1) Հալածում էր Դաւիթն արդար,
 Սամուէլ Սաւուղի համար
 Վհուկ կնիկը վեր հանեց:

Ծոյեմզարն

Ո՛վ բացեց բերանը իշուն,
 Ով խօսեցաւ հետ իւր տիրուն,
 Ազամ իւր անդրանիկ որդուն,
 Ի՞նչ մտքով Գայեն անուանեց:

Սմբատն

2) Աստուած իշու լեզուն բացաւ,
 Իսկ Բաղամու հետ խօսեցաւ
 Ազամ ծնաւ մարդ ստացաւ
 (Եղ մտքով 3) Գայեն անուանեց:

Ծոյեմզարն

Տէր մեր Հայր երկնաւորը
 Ազամ ստեղծեց իր օրը,
 Գայեն ոտեց իր եզրօրը,
 Արեւին ինչով սպանեց:

Սմբատն

Տէր մեր Հայր երկնաւորը
 Ազամն ստեղծեց ուրբաթ օրը,

1) Ա. Թգ. 28 գ. 10 համար 2) Թւոց 28 գլ 22 համար:

3) Գայեն ստացուած ասել է:

Կայնն իւր Արեյ եկրօրը

1) Սուր զիզիկ բարով սպանեց:

Նոյեմզարն

Նոյեմզար է իմ անունը,
Տուր խօսքերիս մեկնութիւնը,
Ո՛վ բռնեց բռով արիւնը,
Ք՛վ զէպի երկինքը ցանեց:

Սմբատն

Սմբատ է իսկ իմ անունը
Տամ խօսքերիդ մեկնութիւնը
2) Չար Յուլիանոս իւր արիւնչ
Բռնով վեր երկինքը ցանեց:

Նոյեմզարի բոլոր հարցերին Սմբատը մի առմի պատասխանելուց յետոյ, Յովսէփ իշխանը վերջ տալ տուեց երգեցողութեան և ժողովուրդը սրճարանից ցրուելուց յետոյ Սմբատին տարաւ իրանց տուն: Օրեկոյեան հարցկերութիւնից յետոյ Սմբատին ասաւ ինչպէս է վարպետ, կ'կարողանաս Նոյեմզարին յաղթել թէ ոչ. Սմբատն ասաւ եթէ Աստուած օգնէ կարող եմ, տեսնենք վաղը: Եռաւօտը տեղներից վեր կացան թէյ խմելուց յետոյ գնացին դարձեալ նոյն սրճարանը, ուր ժողովուրդը հաւաքուած նըրանց էին սպասում: Սմբատն ու Յովսէփ իշխանն էլ նստած մի մի սուրճ խմելուց յետոյ Յովսէփ ասաւ, Նոյեմզար, պատրաստուիր, որ այս աւուր հարցի հերթը Սմբատինն է. Նոյեմզարը ասաւ, ես

պատրաստ եմ թող հարցնէ, այնուհետև Սմբատը
լարեց սանթուրը և հրգեց այսպէս.

Սմբատն

Քեզանից հարցանեմ ճարտար օրիորդ
Հրեշտակաց գնդի գումարը քանիս է,
Այն ինչ պարիսպ է, որ, լուսով անաղօտ
Գամ ինչով է շինուած շարը քանիս է:

Իրյեմզարն

Ինչ որ կամիս հարցու ինձ համար չէ փոյթ,
1) 2) Հրեշտակաց գնդի գումարն է տասերկուս,
Այն վերին Երուսաղէմն է անաղօտ,
Ակունքներով շինուած շարն է տասերկուս:

Սմբատն

Այն քաղաքի բարձրութիւնը հրքան է
Երկարութիւնը լայնութիւնը հրքան է,
Ջուրջանակի քառանկիւնը հրքան է
Ասպարէզաշափ հազարը քանիս է:

Իրյեմզարն

Այն քաղաքի բարձրութիւնն է հաւասար,
Երկարութիւն լայնութիւնն է հաւասար,
Ջուրջանակի քառանկիւնն է հաւասար,
3) Ասպարէզաշափ հազարն է տասերկուս:

Սմբատն

Այն ուր էին մահի շեղան արժանի,

1) Յայտ. 21 դ. 10, 22. համար. 2) Մատթէոսի 26 դ. 52 հա-
մար. 3) Յայտ. 21 դ. 15 համար:

Գետինը պատռաւ, դժոխքն իջան կենդանի,
Ի՞նչ մարդ կտրեց ջուրը գետ Յորդանանի,
Այն ջրից դուրս հանած քարը բանիսէ:

Նոյեմզարն

- 1) Կորխու գազան մահի շեղան արժանի,
Գետին պատռաւ, դժոյրն իջաւ կենդանի,
- 2) Յեսուն կտրեց ջուրը գետ Յորդանանի,
Այն ջրից դուրս հանած քարն է տասերկուս:

Սմբատն

Սմբատն հմ ուսումով ուսեալ կրթուած,
Ես քեզ յազթելու հմ թէ կամի Աստուած,
Այն ի՞նչ ծով էր հզանց վրայ հաստատուած,
Այն եզների թիւ համարը բանիս է:

Նոյեմզարն

- Նոյեմզարն հմ շնորհք ունիմ Աստուծով,
Երբէք չհմ յազթուի քեզ պէս տղայով,
3) Սողոմոնն էր շինեց եզանց վրա ծով,
Այն եզների թիւ համարն է տասերկուս:

Այս հարցերից յետոյ Սմբատը տեսաւ, սր Նոյեմզարն էլ լաւ շնորհք ունի, առաւ արդեօք չե՞մ կարող մի այնպէս բան հարցնէ, որ սա չ'կարողանայ պատասխան գտնել. մտածեց և հարցրաւ այսպէս. **Ղոշմա:**

Սմբատն

Լսէ դարձեալ ես քեզ ասեմ քանիմ բան,

էլ խօսենք հին ու նոր կտակարանով,
Պատրաստուի որ տաս խօսքերիս պատասխան
Գիտեմ որ հմուտ ես ամեն մի բանով:

Նոյեմզարն

Ո՛չ թէ բանիմ, կուզես հարցու հազար բան.
Կմեկնեմ հին ու նոր կտակարանով
Պատրաստ եմ որ տամ հարցերիդ պատասխան
Լիովին լցուած եմ ամեն մի բանով:

Սմբատն

Հրէայք որ բռնեցին մեր Տէր Յիսուսին,
Սյն ո՞վ էր որ փախաւ մերկ, կտանն ուսին,
Կարդա տասն և չորս գլուխ Մարկոսի
Ով լինեին իմացի աւետարանով:

Սյս տան մեկնութիւնը նոյեմզարը չ'կարողա-
ցաւ տալ. փասնդի աւետարանումը չ'կայ դրա մեկ-
նութիւնը. Սմբատն ասաւ, ուրեմն լսիր միւս տունը.

Սմբատն

Սստուած իրան բերանով դրեց վեց անուռ,
Սահակին, Յիսուսին մին էլ Յովհաննոն,
Միւս երեքն ո՞վ են այն էլ գտի դուն,
Վեց մարդ էին Ռոտւածադիր անունով:

Նոյեմզարը այս տունը ևս չ'կարողացաւ բա-
ցատրել, Սմբատն երրորդ տունը ասաւ.

Ա) Իսմայէլն. է Մննդ. 16 գ. 11 համար: Բ) Սողոմոնն է. ա.
Մնաց. 22 գլ. 9 համար: Գ) Յովսեան էր, Գ. Թագ. 13 գլուխ:

Մմրատն

Առտրեալը Յիսուսին ասին ո՞վ է մեծ,
Այնտեղ մի մանուկ կար, գրկեց և օրհնեց,
1) Այն մանուկի անունն ինչ էր չ'յայտնեց,
Դէ պատմէ Մմրատին քո սուրբ բերանով:

Բոլորն էլ լսեցին և տեսան, որ Նոյեմզարը
յախճուաւ և սազը յանձնեց Մմրատին, միաբերան
ասացին կեցցես Մմրատ. Յովսէփ իշխանն էլ տե-
ղից վեր կացաւ, Մմրատի ճակատը համբուրելով
կեցցես ասաւ և այն հաւաքած փողերը յանձնեց
նրան. Նոյեմզարն էլ ելաւ տեղից իւր սկէսրայր
Յովսէփի ձեռքը համբուրելով մօտը կանգնեց և ա-
սաց, այսօր իմ ուխտը կատարուեց, այսուհետև ձեր
իրաւասութեան ենթակայ եմ. ինչպէս ձեր կամքն
է կատարեցէք: Մմրատը Նոյեմզարին խնայելով սա-
զը յետ տուեց իրան և պ. Յովսէփի հետ գնացին
իրանց տուն. Յովսէփն ասաւ, Մմրատ ջան, որով-
հետև դու իմ հարսանացուն յաղթեցիր, որ նշան-
ուած էր իմ ուսումնազէտ Լևոն որդուս հետ, այժմ
ես կ'պատրաստուիմ իմ որդուս պսակելու Նոյեմզա-
րի հետ. միայն ես խոստացել եմ քեզ, որ քո նը-
պատակդ էլ կատարեմ, ուրեմն ասա՛, տեսնեմ ինչ
ցանկութիւն ունիս: Մմրատը սանթուրն առաւ ձեռ-
քը և ասաւ, լսիր պարոն, որ ես յայտնեմ քեզ իմ
գաղանի նպատակը և երգեց.

1) Իգնատիոսն էր, տես. Միխ. Աբբայ բառ. 2 հատ. 284 երես:

Սմբատն

Լսէ պարոն, լսէ վէրքերս բանամ.
Քաղցրութեամբ ընդունէ դառն ազազակս,
Որոյ բոցերու մէջ վառված կմնամ
Լսէ որ քեզ յայտնեմ, գաղտնի կրակս:

Մի օրիորդ ինձ գցել է քարէ քար,
Անունը Սօֆիա գերազնիւ խոնարհ,
Վառվում էրվում եմ ես նորա համար,
Իսկ նա է իմ կեանքս, իմ հոգեակս:

Սմբատն եմ քեզ ասեմ, իմ հետեւանքս
Լսէ ազազակս ու աղերսանքս,
Տիգրան կուպեցի աղջիկն է բաղձանքս
Սհա տէր իմ, այս է իմ նպատկաս:

Երգը աւարտելուց յետոյ Յովսէփն ասաւ, ու-
րեմն դու Տիգրան վաճառականի օրիորդի հետ սէր
ունիս. Սմբատն ասաւ, այ՛ պարոն, ե դրա համար
էլ եկել եմ. Յովսէփն ասաւ, շատ լաւ, անհոգ եղիր
այդ իմ գործն է, Տիգրանը հիմայ այստեղ չէ, նա
գործով գնացել է Եւրոպա, երբ որ եկաւ, նա իմ
ձեռքից չի կարող ազատել: Մենք այժմ պսակի
պատրաստութիւնը կ'տեսնենք և հարսանիքը կա-
նենք, նա էլ մօտ օրերս կ'գայ անպատճառ:

Հարսանիքը սկսուեց, շատ մեծ հանդիսով պը-
սակեցին նոյեմզարին և Լևոնին, եօթն օր տեց
հարսանիքը, վերջին օրը բոլոր բարեկամները ըն-
ծաներ բերին հարսի և փեսայի անունով. Տիգ-

րանի անունն էլ յիշուաւ այդ հանդիսում, բայց ինքր չ'կար. կերան, խմեցին եօթը օր բոլոր բարեկամներով և ուրախացան, հարսի և փեսայի համար բարեմաղթութիւններ անելով գնացին ամեն մարդ իրանց տուն: Միւս օրը, Յովսէփը և Սմբատը միասին նստած ժամանակ, մի նամակ յանձնուեց պ. Յովսէփին, որից իմացուեց, որ Տիգրան վաճառականն եկել է և հրաւիրում է ձեզ տեսութեան. Յովսէփն ասաւ այս լաւ եղաւ Սմբատ, մեր առ սանթուրդ և միասին գնանք. Ելան և գնացին դէպի Տիգրանի տունը, երբոր պարբաղին մօտեցան, Սմբատը մտքումն ասաւ, ահա սա իմ երազով տեսած դարբազն է, միայն տեսնենք արդեօր Սօֆիան էլ տեսածիս նման պիտի գուս դայ թէ ոչ:

Գոնից ներս մտնելիս, նուագածունների ձայնը Սմբատի սիրտը ցնցեց, և ներս մտան միասին. ներս մտնելիս բոլոր ժողովուրդը ոտքի կանգնեց և նուագարանները լռեցին. Մինչև Յովսէփը Տիգրանի հետ տեսնուեց և յետ նայելով նշան արաւ ժողովուրդը նորից նստեցին: Այդ բոլորը Տիգրանի բարեկամներն էին, որոնք եկել էին նրա գալուստը շնորհաւորելու: Երգիչները Սմբատին տեսնելիս սառեցին մնացին, որովհետև նրանք բոլորն էլ Սմբատի հռչակաւոր անուանը ծանօթ էին, և չէին վստահանում ծկտու հանել:

Ժողովուրդի լռութիւնը տեսնելով, Յովսէփը Սմբատին ասաւ, լարի՛ր սանթուրդ և մի քիչ եր-

դիր տեսնենք: Մմբատը իր սանթուրը պատեհանից հանեց, մի լաւ լարելուց յետոյ նուազեց ու երգեց այսպէս: Թոփխանայ դիւանի:

Սմբատն

Չեզանից ո՞վ կ'կամենայ որ խօսի բան ինձի հետ,
Կամ նւազի վին ու տաւիղ նուազարան ինձի հետ,
Ով որ իրանից յուսով է, թող գայ մտնի ասպարէզ,
Առաջարկէ գրքերից հարց ու պատասխան ինձի հետ:

Երբէք չունիմ ահ ու երկիւղ աշխարհի մէջ ոչ որից
Որովհետեւ երկնաւոր տէրն է օգնական ինձի հետ,
Ով նրանից մեծ տէր ունի, ինձ կյալթէ յայտնապէս
Եթէ ոչ նա չէ կարող բանալ քիրան ինձի հետ:

Այն որ տւեց իւր ձեռքովը Մմբատիս սիրոյ բաժակ,
Խոստացաւ որ ինքը լինի միշտ պահապան ինձի հետ:

Մմբատը այս երգը երգիչներուն փորձելու համար ասաւ: Այն անգում եղած երգիչներից և ոչ մէկը բերան չը կարողացան բանալ Մմբատի դէմ և տեղներից ելնելով դուրս գնացին: Տիգրանը հիացած նայում էր Մմբատի վերայ, նա զարմացել էր նրա վստահութեան, գեղեցկութեան և շնորհալի խօսքերի վրայ: Չատ նայելուց յետոյ ասաւ, շնորհալի վարպետ, հրտիպացի էք: Արևելեան կողմ, Արարատեան աշխարհի Արմաւիր քաղաքիցն եմ, պարոն, պատասխանեց Մմբատը, Հա, երանի ձեզ, որ դուք այն նշանաւոր լեռան մօտ էք, որի վրայ

Նայեան տապանն է կանգնել: Աստ տեսնենք, ինչ-
 պէս է ձեր բաղաքի շրուիթիւնը, պատմիր նրա
 կարգերի և սովորութեանց մասին: Մմբաան ասաւ,
 երգիչի լեզուն բաց անողը նուագարանն է. եթէ
 կրարեհաճէր, երգելով կ'պատմեմ ձեզ, և սկսեց
 նուագել ու ասել:

Սմբատն

Ամենայն տեղ քո անունդ յիշում են
 Քեզ պատմեմ տեղով նշանով Արմաւիր,
 Լսողները յոյժ կարտող քաշում են,
 Գովական ևս ամեն բանով Արմաւիր:

Գարուն որ կ'լինի սերմեր կ'ցանեն,
 Ծաղիկները բացուելուս տեսութիւն կանեն,
 Զրեղ օրիորդներ կան, աննըման են.
 Պար կ'բռնեն երգաբանով Արմաւիր:

Մարտ ամսում կ'տնկեն զանազան տունկեր
 Ամառը կ'ծախուի պատուական մրգեր,
 Երգիչները կ'երգեն ձայնաւոր երգեր,
 Գոյնզգոյն նուագարանով Արմաւիր:

Մէկ կողմդ այգի է, մէկ կողմդ պարտէզ,
 Ծաղիկ բուրաստածով լի ես բեզու քեզ.
 Աշուն որ կ'լինի խաղող կ'մզես,
 Կարբենաս անուշ գինով Արմաւիր:

Առաւօտ որ կ'ծագէ արուսեակը
 Քաղցր երգով կ'ղայլայլէ սոխակը.

Սոստ է բրինձը, սոխը, բամբակը,
Աշխարհը շէն է միշտ բեզանով Արմաւիր:

Իրաւ գոյեյի է քո հանգ ու հողդ,
Անհատ է արդիւնքդ, օսկիդ ու փողդ,
Սսուածածնան կտրուելիս խաղողդդ
Գ'օրհնեն գրքով ու քահանով Արմաւիր:

Իմ անունս Սմբատ, քոնը Արմաւիր
Գատաւորներ մէջդ կ'կտրեն վճիռ
Հաշտարար վեհ հոգի դատաւոր ընտիր
Ուղիդ, արգար դատաստանով Արմաւիր:

Այս երգից յետոյ բոլորն հաւանութիւն տալով
Սմբատին, կեցցես, զօրանաս, վարպետ ասացին, ինչ-
պէս որ մենք լսել էինք, այնպէս էլ պատմեցիր:

Բայց Սմբատի հրգի ձայնը Սօֆիան որ լսեց,
եկաւ դրան մօտ, և տեսաւ որ երգողը իւր երա-
զումտեսած երիտասարդն է, յետ դարձաւ և գնաց
իւր նաժիշտներին ասաւ, աղջիկներ, այս մեր սնն-
եակում երգող երպիշը այն է, որի կարօտը ես քա-
շում էի: Այն ժամանակը որ Սօֆիան եկաւ դրան
դէմը Սմբատին տեսնելու, յանկարծ Սմբատի աչքը
որ նրան առաւ, իսկոյն նորա վերայ մի տեսակ
թմրութիւն եկաւ, ուշքը գնաց և օանթուրը ձեռքից
վայր ընկաւ, մի կէս ժամուայ շափ այդպէս մնա-
լուց, Յովսէփը նրա երեսին մի բիշ ջուր ցանեց
ականջները քաշելով ուշքի բերեց: Այնտեղ գտնը-
ուողները այստհար կարծեցին նրան և շատ ափսո-

սացին. Խոսում էին արդեօք սրան մի ճար շի լինի։ Տիգրանն ասաւ, սրա ճարն այն է, որ մի բանի կօպէկ տար և այստեղից դուրս անկը. լաւ էր որ դըրան չ'ըրկիր, որովհետև մեր սիրախումբիւնն էլ խանդարեց։ Գու մի ասիլ Սօֆիան էլ որ դռնից Սմբատին չէր տեսել ու վերադարձել էր իր նաժիշտների մօտ, նա էլ այնտեղ էր Սմբատի նման ուշագնաց դարձել, և նրան էլ աղջիկներն էին ուշքի բերել առտնց մարդկանց յայտնելու։

Վերջապէս Սմբատը այդտեղ նստողների բոլորի կարծիրը փարատելու համար, առաւ սանթուրը իւր ձեռքը և ասաւ, ահա լսեցէք իմ այսահարութեան ցաւը, և երգեց.

Յանկարծակի ինձ երկաց,
Ահա ես նրան եմ կարօտ,
Սիրտս մարաւ ուշքս գնաց,
Տեսէք թէ սրբան եմ կարօտ։

Այս տունը որ երգեց, ասացին, հաստատ որ սա այսահար է, որովհետև մենք էլ այստեղ ենք, եթէ մի բան լինէր, մենք էլ կ'տեսնէինք, երեխ սրա աչքին բան է երեւում։ Միայն Յովսէփն ասաւ, սպասեցէք, վերջը կ'իմանաք։ Իւ Սմբատը երգեց միւս տունը.

Լուսատու արեգակի պէս,
Փայլփլիւով փայլակի պէս

Յանկարծ ճայթեց կայծակի պէս
Ահա կ'մեռանիմ կարօտ:

Յովսէփն ասաւ, Մմբատ մի ըիշ պարզիր խօս-
քերդ, որպէս զի բոլորին հասկանալի լինի,

Մմբատն եմ պարզ ասեմ բանը
Չի ներէ պ. Տիգրանը
Դուստրն է իմ սիրեկանը,
Սօֆիի տեսութեանն եմ կարօտ:

Այս վերջի տան խօսքերից վիրաւորուեց Տիգ-
րանը և աչքերը դարձրաւ Մմբատի վերայ, բայց հաս-
կացաւ որ պ. Յովսէփը նրան շատ է սիրում և
պաշտպանում, միայն այսքանն ասաւ թէ, դուրս
արէք դրան թող հեռանայ, ինչ էք այս դիւահարի
խօսքերին ականջ դնում: Յովսէփն ասաւ, սպասե-
ցէք, ես այս բոսլէխ կ'իմանամ ամեն ինչ և հար-
ցրաւ Մմբատից, որդի, ասաւ, դու Արմաիրցի իսկ
Սօֆիան Ձէյթունից, նա սրտեղից կարող է բեզ
սիրահար դառնալ, այն տեղից այստեղ սիրահար-
ուիլ, ախր չ'հաւատալու բան է: Մմբատն ասաւ,
սանթուրին լսեցէք և երգեց.

Երազումս տեսայ մի սուրբ զինաւոր,
Նա ինձ ձայեց անտառի մէջ միայնակ,
Փայլուն հանդերձներով սպիտակ ձիաւոր,
Ասաւ ես եմ բազ սուրբ Մարգիս նահատակ:
Այն սուրբ զինաւորը ինձ հրաւիրեց.

Ական թօթափելի ինձ այստեղ բերեց.
Սօֆիէն ինձի, ինձ Սօֆիային ցոյց տուեց,
Եյնուհետև սիրտս լցուաւ վառ կրակ:

Թէ որ Աստուածանից լինի պայմանը
Մարդ չէ կարող որ աւերէ այն բանը,
Սմբատին շնորհեց սիրոյ մատեանը
Գարդալով կարդացի եղայ հպատակ:

Այս երգից յետոյ Յովսէփն ասաւ Տիգրանին,
ես մի քիչ հաստատում եմ սրա ասածներին, իսկ
դուք Տիգրանը ասաւ, դրա ասածները բոլորն էլ
սուտ բաներ են, դրանք ինչ են, որ մարդ հաւատայ:
Այդ խօսակցութեան միջոցին կառավարութեան կող-
մից հրաման ստացան, որով կանչվում էր պ. Յով-
սէփը տեղական դատարանը ներկայանալու, ուստի
և չ'կարողացաւ յետանալ, որովհետև ինքը այդտեղի
կուսակալի օգնականն էր: Տիգրանի սիրտը շահե-
լու համար ասաւ, Տիգրան, դու սրան առ այժմ
պահիր մինչ ես յերազմանամ և կքննեմ, Աստուած
տայ որ սուտ լինի սրա ասածները, յետոյ ես գի-
տեմ իմ բանը: Յովսէփ իշխանը գնաց և այնտեղ
գտնուողները ևս փնացին: Սմբատը մի քիչ մտածեց
և բռնը եկաւ և երբ Սմբատը արդէն քնել էր,
Տիգրանը կանչեց ծառաներին և ասաւ, այս ան-
պիտանին անկողնով վերցրէք և տարէք քաղաքից
դուրս դարպազի աջ կողմը մի խորվիրապ կայ քա-
ռասուն կանգնաչափ, շւանով կախ արէք, իջեցրէք

տակն ու եկէք. Դէ՛հ շուտ արէք երբոր Յովսէփը կգայ, մի կերպով կհաւատացնենք: Ծառաները կատարեցին իրանց տիրոջ հրամանը և երբ Սմբատին գցին վիրապի մէջ, նոր արթնացաւ և զգաց որ ինքը արդէն մի խոր հորի մէջն է, բայց սանթուրն էլ հետ էին գցել, հասկացաւ որ իրան Տիգրանն է այստեղ բերողը, սանթուրն առաւ ձեռքը և ինքն իրան յոյս տալով առաւ.

Սիրտ մի տխուր մնայ. մի քիչ համբերէ
Ես ըեզ մխիթարեմ երգերով սիրտս.

Տխրութեան վերջն ուրախութիւն կբերէ
Չուտ մի լոուի վիշտ ու վէրքերով սիրտս.

Չատ մի տրտում մնար, շատ մի մտածէ
Նեղութեան յայնութիւն տուողը Աստուած է:
Որ կամի կարող է, նա ողորմած է.

Մէկ օր կուրախացնէ փառքերով սիրտս:

Սիրտ իմ յուշադիր լեր, Սմբատին նայէ
Տոյց տուած խրատս միշտ միտքդ պահէ.
Ստեղծողը, մեծ ու գթած արքայ է
Քեզ կազատէ երկար ձեռքերով սիրտս:

Սմբատը վերջացրեց երգը և սկսեց մտածել իր մասին թէ ինչպէս կարողանայ հորից դուրս գալու, որովհետև հորը շատ խորն էր. Միայն Ամենակարողն որ իւր բարի աչքով ուզոււ է մէկի վրայ նայել, իսկոյն այն մարդն գտնոււ է մի ելք:

Սօֆիան իսկոյն իմացաւ որ իր հայրը Սըմբատին հորը գցեց, իր հաւատարիմ նաժիշտներին կանչեց և ասաւ, բանի որ հայրս ընած է, դուք վեր առէք այս պարանը և փնացէք քաղաքից դուրս արևելեան դարբազի աջ կողմը մի խոր հոր կայ, Սմբատն այնտեղ է գցուած, զգուշութեամբ դուրս հանէք նրան և բերէք ինձ մօտ: Այջիկներն գնացին, հորը գտան և կամաց ձայնով ասացին Սմբատ, բռնիր այս պարանից և դուրս արի, Սմբատն ասաւ դուք նվ էք, ասացին մենք Սօֆիայի նաժիշտներն ենք: Սմբատը բռնեց պարանը և ալջիկները քաշելով դուրս հանեցին նրան, և տարան Սօֆիայի մօտ: Սմբատն ներս մտնելիս, Սօֆիան ասաւ, իմ ազնիւ սիրահարս, ես ուխտել եմ, որ քեզ երգելով բարեկամ առաջին տեսնելում. բայց Սմբատը Սօֆիայի լուսատու պատկերն տեսնելիս լեզուն բռնուեցաւ ուախութիւնից և չ'կարողացաւ պատասխանել, մի քանի րոպէից յետոյ կըկզալով առաւ, և եր. եր. երգէ: տես. տես. տեսնիմ: Եւ Սօֆիէն իր բազմաթիւ հիւսերից մին սաղ անելով սկսեց երգել: Աջամի եղանակով, զօշմայ:

Ո՛վ անգին սիրելի, ընտիր սիրահար,
Ազնիւ սիրեկանս դու բարով եկար,
Արժան է որ ցոյց տամ սէր, սիրոյդ յարմար
Գհանք ու հոգի ջանս դու բարով եկար:

Այս տունը որ ասաւ Սօֆիէն, Սմբատն ասաւ

սպասիր սիրելի հերթն իմն է, և ասաւ.

Տեսութիւնդ բարի լինի սիրելի,
Սիրուն անըմանս քեզ բարով տեսայ
Ուղիդ սէրն քակտուել չէ կարելի,
Ո՛վ իմ հոգեհանս քեզ բարով տեսայ:

Սօֆիէն

Աչքս մնաց ճանապահոյ նայելով,
Գիշերն անքուն, ցերեկներն հայելով.
Մինչ երբ մնամ սուզ, լեզուս լուռ պահելով,
Իմ լեզու բիրանս զու բարով եկար:

Սմբատն

Կարօտդ քաշում եմ ամեն ժամանակ,
Գիշեր ցերեկ, որ ու ամիս շարունակ,
Համասփիւռ բալասան ծաղիկ մանուշակ
Հասով բուրաստանս քեզ բարով տեսայ:

Սօֆիէն

Սօֆիէն եմ սիրովդ վառուած կ'մնամ.
Ե՛յ, սաստիկ կրակին ես ո՞նց դիմանամ.
Եկ մօտ իմ սիրելիս որ չ'մահանամ,
Բժիշկ իմ մահուանս դու բարով եկար:

Սմբատն

Սմբատն եմ կշտիցդ էլ ուր հեռանամ.
Նոր պէտք է ես խնդամ, նոր ուղախանամ.
Շունց քեզ խնդութիւն ինչպէս կունենամ.
Երգ ու երգարանս քեզ բարով տեսայ:

Չուտով հրգն վերջացրին, և մտան անկողին
քնելու. նրանք իրանց փափազն յագեցրին և քնե-
ցին, միայն աղջիկներին էլ ասացին, մի քնիք,
հսկեցէք և յուսանալուն մօտ մեղ իմաց տուէք. լու-
սանալուն մօտ իմաց տուին, նրանք զարթեցան.
Սօֆիէն ասաւ, տարէք Սմբատին և նորից իջեցրէք
նոյն հորի մէջ, աղջիկներն տարան և իջեցրին.
այնտեղ իջնելիս Սմբատն մտաբերեց Մանասէ թա-
գաւորի հորի մէջ լինելն, և նրան հետեւելով ասաւ
այս երգը.

Ապաւէն իմ փրկիչ բարերար Աստուած
Մի ծածկիր երեսդ ինձանէ Փրկիչ
Քաղցր սիրոյ ս. բապուկդ մեկնէ ցած,
Չուտով ինձ այստեղից դուրս հանէ Փրկիչ:

Ինչպէս Մանասէին հանիր հորիցը
Յունան մարգարէին ձկի փորիցը
Սեթրակ, Միսաբ, Արեթնագումն հրիցը,
Ինձ էլ նրանց նման պաշտպանէ Փրկիչ:

Հաւատով և յուսով յիշեմ անունըդ
Յիշէ երողիս մէջ արած խոստումդ,
Տոյց տուր տեսնիմ անհատ ողորմութիւնդ,
Եթէ որ Սմբատն արժան է Փրկիչ...

Այս երգն աւարտելուց արշալոյսն բացուեցաւ,
արեգակը ծագելու մօտ էր. սիրահար սրտերը ան-
համբեր մի աջողակ ձլք գտնել կ'ցանկանային.

Չէր մտադրել Սմբատին նաև Յովսէփ իշխանը. առաւօտ կանուխ նա եկաւ Տիգրանի տունը, որ դեռ նա տեղից նոր էր վեր կացել և նստել: Յովսէփն հարցուց, պ. Տիգրան ուր է Սմբատն. Տիգրանն ասաւ, հէնց ես էլ նրա համար եմ մտածում և չ'պիտեմ թէ նա ուր է, կարելի է թո՛ւ երկիւղից փախած լինի: Յովսէփն ասաւ, ոչ, նա ինձանից ոչ մի երկիւղ չունէր, երևի դու ես նրա գլխին մի փորձանք բերէ, այս բոսէիս ես կ'պահանջեմ քեզանից Սմբատին, հակառակ դէպքում թէ որ չբարար առանց ուշացնելու ես կ'յայտնեմ կառաւարութեան և բեղ գերդաստանով արսոր ուղարկել կ'տամ, թո՛ւ քու ունեցածներդ թագաւորական անելով: Տիգրանն տեսաւ որ անհնար է որա ձեռքից ազատուելն, ասաւ, խնդրեմ մի՛նչի ճաշ ինձ ժամանակ տուր, դուցէ մի տեղից դուրս գայ: Յովսէփն ասաւ, թող բեղ մինչ ճաշ ժամանակ լինի, եթէ չես գտէ, հաստատ հաւատացած եղիր որ, անպատիժ չես մնալու:

Տիգրանն ասաւ որ էլ չի լինի, ծառաներին կանչեց և ասաւ, գնացէք այն անիրաւին հանէք հորից և բերէք այստեղ, և եթէ Յովսէփն ձեզ հարցնելու կ'լինի թէ որտեղից գտաք, ասացէք թէ, գնացինք բազաքից դուրս ճանապարհներն փնդուելու, յանկարծ մի երգի ձայն լսեցինք և գիացինք որ մի հորի միջում երգում է, հանեցինք և բերինք: Իմ անունս չ'տար: Եւ այսպէս ծառաներն գնացին

5

և Սմբատին հանեցին հորից ու բերին Յովսէփէ մօտ. Յովսէփն որ տեսաւ Սմբատին հարցրեց, ուր էիր գնացէ. Սմբատն ասաւ. ես էլ չ'գիտեմ միայն ես այստեղ քնած էի, մին էլ գարթեցայ և տեսայ որ, մի խորունկ հորի մէջն եմ. Յովսէփ ասաւ ապա բեզ ոյ վցեց այն հօրն դու շես գիտէ, Սըմբատն ասաւ ոչ չ'գիտեմ, յետոյ դառնալով ծառաներին առաւ իրան առացէք, եթէ դուք չէիք արել, ինչպէս գիտեցար սրան հորի մէջ լինելն. ծառաներն ասացին մենք ձեր հրամանին համաձայն քաղարում փնդրեցինք և չ'գտանք յետոյ քաղաքից դուրս ճանապարհներն գնացինք քննելու թէ, մի դուցէ այս տեղով փախած լինի, միայն, երգելու ձայնն լսեցինք և գնացինք հօրումն գտանք. Յովսէփն ասաւ միաս շունի, ես յետոյ կիմանամ. միայն հիմիկայ դործին աշենք, և դառնալով Տիգրանի ներկայութեամբ Սմբատին ասաւ, որդի, դու որ մի քիչ առաջ ասացիր, թէ ս. Սարգիսն ինձ ցոյց է տուել Սօֆիային և ես նրա սիրով վառվում եմ, հիմա ես բեզ պիտի փորձեմ, թէ որ սուտ դուրս եկար, այն ժամանակ ես գիտեմ ու դու: Տիգրանին ասաւ ծածուկ, պնա քառասուն աղջիկ հաւարէ, և այն քառասունին էլ միանման հագուստ հագցրու և Սօֆիային նրանց հետ միասին բերենք և տեսնենք թէ որ ճանաչեց, իմացիր որ նրա ասածներն սւղիղ են, իսկ թէ որ չ'ճանանչեց և ես սատիկ կերպով կ'պատժեմ նրան և հեռացնեմ. Տիգ-

բանն ասաւ, պ. որովհետև այս տղան այս քանի
օր է որ այստեղ է գուցէ մի կերպով տեսած կ'լի-
նի Սօֆիային ի' հարկէ նա կ'ճանաչէ, արի այսպէս
փորձենք, վիճակ բցենք, որովհետև վիճակն ար-
դար է. Յովսէփն ասաւ ուրեմն թող թո ասածն
լինի, գնա ե վիճակն պատրաստիր. Տիգրանն գնաց
մի ոսկերիչի մօտ ե քառասուն հատ մատանի շի-
նել տուեց, մի նմանութեամբ և մի չափով, և աս-
մեն մի մատանու վրայ մի աղջկայ անուն գրել
տուեց, Սօֆիայի անունն էլ մի մատանու վրայ
գրել տուեց և այդ բոլորն, միասին բերին Սմբա-
տի, Յովսէփի և միւս մարդոց ներկայութեամբ լրց-
րին մի նեղաբերան ամանի մէջ, Տիգրանն ասաւ
Սմբատ ահա բոլոր մատանիներն այստեղ են, եթէ
դու մի անգամից այս ամանի միջից Սօֆիայի մա-
տանին գուրս բերիր, այն ժամանակ ես էլ իմ աղ-
ջիկս իմ յօժար կամօք կ'տամ բեզ, իսկ եթէ ոչ,
քո բոլոր ասածներն սուտ են: Սմբատն այդ փոր-
ձի մասին կարծիրաւորուելով, մտածում էր և մի
բիշ մտածելուց յետոյ ասաւ, պարոններ, մի բան
պիտի խնդրեմ ձեզանից, եթէ կարելի է թոյլ տը-
ուէր մի խօսկ կայ մտքումս ձեզ յայտնեմ, և յետոյ
ձեր առաջարկած վիճակն հանեմ: Նրանք իրաւունք
տուին և Սմբատն երգեց.

Ո՛վ բարի ստեղծող և արդարադատ,
Սյո վիճակս թո ձեռքովդ կ'հանեմ,

Ինչպէս որ կամենաս կնդունեմ հաստատ,
 Քու կամրիդ համաձայն ես բաւական եմ:
 Յառաջընթաց ս. Յովհաննէս, Մկրտիչ,
 Անճառ գերահրաշ ամենափրկիչ,
 Հայր հայոց հայրապետ ո. Լուսաւորիչ,
 Ինձ պաշտպանէք պանդուխտ օտարական եմ,
 Մմրատիս օգնական լնր Աստուածածին,
 Սուրբ խաչը համբուրեմ որդիդ միածին,
 Ընտ հասիր օգնութեան իմ, մոլորածին,
 Եթէ, չ'կամենաս ինչ պէտք է անեմ:

Այս երգն յրացնելուց յետոյ մտտ գնաց վիճակին, երեք անգամ խաշակիքից իրան և ձեռքն ներս տարաւ և մի մատանի դուրս բերաւ ու տուեց պ. Յովսէփին, նա կարգաց մատանու գիրն և տեսաւ զոր Սօֆիայի մատանին է, Տիգրանն ասաւ այդ յանկարծ պատահաւ, քցեք տեղն, թող մին էլ հանէ Յովսէփ ասաւ վնաս չունի, թող այդպէս լինի և մէկ էլ հանեց Մմրատն դարձեալ Սօֆիայի մատանին: Տիգրանն ասաւ, վիճակը երեք անգամ է թող մէկ էլ հանէ Յովսէփն հասկացաւ որ այս գործն Աստուծոցն է կարգադրուած, դարցեալ կամք տուեց ու Մմրատն երորդ անգամին ձեռքն ներս տանելով հանեց, որ դարձեալ Սօֆիայի մատանին: Յովսէփն ասաւ, պ. Տիգրան, էլ բան ունիս ասելու, Տիգրանն ասաւ ոչ պարտն, ես էլ հաւատացի, որ դայ Աստուծոյ կարգադրած գործն է, որովհան շատ

աշխատեցայ բանդել բայց չկարողացայ, և դրա համար իմ կամօքս տալիս եմ իմ Սօֆիային այս տղին. բայց Սօֆիայի կամքն շեմ առնել, և ահա իմ խօսքի հաստատութեան համար իմ ձեռքով կ'դնեմ այս մատանին Սմբատի մատն. Յովսէփն ասաւ ես էլ կարող եմ Սօֆայի կամքը խնայել, և ասաւ ուրեմն Սօֆիային բերել տար այստեղ. Տիգրանը Սօֆիային ներկայեացրեց ծովսէփին, Յովսէփն ասաւ, որդեակ քո հայրը քեզ տուեց այս տղալին, եթէ քո կամօքդ է, որդի մի ամաչէր, արի իմ ձեռքըս համշուրէ որ ես իմանամ քո կամքովդ լինելը. Սօֆիան մօտեցաւ և համբուրեց Յովսէփի ձեռքը. Կեցցես շատ ապրիս, ասաւ Յովսէփը, և դառնալով Տիգրանին ասաւ, կանչէր մի բահանայ որ սրանց նշանադրութիւնով օրհնի, Տիգրանը կատարեց պարոնի հրամանը և բահանան գալով օրհնեց նրանց նշանադրութիւնը և Յովսէփն իր կողմից մի մատանի ընծայեց, որ բահանան օրհնելով դրեց Սօֆիայի մատը, և Սօֆիայի անսունով գրուած մատանին արդէն Սմբատի մատումն էր:

Սօֆիան արդէն իւր սրտի ցանկացած բանը կատարուած տեսնելով, հագել զարդարուել էլ, իւր նոճի հասակի, ազնիւ տեսքի և վայելուչ կազմուածքի յարմար հագուստներ. Այնտեղ գտնուողների ուշադրութիւն գրաւեցին Սօֆիայի նազիլի շարժումներն և սրի համար, Յովսէփն ասաւ, Սմբատ, եթէ չես կարողացել Սօֆիայի տեսքի և գեղեցկու-

Թեան յարմար մի դովասանր տայ, լաւ իմացիր որ,
քո վերջին օրդ է. Սմբատն ասաւ շատ բարի և
սանթաւրը ձեռքը առնելով նսւագեց և երգեց այս-
պէս. Մուխամբազ. Տասն և չորս վանկով:

Ո՛վ սիրելի աննման իմ սիրահար սիրելի,
Լուր մտերիմ բարեկամ և հաւատար սիրելի,
Արժէք ունիս գովելու, գովեմ յարմար սիրելի,
Պարզ ու պայծառ անունդ ձայնեց աշխարհ սիրելի,
Հասակդ իրրի նոճի նման երկար սիրելի,
Գին քեզ նման ծնանելն է անհնար սիրելի,
Ուրեմն հրեշտակ ես տամ հոգիս տար սիրելի:

Ազգատոհմդ ընտրեայ, դուն ինքդ արդար անմեղ,
Տեսակ գեղեցկութիւնդ ոչ քաղակ կայ ոչ մի գիւղ-
երեսլթդ հրեղէն պատկերդ յուժկու ահեղ,
Ունքերդ կեռ ու կամար, նման երկնային աղեղ,
Թերթերունքդ սուր սուսեր, աչքերդ փայլուն բիւրեղ
Հայուածքդ ճառագայթիւ, լուսարեր լուսոյ աստեղ,
Գոպերդ մեծ թանկագին ջահ ու դամբար սիրելի:

Չը կարծեմ հոգեղեն ես, ով հրեղէն օրինակ,
Ցանկալով կ'ցանկայի տեսութեանդ յոյժ փափագ,
Պարանոցիդ կայ անգին գոհարներով մանեակ,
Երեսնեքդ գերարբի ինքնաբաւ արեգակ
Ականջներդ ձուլած ու աստուածաշնք աշտանակ,
Թշներդ լուսնակ, աստղ, լուսին, լուսնթակ,
Պոռնկներէդ կ'կաթէ մեզր ու շաքար սիրելի:

Բերանդ մաքուր տաճար, շունչդ հոտով մեխակ է
Ստամեներդ շափիշա, լեզուդ իսկ ծիծեռնակ է
Ճակատդ լայն թողարան, սիրտդ սրբոց բանակ է
Ծոցդ մարդասպանդանոց ծծերդ սուր դանակ է,
Խօսքերդ խելօք խոհմ, իմաստնոց հեղինակ է
Սմբատն ինչպէս բեզ գովէ լիակատար սրբելի:

Սմբատի այս գովասանքներից յետոյ բոլորն
էլ, Աստուած բեզ հրկար կեանք տայ. բայով
վայելէք ձեր թագն ու պսակը առային ու գնացին
իրանց տները, մնացին Յովսէփը, Տիգրանն ու Մըմ-
բատը. Յովսէփն ասաւ Տիգրանին, պ. Տիգրան մին-
չի հիմայ ես աշխատում էի որ Սմբատին բեզ փե-
սայացնեմ, շնորհակալ եմ որ դու իմ խօսքը կա-
տարեցիր. հիմայ ես իմ սիրտս կարօտ առած լի-
նելով, յանձնում եմ բեզ, քո փեսին, Աստուած ձեր
մէջ յարատի սէր տայ, ասաց ու գնաց իր գործին,
Սմբատը մնաց Տիգրանի մօտ մի քանի օր, մի օր
էլ Տիգրանն ասաւ. Սմբատ ջան, ես մտածել եմ բեզ
հարսանիք անեմ. և իմ ունեցածից հոգամ քո հար-
սանեաց բոլոր ծախքերը, ապա թէ ոչ. դու մի
օտար մարդ ես, որաեղից սխտի ճարես այն բոլո-
րը. Տիգրանը որ այդպէս ասաւ, Սմբատը մի խոր
հառաչանք բաշխլով մտաբերեց իւր ծնողաց. լացն
ու աղաղակը և իւր արած հրդուժը, որով խոտա-
ցել էր չ'մոռանալ իւր ծնոխքը, ասաւ, հայր վա-
ճառական, մի բիշ սպասիր մի երկու խօսք եկաւ.

միտքս, բեզ յայտնեմ յետոյ դու գիտես, ինչպէս
կ'կամենաս, այնպէս արա, սանժուրն առաւ և նը-
սւազեց ամբասի եզանակով այսպէս.

Օտար աշխարհի մէջ միայնակ ընկայ
Ինձ կարծում են անտէր աղբատ աննշան
Թէ որ իրաւն առիմ ով կ'հաւատայ,
Դարձեալ կասեն ստախոս է այս տղան:

Չեզ մասնաւոր հասկացնեմ խոսալով
Մայրս Մարգարիտը թողել եմ լալով,
Հայրիկս յետեէս ազօթք անելով
Սաղաթէլ անուանի մեծ մտնառական:

Հայրիկս ունի յարգի մեծ բարի անուն.
Բազում ոտի արծաթ ու կարողութիւն,
Կարող է հարսանիք անէ իր որդուն.
Երգումով արել եմ նորա հետ պայման:

Միթէ այդքան ցած ստոր է անունս,
Ոչ փոյ կայ գրպանս, ոչ հաց կայ տունս
Սմբատն եմ չեմ գովէ կարողութիւնս
Թէ շատ, յիէ թիչ ունիմ ինձի բաւական:

Այս խօսքերն առաւ ու տրտում սանժուրը
ձեռքից վայր դրաւ: Տիղրան առաւ որ Սմբատը
իր խօսքերից առնուաւ ասաւ Սմբատ, երևի դու
խօսքիս միտքը չ'հասկացար, որ նեղացար իմ խօ-
սքից, գուցէ բեզ թուաց թէ ես հարսանիքս անեմ
ու էլ չեմ թողնի բեզ քս հայրենիքը գնալու,

իմ ասելու տչն է որ, այստեղից մինչ ք: հօր քա-
ղաքը գնաս. պատրաստութիւն տեսնիս և գաս
մի տարի կ'տե՛, բեզ այդքան երկար չ'չարչարե-
լուս համար ասի, որ քո հարսանիքդ այստեղ ա-
նեմ: Սմբատն ասաւ, ևս այդ բանին համաձայն չիմ:
Այս աշխարհում մարդի գլխից շատ դործիր և փոր-
ձանքսեր կանցնին, եթէ ևս այսպէս մի բան անեմ,
վազը մէկի հետ որ մի բիշ խօսարով հակառակուե-
ցի ինձ կասէ, դու այն մարզը չես որ այլոց փո-
ղով հարսանիք արիր, այդ բանը ինձ և իմ հօր ա-
նուան համար մեծ ցածութիւն է: Տիգրանն ասաւ
թող քո կամքդ լինի սիրելի: Իմ կամքս այս է որ,
հէնց այսօրուանից կ'պատրաստուիմ գնալու: Տիգ-
րանը հասկացաւ որ Սմբատը պիտի գնայ, Սօֆի-
ային աչքով արաւ իր գինու շիշը բերէ և մի բիշ
գինի խմացնէ նրան, որով գուցէ սիրտը հանդար-
տուի: Սօֆիան բերաւ գինին և բաժակը լցնելով
դէմ արեց Սմբատին բայց Սմատը ասաւ, իմ աղ-
նիւ սիրահար, որովհետև գուր կամենում էք իմ
սիրտը դրանով հանդարդեցնել, սպասեցէք մի քա-
նի խօսք կայ մտրուսն ձեզ հասկացնեմ, և սան-
թուրը ձեռքն առնելով աջամի գուրէիթի եղանա-
կով ասաւ.

Խմեմ բաժանման բաժակը

Գնալու եմ մնաս բարով,

Դեռ չեմ առել իմ փափագը

Գնալու եմ մնաս բարով:

Այս տունը որ ասաւ, Սօֆիան երկմտեցաւ և
ասաւ, գուցէ սա պիտի գնայ և կարող է չ'գալ
ուստի ասաւ, սպասիր Սմբատ, հերթով ասենք ու
սկսեց.

Սօֆիան

Ո՛ր դու իմ անգին սիրելի,
Թէ գալու ես, գնաս բարով,
Ուշանալով չէ կարելի,
Չուտ գալու ես գնաս բարով:

Սմբատն

Բաւական է այտեղ մնամ,
Հայր ու ուրդի արէք խնամ,
Ինձ ճանապարհ տուէք գնամ,
Գնալու եմ մնաք բարով:

Սօֆիան

Ձեմ ուզում մօտէս հեռանաս
Գուցէ թէ ինձ կ'մոռանաս
Անուշս ինչպէս դառնանաս,
Գնալու ես գնաս բարով:

Սմբատն

Մի տրտմիր իմ սիրելիսնս,
Ձէ քո մատն է իմ նշանս,
Ձեմ աւրեր ուխտ ու պայմանս,
Գնալու եմ մնաս բարով:

Սօֆիան

Սու ձերիցս թմէ գինի,
Ձր ես ասեմ անուշ լինի,

Թէ ոչ, շեմ մնար կենդանի,
Գնալու ես գնաս բարով:

Սմբատն

Քեզանից ջոկուել շեմ ուզում,
Սուրբ սէրից քակտուել շեմ ուզում,
Այստեղ պսակուել շեմ ուզում,
Գնալու եմ մնաս բարով:

Սօֆիան

Սիրելի մենակ մի գնար,
Գնալու ես ինձ հետդ տար,
Առանց քեզ մէկ օր շեմ մնար,
Ինչպէս ասեմ գնառ բարով:

Սմբատն

Սմբատն եմ գնալ եմ ուզում,
Պատրաստուել եմ և գալ եմ ուզում,
Քեզ առնել դառնալ եմ ուզում,
Գնալու եմ մնաս բարով:

Սօֆիան

Պատուով պահիր Տիգրանեանիս
Իմ կեսուր Մարգարիտ նանիս
Սօֆիայից քարհ կ'տանիս,
Գնա հոգիս դառնաս բարով,

Երգեցողութիւնը վերջացաւ, նրանք յօժարու-
թիւն տուին գնալու, Սօֆիայի ձեռքից առաւ գի-
նով լի քաժակը վերջին մնաք բարովն ասաւ ու

խմեց. և նորից լցնելով ասաւ Սօֆիային, որ նա էլ գնաք բարով ասաւ. Աստուած քեզ հետ, ինձանից բարև յիշիր քս ծնողաց, և խմեց. Սմբատն առաւ, որովհետև դուք իմացաք իմ տեղի հեռաւորութիւնն դրա համար, ինձ մի տարի կ'սպասէք, Սօֆիան ասաւ, քեզ ոչ թէ մի տարի, այլ եօթն տարի կ'սպասեմ, միայն աշխատիր մեզ չ'մոռանաս: Սմբատն ասաւ քանի որ աշխարհումս կամ և կապրիմ անհոգ, եղէք, ես քեզ մոռացող չեմ, և իւր ճանապարհի պիտոյքնիրն շալկելով ընկաւ ճանապարհ, և հրկու ամիս շարունակ դնալով հասաւ Սասուն. բայց Սմբատն հետևակ լինելու համար, ոտքերից շատ խեղճացաւ, և համարեայ չէր կարողանում քայլէ, և մի օր էլ այդ քանի (օտքերի) համար շատ նեղութիւն կրելով՝ նստեց մի բարի վըրայ և իւր ոտքերի վրայ մի քանի խօսք ասեց այսպէս.

Աւաղ ի՞նչ շատ տկարացաք
Ինչպէս անեմ ոտքեր ձեզի.
Մինչ այսօր լաւ դիմացար.
Եյժմ ի՞նչ անեմ, ոտքեր ձեզի:

Դեռ շատ կայ իմ ճանապարհս
Ձեմ կարող հասնի աշխարհս
Այսօր սաստիկ կտրաւ ճարս,
Ինչպէս անեմ ոտքեր ձեզի:

25 դուք լաւ էիք ամեն հեղ

Հիմայ ինձ թողնում էք այստեղ,
Չեք բելում որ գնանք մի գեղ
Ես ինչ անեմ ոտքեր ձեզի:

Ոտքեր դուք ինձի խղճացէք,
Գամաց, կամացուք գնացէք,
Գնանք մի գիւղ հանգստացէք,
Ես ինչ անեմ ոտքեր ձեզի:

Դուք պիտէք Սմբատիս ցաւը,
Ամեն գործիս վատն ու լաւը,
Մի ծաղր անէք իմ համբաւը,
Կ'կտրեմ ոտքեր ձեզի:

Այստեղ մի քիչ հանգստացաւ և վերկացաւ կամաց կամաց առաջ գնաց և երեկոյեան հասաւ մի գիւղ. մի աստուածասէր մարդ նրան հիւր ընդունեց և նրա ոտքերի ցաւալու համար, մի շաբաթ պաշտպանեց. Սմբատի ոտքերը լաւացան, և այդ տանտիրոջմէն շնորհակալութիւն առնելով ընկաւ ճանապարհ. ետան օրից յետոյ, հասաւ Արմաւիր՝ իւր հայրենի քաղաքը, իրանց տանից դուրս եկած օրէն մինչ այդ օրը, լրացաւ մի տարի և երեք ամիս: Սմբատը գնաց իրանց տուն, նորա ծնողները որդու պալը տեսնելով, չափազանց ուրախացան, և Աստծոյ դոյութիւն և փառք տալով համբուրում և փաթաթվում էին Սմատին, սկսեցին նորա գործի մասին հարցնել, Սմբատը իւր տեսածները մի առ մի պատմեց, ցոյց տուեց Սօֆիայի մատանին և

երբ մատանու վրայի գրերը կարդացին հաւատա-
ցին որ ուրիշ է Մատի ասածները: Մաղաթէլի
բարեկամները լսելով Մմբատի գալուտը, եկան և
Մաղաթէլին շնորհաւորում էին իւր որդու գալուտ-
ը և այդ օրը մեծ ուրախութիւն արին միւս օրը,
Մմբատը և իւր ծնոյնները խորհուրդ արին որ պատ-
րաստութիւն տեսնին և գնան իրանց հարսը հօր
տանից բերեն: Մմբատի միտքը ընկաւ իւր որսոր-
դութեան ժամերը և ասաւ, հայրիկ, իմ զէնքերը և
ձիս լաւ պահպանուած են, հայրն ասաւ, ինչպէս
թէ չեմ պահպանէ, կամենում ես դնա՞ տես և հե-
ծիր ու պտտոյիր, Մմբատը ուզեց իւր զէնքերը,
զինաւորուեց և ծառաներին ասաւ ձիս դուրս բե-
րէք որ տեսնիմ և հեծնիմ քիչ, ծառաները թամ-
բեցին նորա նժոյգը և դուրս բերին նրա մօտ, ձին
Մմբատին տեսնելու պէս, ճանաչեց նրան, կանգնեց
և ուրախութիւնից վրնջաց և սկսեց օտքերով գե-
տինը թակել, Մմբատը մօտեցաւ, փաթաթուեց
ձիու վզովն ու համբուրեց նրա աչքերը մի քիչ շո-
յեց նրա երկու ահանջների միջով կախուած մաղի
փունջը և հեծաւ, փողոցներով ուրախ, ուրախ ն-
ցաւ և բաղարից մի քիչ հեռանալիս, տեսաւ որ
իւր եկած ճանապարհով մի մարդ գալիս է դէպի
իրան. Մմբատն էլ առաջ գնաց և մօտենալիս տե-
սաւ որ եկող մարդը Զէյթունի հազուստով սուր-
հանդակ է ասաւ, սրանից կարելի է մի բան իմա-
նալ ու ասաւ ձիու սանձը բաշխով, եղբայր սրտե-

տեղացի և ինչ մարդ ես. Սուրհանդակը ասաւ, ևս
Զէյթունցի և սուրհանդակ եմ, Սմբատը երբ հաս-
տատ իմացաւ նրա Զէյթունից լինելը, իւր դաշոյ-
նը սաղ անելով, սկսաւ հարձնել նորեկից:

Եզրայր Աստուածդ կ'սիրես,
Մի լուր տուր իմ սիրեկանէս,
Ուղիղն ասա ինչ որ գիտես:
Մի լուր տուր իմ սիրեկանէս:

Սուրհանդակն ասաւ, բո սիրեկանդ ո՞վ է. կամ
ի՞նչ է անունը, Սմբատն ասաւ, ականջ դիր:

Սիրելիս Սօֆիա անունով,
Եննման գեղեցկութիւնով,
Այդ բո մարուր, սուրբ-մերանով,
Մի լուր տուր իմ սիրեկանէս:

Նորեկն ասաւ, Սօֆիաներ շատ կան. ազգա-
նունով ասա, որ ես գիտենամ և պատմեմ նրա
մասին:

Սմբատը մօր մի հատիկն է,
Սօֆիան լուսնի մահիկն է,
Տիգրան կուրեցի ազջիկն է,
Մի լուր տուր իմ սիրեկանէս:

Երբոր Սմբատը տեղով պատմեց, սուրհանդակն
ասաւ. չ'լինի Սաղաթէլի որդին Սմբատը դու ես,
ասաւ այն, ևս եմ, ուրեմն սպասիր բո սիրելուց
չուր ունիմ. մաղարիգ մի թուղթ հանեց և տուեց

Սմբատին. Սմբատը նամակը բաց արաւ, որ գըրուած էր այսպէս.

Յարգելի Սմբատ Սաղաթէլեան ըս Արմաւիր գնալուց յետոյ. Աստուածային սլափօժ հասաւ մեզ վրայ, Պարսից Սուլէյման շահադատի հրամանով վաթսուն հազար զօրք լցուաւ մեր բաղաքը, կողոպտեցին թալանեցին ամբողջ քաղաքը, Տիգրան վաճառականին սպանեցին և նրայ աղջիկ Սօֆիային, ուրիշ շատերի հետ գերի տարան, եթէ քաջութիւն ունիս դրա հնարը գտիր և գլխիդ ճարք տես: Այս նամակը դրուած էր Սօֆիայի մօր Վտովաուէի և Յովսէփ իշխանի կողմից: Սմբատը մինչև աւարտեց նամակը, նորա գոյնը և աչքերը սեպտան, բարկութիւնից քաշեց դաշոյնը և կամենում էր ինքն իրան սպանել. ուրեմն սրանից յետոյ ինձ ողջ մնալը հարամ է, ասաւ և նամակը ձեռքից վայր գցեց: Սուրհանդակը՝ վրայ հասաւ դաշոյնը խլեց ձեռքից և դրաւ վրան տեղը և ասաւ, մի յուսահատուիր Սմբատ, Աստուած սպորմած է, սրան էլ կարելի է մի հնար գտնել. իսկ Սմբատը սրտով վրդոված լաց էր լինում անհամբեր: Վերջապէս սուրհանդակի համոզմունքով մի քիչ հանդարդեցաւ Սմբատի սիրտը, քաշեց դաշոյնը, սազ արաւ ու սկսեց հիջրանի եղանակով այս երգը ասել.

Այդ ինչ լուր էր որ ինձ տուիր ով անգութ,
Հանդարտուած սրտումս մեծ կառկած ընկաւ,

Արևս խաւարեց, յոյսս դառաւ մութ,
աստղերս երկնից այսօր ցած ընկաւ:

Երանի թէ չ'տայիր այս նամակը
Զ'մարէիր կեանքիս վառ աշտանակը
Մէկէնիմէկ անանցնելի կրակը
Սրտիս մէջն վառուած, վրդոված ընկաւ:

Սուգ դառաւ Սմբատի խաղ ու խնդալն,
Լաւ է մահանայն բան ողջ մնալն,
Ինձի կ'պատկանի մահու դեղ տալն
Որովհետեւ գործս թնջուկւած ընկաւ:

Երգեցողութիւնն աւարտելուց յետոյ, սուրհան-
դակն ասաւ, սիրելի, բաւական է լաց ու կոծ ա-
նես, ետ դառի գնանք. Սմբատն ասաւ, ո՛չ, եղբայր,
իմ ետ դառնայս անկարելի է, սպասէ ու նորից
երգեց մ գուբէյիթ.

Կրկին կրակ լցուաւ սիրտս,
Մխաց վառուելով վառուելով
Մէջ բոցերուն գոցուաւ սիրտս
Եգաց վառուելով վառուելով:

Սօֆիլն էր կենաց պարծանքս
Զուր կորուցի աշխատանքս
Աւաղ իմ երջանիկ կեանքս
Մնաց վառուելով վառուելով:

Սմբատն եմ գրեմ նամակով,
Տօբ հայրիկս նպատակով,

Ասան Սօֆիայի կրակով,

Գնաց վառուելով վառուելով:

Այս երգը աւարտելուց յետոյ Սմբատը մատիտը հաննց գրպանից, այս երգը գրեց ե նոր հկած Ձէյթունի նամակի հետ տուեց սուրհանդակին ու մի քանի էլ ոսկի տուեց, որ այդ թղթերը անկորուստ տանի արմախիւր և յաձնէ իրան հօրը, յետոյ ինքը ձին շիտկեց դէպի Ձէյթուն, որ գնայ և տեսնի թէ այդ ստացած յուրը ուզիդ է, թէ ոչ. բայց այնպէս էր գնում ինչպէս արժիւր երկնքում: Որովհետև սար ու ձոր, քար ու թուփ նրա աչքին չէր երևում: Երբոր այն գրեւր տանող սուրհանդակը գնաց Արմաւիր և գրեւրը տուեց Սաղաթէլին, Սաղաթէլը այդ գրեւրը կարդալուց յետոյ մեծ սուգ ու կոծ արեց, բարեկամներով միասին և ասում էին, Սմբատը նորից կենդանի վերադառնալ անկարելի է. վասն դի, նրանք հասկացան, որ նա անպատճառ Սօֆիայի համար Պարսկաստան պիտի գնայ:

Այնպէս անյոյս ու անմխիթար լաց էին լինում ու սպում ինչպէս Յակովբ նահապետը Յովսէփի համար: Բայց իզուր: Թող նրանք մնան այդ տըխուր դրութեան մէջ, մենք խօսինք Սմբատի մասին: Սմբատը, այդ տեղից շարունակ դնալով քսան և հինգ օրում հասաւ Ձէյթուն, գնաց իւր աներ Տիգրանի դուռը, ձիուց իջաւ, ձին ուղարկեց ախոռը և ինքը մտաւ տուն, տեսաւ որ, ոչ Սօֆիան կայ և ոչ Տիգրանը: Վառվառէն է, որ մենակ ու տրտում նստած

է տունը, գլուխը կախ գցած, սգում ու լալում։
Սմբատը բարևեց նրան ու նստեց մօտը և հարցրաւ
ինչու ևս այդպէս տխուր։ Վառվառէն գլուխը բար-
ձրացրաւ և տեսաւ որ եկողը Սմբատն է, ունի իմ
որդեակ Սմբատ, դու ևս. ես եմ մայրիկ։ Վտովա-
ռէն Սմբատին որ տեսաւ, նորից բորբորեց՝ նորա
սիրտը, և լալիս էր անընդհատ. Սմբատը որքան որ
հարցնում էր, որ տեղեկանար գործից, նա չէր կա-
րողանում պատասխանել, և վերջ 'ի վերջոյ Սմբա-
տը հանդարտացրեց նրա լացը։ Վառվառէն պատաս-
խան չ'տալիս Սմբատը մտածեց, երևի ասաւ նա,
սա իր ազգիկը մ'ի ուրիշի է տուել, նրա համար չի
պատասխանում, իրան դաշոյնը արաւ սազ ու եր-
գեց այսպէս, որովհետև սանթուրը հետը չէր։

Մայրիկ, ինչո՞ւ ինձ կ'խաբես,
Ո՛ւր է սիրահարս ուր է,
Լալով արտասունք կ'թափես
Խելամուտ հանճարս ուր է։

Այս տունը որ ասաւ, Վառվառէն ասաւ. Սըմ-
բատ, համբլրէ, որ ես էլ եղելութիւնը քեզ նման
երգելով պատմեմ, ու ասաւ։

Չեմ ուզում բերանս բանամ
Խօսիմ դու իմ ցաւն իմանաս
Չգիտեմ ինչ պատասխան տամ.
Ցոյց տամ սրտիս սեաւն իմանաս։

Սմբատն

Ո՛ւր է իմ մեղմ ու անուշո
 Աղւոր ազանի բնրոյշո,
 Խելք ու միտքս, կեանք ու ուշո,
 Գե՛նաց մխիթարս ո՛ւր է:

Վառվառն

Չահգատէ՛ն րազարն աւիրեց
 Տիգրան կուրեցն մեռցրեց,
 Սօֆիային գերի վերցրեց,
 Քէհրան տարաւ յաւն իմանաս:

Սմբատն

Սմբատն մէկ, մինու ճարէ,
 Տիւ ու գիշեր անդադար է,
 Ոիրով հարուստ ու թանգ քարէ
 Ազնիւ ոսկի բարս ո՛ւր է:

Վառվառն

Վառվառն էմ ասեմ հաստատ
 Վշտով լի եմ, վէրքով առատ,
 Երկինք երկիր երդում հաւար
 Ուղից և իրան իմանաս:

Վառվառի ասած երգերից Սմբատն հաւնոտտո
 որ, ուղից է Տիգրանի սպանուելն և Սօֆիայի գե-
 րի տարուելն: Վառվառէին ասաւ մայրիկ, ես մինչև
 հիմայ չէի հաւատում թէ այդ բունը ուղից է իսկ
 այժմ հաւատացի ե անպատճառ պէտք է գնամ նո

բա ետևից, Վառվառէն ասաւ, որդի թէհրանն Պարսկաստանի քաղաքներիցն է, նա շատ հեռու է, մեղանից երեք ամիս պիտի ճանապարհ գնաս, որ այնտեղ հասնիս, մանաւանդ որ նորա բոյօրն էլ արիւնարբու մարդիք են, ինչպէս կ'վստահանաս նրանց մէջ ուր կոխել, կամենում ես որ, Սօֆիայի պատճառով քս անձն էլ վտանգի ենթարկել. ինձ կ'լսես չես ցնայ սիրելի, որովհետև ամեն բան Աստուծոց է կախուած, եթէ Աստուած քեզ տալու լինէր, այս բանն մեր գլխին չիր գալ, և դու այս տեղից հեռացած չէիր լինի. Սմբատն ասաւ, անհոգ եղիր դու մայրիկ, ես յոյս ունիմ առ Աստուած, որ գնամ և իմ սիրելիս բերեմ քո տխրութիւնն ուրախութեան փոխարկեմ, ես լաւ գիտեմ որ Աստուած իր խոստացածն երբէք անկատար չի թողնի. վերջապէս Վառվառէն սրբան աշխատեց չ'կարողացաւ Սմբատին համոզել:

Սմբատն իր վերջին հրաժարականն տալով ձին բերել տուեց, հեծաւ և քաղաքից դուրս գնալով բնկաւ Պարսկաստան տանոյ ճանապարհն և շտապում էր առաջ. ճանապարհին նա մտածեց որ, ինքն շատ անպատրաստ է որովհետև ոչ փող ունի և ոչ պաշար ճանապարհին, ասաւ որ այսպիսով ես ոչ մի բան չեմ կարող անել, որովհետև մարդիկ ինձ այսպէս զինուած տեսնելիս աւագակ կարծելով կարող են ինձ ամեն տեսակ չարիք հասցնել՝ աւելի լաւ կ'լինի, որ քանի քաղաքից չեմ հեռացել, դառ-

նամ զէնրհերս և ձիս ծախեմ. ինձ բաւական ճանա-
նապարածախս կ'պատրաստեմ և ինքս աղքատի
հագուստով կ'ըճանապարհորդեմ. որպէզսի մարդիկ
ինձ տեսնելիս, ոչինչ կարծիք չունենան ինձ վերայ,
այլ աւելի կարող են խղճահարւել և ողորմութիւն
տալ. Սմբատն մտածեց և այնպէս էլ արաւ, որով-
հետև իր սանթուրը մօտը չէր, գնաց սանթուր
շինողների մօտ և մի լաւ սանթուր գնեց և Աս-
տծոյ անուն յիշելով, ընկաւ ճանապարհ. քաղաքից
դուրս ելաւ և շարունակ գնում էր. Իսկ Վառվառ-
էն տեսաւ որ ինքն չ'կարողացաւ Սմբատին ար-
գելիլ ճանապարհից, գնաց Յովսէփի մօտ և ասաւ
այն նամակն որ մենք ուղարկեցինք Արմաւիր Սըմ-
բատն ստացել էր և եկաւ այստեղ, հաստատն իրա-
ցաւ և գնաց թէհրան, եթէ կարող ետ մի հնար
գտիր և նրան յետ դարձուր. որովհետև ես տակա-
ւին անփորձ մի երիտասարդ է, դուրէ գնայ և չ'ը-
կարողանայ ողջ յետ դառնալ. Յովսէփին երբ լսեց
էութիւնն, շտապեց հեծաւ ձին և մի քանի հատ
էլ տէրութեան ծառայողներից առնելով հետն զը-
նաց Սմբատի յետևից, բայց իզուր, որովհետև ար-
եղգակն մայր էր մտել, թէև Յովսէփն մի քիչ աս-
տին անդին ընկաւ, սակայն շուտով գիշերային մը-
թութիւնն ծածկեց ամեն բան. Յովսէփն տեսաւ
որ էլ ոչինչ չի երևում, տխուր, տրտում վերադար-
ձաւ քաղաք և, մտածում էր Սմբատ
պատմենք Սմբատի դէպի Թեհրան ճանապարհոր-

քրտն օր և այնքան էլ դիշեր ճանապարհ զնաց
շարունակ. և մի օր էլ Սօֆիայի սիրով մաւտան-
ջուած ցհաբով կորցրեց ճանապարհն և հեռացաւ
գէպի բարձր սարերն, որովհետև Սօֆիայի սիրով
վառուելով ոչ սար էր երևում և ոչ ձոր. երեք օր
շարունակ գնում էր առանց ճանապարհ երևեցող
դաշտերի և սարերի միջով, երրորդ օրն մի բիշ ուշ-
քի եկաւ և մտածեց տեսաւ որ ինքը դտնւում է
բոյորովին անմարդաբնակ անապատներում և մա-
ցառների ու բարայրերի մէջ. Օրը մթնել էր մէզ ու
մառախոսուցով և անձրևը հոսում էր առատ կերպով.
Մմբատն անձրևից պաշտպանուելու համար, մտաւ
բարերի խոռոջներն, գիշերային մութը պատեց նը-
րաւ. էլ ոչ սար էր երևում ոչ ձոր, և ոչ մարդ,
միայն վայրենի գազանների հօտն էր որ սարսափե-
ցնում էր Մմբատի սիրտն. Մմբատն յուսահատուած
մնացել անձայն նոտած մի քարափի ծեպում. Վեր-
ջը տեսաւ որ էլ ուրիշ հնար չ'կայ, բացի ամենա-
կարողի սղորմութիւնն խնդրելուց, վեր առաւ
սանթուրն և նուագեց մի աջամի քեարամի եղանակ.
և երգի ձեով խնդրեց Աստծոյ սղորմութիւնը:

Սրարիչ և հզօր անմահ թաւաւոր,
Հասիր, ոչ սք շունիմ օղնական, Աստուած
Ընյոյս թափառական յողնած ու մոյոր.

Խելքէ դուրս շուռ գուգամ սար ու բար, Աստուած:

Իմ շորս կողմս պատեց մէզ ու մառախուղ,
Մարդ, անասուն, թռչուն վրէս եղաւ սուղ,
Օղնէ Տէր, մի թողնէ կորչիմ կանուխ,
Ցոյց տուր այցելութեան ճանապարհ, Աստուած:

Երեք մանկունքն ազատ պահող կրակէն,
Դանիէլին առիւծնեբրի բնակէն,
Սմբատին էլ փրկէ այս նեղ վիճակէն,
Չ'մնայ բաղձանքս կիս կատար, Աստուած:

Այս երգն ատարտելուց յետոյ, արշալոյսն բացուեց, Աստծոյ ողորմութեան մէջ ու մառախուղն քաշուեց, արեգակի ճառագայթները փայլեցին սարերի կատարներին: Սմբատն ուրախութեան ժպիտն երեսին փառք տուաւ Աստծուն և դուրս ելաւ տեղից. շորս կողմն նայեց և տեսաւ որ դիմացէն մի մարդ ղէպի իրան է դալիս, ինքն էլ մի քանի քայլ առաջ գնաց, մտեցաւ և տեսաւ որ որսորդ է, որովհետեւ նրա աղեղից ճանաչեց նրա որսորդութիւնը. մարդը մտեցաւ և Սմբատին հայերէն լիզուով բարև տուաւ ու առաւ, ինչ մարդ ես և ինչ ման կ'գաս, այս անմարդաբնակ սարերը. Սմբատն առաւ, սիրելի, ես բերանացի խօսել չեմ կարող քեզ ոչ մի բան հոսկացնել, եթէ կ'բարեհաճես երգելով ու նկարագրելով կասեմ: Որսորդը տեսաւ որ սա մի երգող անձնաւորութիւն է, առաւ, հս շատ կսիրեմ երգեցողութիւն, լաւ կ'լինի որ մի բիշ երգես: Սըմ-

բատր լարեց սանթուրը և նւագեց դուրլիթ եղա-
նակով այս երգն.

Ձէյթուն քաղաքից է գալս,
Դէպի Պարսկաստան եմ գնում.
Կորցրել եմ ճանապարհս.
Ձեմ գիտէ հրման եմ գնում.

Որսորդն տեսաւ որ այդ պատանին ճանապար-
հը կորցրել է, ասաւ. սպասիր, որ ես լլ երգելով
քեզ ցոյց տամ ճանապարհը.

Որսորդ

Եղբայր, այս ամառի սար է
Դու սխալական ես գնում.
Մտածէ շուտով խելք ճարէ,
Խինդ ու խելքէ հան ես գնում.

Սմբատը

Ես գիտեմ որ մոլորել եմ,
Աշխարհից ելեր կորել եմ
Անմխիթար ցնորուել եմ
Մտքով Թէհրան եմ գնում.

Որսորդ

Պարկեշտ նորահաս պատանի
Խօսուաքքդ խելքս կ'տանի,
Այնտեղ գնալդ է ինչ բանի
Կարծեմ դու դեսպան ես գնում.

Սմբատն տեսաւ որ այս մարդն իրան դեսպան

կարծեց, ասաւ, ոչ, սիրելի. Կս դեսպան չեմ, հի-
մա լսիր որ ես բեզ ուղիղն ասեմ ու երգեց.

Մմբատն եմ պարզ ասեմ բանս,
Յայտնեմ խորհուրդ ու պայմանս,
Գերի է իմ սիրեկանս,
Ես դէպի նրան եմ գնում.

Որսորդը,

Անունս որսորդ Վահան է,
Հասկացող եմ ամեն բանէ,
Մի՛թէ սիրուհիդ Թէհրան է,
Սյդպէս վառվառման ես գնում:

Երբք վերջացնելիս որսորդը ասաւ, Կղբայր,
Ես հասկացայ որ քո սիրուհիդ Թէհրան դերի են
տարել, բայց ես ինչ կարող եմ անել, Մմբատն ա-
սաւ, քո լաւութիւնը թող միայն այսրանը լինի որ
ինձ այդ բողաքի ճանապարհը ցոյց տաս. որսորդն
չառ բարի ասաւ, բեզ կ'տանիմ և ցոյց կըտամ ու-
ղիւ ճանապարհը. որսորդն կատարեց իւր խոստու-
մը, առաւ Մմբատին և տարաւ ուղիւ Պարսկաստան
գնացող ճանապարհի վրայ և առաւ, Մմբատ ահա
այդ երկացող սարերն պարսից սահմաններնն, գը
նա, Աստուած քեզ հետ լինի, և գործիդ աջողու-
թիւն տայ. Մմբատն մնաս բարով ասաւ և գնաց.
Երեք օրից յետոյ մտաւ պարսից սահմանը, բայց
անգութ պարսիկներից թէ որքան նեղութիւն բա-
շեց, Աստուած պիտէ, որովհետև դրանք հային չէ-

ին թողնի իրանց տունն ոտք կոխելու. որա համար Սմբատն գիշեր ցերեկ դուրսն էր մնում, քտրերի տակ և փոսերի մէջ քաղցած և ծարաւ շատ անգամ. Սմբատն որ մանկութիւնից քնքուշութեամբ էր մեծացել, այդ նեղութեանց մէջ, այնպէս էր, եղել, որ, տեսնողն չէր ճանաչի թէ, սա Սմբատն է: Վերջապէս նա, անմիտ գնաց և հասաւ Թէհրան: Աստժոյ աջակցութեամբ նրան ոչ մի միտաւ չ'պատահեց, նա մտաւ քաղաք և մտածում էր ու ասում, ով բարեխնամ ու արարիչ Աստուած, քո սուրբ հրեշտակին ուղարկիր, որ վայ և ինձ առաջնորդէ մի բարի և աստուածատէր մարդու մօտ. որպէս զի ես այդ մարդու շնորհիւ կարողանամ իմ նպատակն առաջ տանել: Մտածում էր ու գնում, և յանկարծ նրա առաջ երևաց մի գեղեցկաշէն տուն Սմբատն ասաւ, հս իմ բազմն այս տան մէջ պիտի որոնեմ, կ'գնամ այս տունը, ասաւ և ինչ որ Աստուած կամեցել է ինձ թող այդ տեղը ցոյց տայ, գնաց և շիտակ մտաւ ներս, տանից մի երիտասարդ նորա առաջ եկաւ և ասաւ, բաւով դու եկար, սիրելի երգիչ, արի գնանք մեր պարոնի մօտ, նա շատ է սիրում երգեցողութիւն: Սմբատն տուաւ, ձեր պարոնը ով է, հայ է թէ պարսիկ. հայ է, ասաւ երիտասարդն, հայ է, և անունը Ղևոնդ է, նա շահի խորհրդականն է և շատ բարի մարդ է, արի գընանք. երիտասարդն տարաւ Սմբատին և ներկայացընելով Ղևոնդին, ասաւ, սարոն, ահա բեզ մի լաւ

Երգիչ եմ բերել, Ղևոնդն Սմբատին աեանելիս ա-
սաւ, ուրախ եմ, որ դու մեր տուն եկար, արի
նստի և ինձ համար մի բանի երգ ասն, որովհետև
ես շատ եմ սիրում երգեցողութիւնը: Սմբատն ու-
րախսութեամբ զոհացաւ Աստծմէն իր մտքի մէջ
փառք տալով, նրանց բարեաց և նստեց, սանթուրն
մի լաւ յարեց և նւագեց դուրէիթ եղանակով այս
երգը.

Գլխիդ մատաղ տէր իմ իշխան,
Հսէ դու իմ երգս իմացի,
Խնդրեմ եղի՛ր դու ինձ պաշտպան
Իմ ասած լուսքերն իմացի:

Ես մին ու ճար միամօր եմ,
Սրտով սուգ և սեաւոր եմ,
Մանկութիւնից վիրաւոր եմ,
Թէ բժիշկ ես վերքս իմացի:

Մնացել եմ մօրմորալով,
Քաղաքէ քաղաք ման գալով,
Ես Սմբատն եմ Սաղաթէլով,
Արմաւիր աշխարքս իմացի:

Այս երգն որ ասաւ, Ղևոնդն իմացաւ որ այս
մարդն մի ցաւ ունի, բայց ինչպէս անէ, որ ստոյ-
գըն իմանայ, ասաւ Սմբատ ջան, ես այդ Արմաւիր
քաղաքը լաւ գիտեմ, հիմա այդ քաղաքին Երևան
են ասում. Սմբատն ասաւ այս ուղիով է ասածդ

պարոն: Ղևոնդն ասաւ Սմբատ, գիտեմ մի բան կայ
սրտումդ ծածկուած. ուղիղն առա տեսնիմ ինչ է
քո ման գայածդ. Սմբատն ասաւ, լսիր երգելով
յայտնեմ իմ ցաւս, որի համար է իմ ման գալս, ու
երգեց մի սոչամայ երգ:

Եթէ կուզես, փարատես ցաւս,
Պարտէզից կարաւս տարան շուռ կուգամ,
Խահական խոնաւս սիրամարգ հաւս,
Թարւէզ, Թօխատ, Սալլ ու Իրան շուռ կուգամ:

Այս տունը որ ասաւ, Ղևոնդն ասաւ, այդ ինչ
բան ես առում, եթէ մի բան ունիս, պարզապէս
ասա՛, մի վախենայ, ես էլ ... պէս քրիստոնայ եմ,
անպատճառ կաշխատինք քո գործի մասին մի հնար
գտնելու, որովհետեւ ես շահի խորհրդականն եմ, և
կարող եմ բեղ ամեն կերպ պաշտպանել, դու ուղիղ
ինչ որ գազտնիրք ունիս ինձ խոստովանի: Սմբատն
ասաւ մտքումը, օրհնեալ է Աստուած, գործս պիտի
աջողուի. որովհետեւ ես Աստծմէն խնդրեցի, թէ
այս քաղաքում ծանօթ և պաշտպան չունիմ, ո՞վ
տէր դու ինձ մի բարի մարդաու տուն առաջնորդիր,
որ նա ինձ պաշտպանէ, և ահա ինչպէս երևում է,
Աստծմէն է, որ այս մարդն ինձ պիտի պաշտպան
հանդիսանայ: Այսպէս մտածեց և վերջն պարզապէս
ասաւ, խնամածու պաշտպան, լսիր խնդրեմ, բեզ ու-
ղիղն ասեմ, նրանից յետոյ ինչպէս որ քո կամեքն
է, այնպէս արա՛, որովհետեւ այստեղ միայն ինձ խը-

Նամածու և պաշտպան բեզ եմ ճանաչել ինչ որ
ինձ արժանն է, այնպէս արէք, և ստաւ միւս, տունը.

Հուռ եկայ գիւղանը ամեն սահմանը
Չիրաղ, Իսպանը, Խոյ, Նախշիվանը
Չը գտայ նշանը ողջ Պարսկաստանը
Ես իմ սիրեկանն Քէհրան շուռ կուզամ:

Տեսնո՞ր, ապրիս որդի, ստաւ Ղևոնդն, չիմայ
հասկացայ որ սիրահար ունիս և նրան կ'փնդրես,
բայց անուռն ստա տեսնեմ թէ այստեղ է այդ ա-
նուան տէրը թէ ոչ: Սմբատն ստաւ երրորդ տունը:

Սմբատն ինչ անի, որ ճար կանի
Ոք շունիմ հոգ տանի, հնար գտանի,
Սօֆիէն Սուլէյմանի ձեռքիցն հանի,
Որ աչքս տեսանի նորան շուռ կուզամ:

Այս երգն աւարտելուց յետոյ Ղևոնդն ստաւ,
այդ քո իսսածդ Սօֆիէն այստեղ շահագատի ձեռքն
է, բայց ինչպէս հաւատամ թէ նա քո սիրահարն
է: Սմբատն Սօֆիայի մատանին ցոյց տալով առաւ,
պարոն խորհրդական, ահա այս է նրա նշանը, Ղև-
ոնդն կարդաց մատանու գիրն և նրանով հաւա-
տաց, որ ուղիղ է Սմբատի ստածներն: Միայն շատ
զժլար է հաւատալ որ, Սօֆիան շահագատին թող-
նի և քեզ հետ գայ, ուրեմն սպասիր Սմբատ, տես-
նենք ինչ միջոցաւ կարողանանք Սօֆիայի միտքն
իմանալ: Այդ գիշեր Սմբատին իրան տունն պահեց

առաւօտ որ յուսացաւ, ասան. Սմբատ, հս մի բան
 եմ մտածել. շահգատա Սուլէյմանին մեզ մօտիկ մի
 ծաղկաւէտ մի պարտէզ կայ, ամեն մի ուրբաթ օր
 Սօֆիլն պալիս է այդ պարտէզն դրօսնելու, որով-
 հետև այդ օրն նրանց կիւրակին է, որ «ջումա» են
 ասում. ուրեմն վազն էլ չէ. միւս օրը ուրբաթ է,
 նա անպատճառ կ'գայ պարտէզ, և նա սովորութիւն
 ունի ամեն մի գալիս իմ կին Չուշանիկի հետ խօ-
 սակցում է և մխիթարում, այս անգամ որ եկաւ.
 դու էլ Չուշանիկի հետ գնա և այնտէղ մի կերպ,
 մի սրել բան կիմանաս նրա կամքից. Վերջապէս
 եկաւ ուրբաթ օրն և առաւօտեան երբ նրանք Ղևոր-
 դի հետ խօսակցում էին, մին էլ մի աղջիկ ներս
 մտաւ և Չուշանիկն ասաւ, Սօֆիան ասաւ որ թող
 ինքն գնայ մեր պարտէզ, հս էլ հիմայ կ'գամ, այդ
 աղջիկն Սօֆիայի նաժիշտներէից էր, երբ աղջիկն
 գնաց Չուշանիկի մօտից, Ղևորդն ասաւ Չուշանիկ,
 Սմբատին հետդ տար պարտէզ. երբ այնտեղ Սօֆի-
 ան Սմբատին տեսաւ և ուրախացաւ, իմացիր որ,
 նա կամենում է Սմբատին գալ. իսկ երբ տեսար
 որ, տեսաւ և ոչինչ նշանակութիւն չ'տուեց, իմացիր
 որ, նա չի ուզում շահգատից հեռանալ, այն ժամա-
 մանակ թող Սմբատն հեռանայ ձեր մօտից. վասնզի
 նա կարող է շահգատին իմաց տալ և Սմբատին
 մնասել: Չուշանիկն և Սմբատն գնացին պարտէզ և
 Սմբատն սանթուրը հետը տարաւ, նրանք գնացին
 և տեսան որ: դեռ Սօֆիան չի եկել. նստան մի

ժառի շուարի տակ, նրանք սպասեցին մի կէս ժա-
նաշափ, երբ տեսան Սօֆիան ուշանում է, Սմբատն
չ'կարողացաւ լուռ համբերել, վեր առաւ սանթուրն
և երգեց դուբէյիդ եղանակով այս երգը.

Քանի մէկ քունք համբերեմ,
Ո՛ւր է Սօֆիէս ինչու չի գայ,
Ո՛նց դիմանամ, ինչպէս ներեմ.
Ղառվում եմ ես, ինչո՞ւ չի գայ.

Այս տունը որ ասաւ, Ջուշանիկն ասաւ, ո՛ւհ
այդ ինչ ես ասում, 'ի սէր Աստծոյ, այստեղ Սօֆի-
այի անունն մի տայ, շահգատէն մինչև հիմայ մե-
զանից լաւ բարեկամ չի ունեցել, եթէ այդպէս մի
բան մեր կողմից իմացաւ, մեզ ամբողջ գերդաս-
տանով կ'արտոբէ այստեղից: Սմբատն ասաւ. ուղիղ
որ տիրուհի, ես յիմարուծիւն արի, միայն՝ ներեցէք
այս անգամին, և մի քիչ ծխախոտ ծխացնելուց յե-
տոյ երգեց երկրորդ տունը.

Հերիք մնամ վախվխելով
Այսպէս ծխախոտ ծխելով
Սուրբ ոտքն երեսիս կոխելով
Մէկ դէպի տես ինչո՞ւ չի գայ.

Այս տան համար Ջուշանիկն ոչինչ չասաւ, և
Սմբատն երգեց երկրորդ տունը.

Երբ պիտի գայ հոգւոյս դուռն,
Զովանայ սրտիս մումուռն

Ապերախտ երախտամոռը
Սմբատին տես ինչո՞ւ չի դայ:

Այս երգը դեռ չաւարտած Սօֆիան իւր տասնեակսը նաժիշտներով ներս մտաւ. բայց երբ Հուշանիկին և Սմբատին տեսաւ, լիզուն կծեց: և խկոյն նաժիշտներից ծածկելու համար մի խոժոռ հայացք ձգելով Հուշանիկի և Սմբատի վերայ յետ դարձաւ, որպէս թէ շահգատին իմաց տալու ձեականութեամբ: Այս որ տեսան Հուշանիկը և Սմբատը միմեանց հրեսի մտիկ արին և Սմբատը մի խօս հառաչանք բաշելով, Սանթուրը առաւ և ըսկսեց երգել, իր գլխից ձեռք վեր առած:

Սոսկալի հրեաց դիմացէ գիմաց,
Կրակ լցրեց վրէս, լաթերս վառուաւ,
Միս ու իւղս հալուեց, ոսկորս դսգաց,
Գլխէս մինչև ոտաց թաթերս վառուաւ:

Հուշանիկն ասաւ, վեր ել այստեղից կորինք
բանի որ մեզ չին տեսել. Սմբատն ասաւ մի քիչ
սպասէ Տիրուհի.

Այնժամ որ նազելիս ծուռ նայեց գնաց
Գետինը թունդ առաւ երկինք որոտաց,
Ամպոց ճայթումիցը կայծեր թափաւ ցած,
Դաշտ, լիրինք բռնկուած խաթերս վառուաւ
Հուշանիկն ասաւ, Սմբատ բաւական է յիմարութիւն անես, ելի գնանք. շահգատէն որ իմացու

մեկբութիւնը ազգով ընտելիւց կաննէ։ Սմբատը առաւ մայր Տիրուհի, կ'ընդգրեմ, մի երկու բոսպէ էլ սպասիր, երբորդ տունն էլ ասեմ, նրանից յետոյ ինչ լինում է թող լինի, և սկսեց երբորդ տունը .

Սմբատն հմ ինչ կանեմ երկիւղն ու ահը,
Այսուհետե ինձ կ'սպառկանէ մահը,
Սրճիս մէջք մտաւ հուր վառուած ջահը
Բոլոր սիրտ ու թոքս լեարդեբք վառուաւ :

Այս երգը աւարտելուց յետոյ Զուշանիկը Սրմբատի վերայ նեղանալով, առաւ նրան և դնաց իրանց տուն, և բոլոր եղելութիւնը սկսեց պատմել իւր այր Ղեւոնդին . խօսքը դեռ շէր վերջացրել, Սօֆիայի նաժիշներնց մէկը ներս մտաւ նրանց մօտ և առաւ, միք վախենայ Սոֆիայի արարից, նա մի ձեռքանութիւն էր որ ցոյց տուաւ, նաժիշաները չկարծիրաւորուելու համար. նա ինձ ուղարկեց ձեզ մօտ որ միամիտ ու հանգիստ լինիր :

Նա առում է, թող ինձանից ապահով լինին, եթէ շահատէն ինձ քառասուն կտոր անէ դարձեալ մի կտորս նրան շեմ հասցնէ. միայն թող պ. Ղեւոնդն և Զուշանիկ Տիրուհին իմ մասին թող մըտածեն, և Սմբատի հետ ինձ ազատելու ճանապարհը գտնեն : Սօֆիէն ինձ ուղարկեց որ դուք չ'կարծէք թէ Սօֆիէն շահատին իմաց կ'տայ :

Սօֆիայի ուղարկած տեղեկութիւնը որ ստացան Ղեւոնդն ու Զուշանիկը ասացին Սմբատին. սօ-

բանից յիտոյ անհոգ եղլիր, մենք ամեն ջանք պիտի գործ դնենք Սօֆիային այդ հրէշի ձեռքից ազատելու և բեզ յանձնելու, նա արդէն լաւ է պատրաստել իւր ծրագիրը և ահա ինն ամիս է որ Սօֆիան այստեղ է. իւր իմաստուն հանճարով նրանց համոզել և իրանից հեռու պահել, և ինքը աւանձին մաքուր սննհակում ապրում է փառաւորապէս. մենք արդէն նրանց տան խորհրդականն ենք, ամեն բան մեզ յայտնի է, Սօֆիայի թելադրութեամբ արդէն նրա բոլոր ծառայողները հայեր են. Ղեոնդն ասաւ, Սմբատ, շահադալն շատ է սիրում երգեցողութիւն մանաւանդ որ դու հայ ես և Սօֆիան բո երգերդ հասկանալու համար, ես քեզ կ'իերկայայտացնեմ շահատին, և նա Սօֆիայից թելադրուած կը ընդունէ բեզ իւր տան մէջ, երգելու համար, դրանով կ'կարողանանք մեր նպատակին հասնել, բայց ի հարկէ դու պիտի մի առ ժամանակ նրան հաւատարմութիւն ցոյց տաս, որպէս զի նա բեզ վրայ ոչ մի կարծիք չունենայ և աշխատիր այնտեղ երգելիդ մէջ ոչ մի դիպչող խօսք, առաջ չ'բերես, և այդպէս ամեն մի կողմից զգուշանալով թռաւ Սմբատին և զնացին միասին շահատի պալատը:

Ներս մտան բարեկեցին նրանց և նստան, Ղեոնդն ասաւ շահատան, ահա բեզ մի լաւ երգիչ եմ բերել, եթէ կ'հաւանես, սորտի միջոտ պալատումդ պահիր և նա թող բեզ համար երգէ որքան որ կամենաս. Շահատուն Սմբատի պիղեցիկ տեսքը և շար-

ժուճք տեսնելիս հաւանեցաւ նրան: Որովհետեւ այն-
թանկագին ահու մատանին որ Սմբաաի մատին
էր, այնպէս զօրութիւն ունէր որ ամեն մարդ Սըմ-
բատին տեսնելիս, նրան կարեկցութիւն էր յայտնուճ
և նրա բարին կամենալ էր ուզուճ: Չահգատուն հար-
ցրաւ անուճդ ինչ է աշըդ: Սմբատն ասաւ ձեռ տէ-
րութեան ծառայ Սմբատ է անունս. շահգաղէն ա-
սաւ զեալ կանմգա օթուր. շալ տեսնիմ, սրով-
հետեւ հայոց յեզին քիշ ծանօթ լինելով այսպէս
բեարտիկայ խօսեցաւ: Սմբատն յարգանք ցոյց տա-
լով էլ չնստեց նորա մօտ, այլ ոտքի վրայ կանգնաճ
նուագեց մի բաղալի քէշիշ օղլի, և երգեց:

Ինչպէս համարձակուեմ կուշտըդ նստելու
Պէտրէ կանգնեմ դէմդ ծառայ շահգագա
Մխտր սնէի օտար երկիր վնալու
Համբաւդ լսեցի դառայ շահգագա:

Երբ որ Սմբատաւը այս տունը երգեց, շահգատէն
ասաւ, ջան դարտաշ, շիրին յեզուիդ դուրբան օլիմ,
ասաճ գէօրիմ եսխշիլարգան:

Ես քո սիրոյդ բոլոր աշխարհ պտտայ
Պտուտելով եկայ Թէհրան ներս մտայ
Գոհանամ Սստուճմէ որ այստեղ գտայ
Երբոր տեսայ փափագս առայ շահգագա:

Չահգատէն զարմացել էր Սմբատի բաղցր ձայ-
նի և յեզուի վերայ:

Մմբատն հմ չ'կարծեմ հոգեղէն ես դուն
Հրեշտակ ես կ'րայիս վերայ ամպերուն,
Քո մօտդ շի լինի համարձակութիւն,
Մօմի նման հալւայ, վառւայ շահգատայ:

Երբը աւարտելուց յետոյ, շահգատէն Մմբատի
ձեռքից բռնեց իւր մօտ նստացրեց մի քանի թէյ
խմացրեց և ասաւ, աշրդ ես մի սաւգիւլ ունիմ, որը
շատ ուղազ տեղից եմ բերէ, ազեարքի իմ սաւ-
գիւլիս հրգսով ուրախացուցիր ևս քեզ շօգ բան փէշ-
քեաշ կուտամ, և Ղեոնդից շատ շնորհակալ կ'լինիմ,
վեր կաց գնանք որ իմ Սօֆիայիս մօտ հրգ ասես:
Ելան և գնացին գէպի Սօֆիայի բնակավայրը. սեն-
եակի դրան որ մօտեցան շահգատէն դռնապանին
ասաւ պէթ իջարի, խանուսին առա քի, շահգատէն
քեզ մի լաւ աշուղ է բերել, ամբը վար իշարի գա
լու թէ ոչ, Դռնապանն ներս գնաց, Սօֆիային որ
յայտնեց, նա իսկոյն հասկացաւ որ աշրդը Մմբա-
տըն կլինի անպատճառ: Իրաւունք է թող գան ա-
սաւ, նրանք ներս մտան Սօֆիայի սենեակին: Բայց
սենեակի դարդն ու գարդարանքն անպատմելի է,
որովհետև նորա պատերը կազմւած էին ապակուց,
ներս մտնողն հիանում էր և որ կողմն որ նայում
էր, իւր պատկերն էր տեսնում, նորա միջի զար-
դարանքներն պասրկական ճաշակով էին դառաւոր-
ւած և սենեակն լի էր անուշահոտ բուրմունքներով
վերջապէս ոչ մի պակասութիւն չէիր գտնի այդ
սենեակում. նրանք նստեցան. շահգատէն ասաւ, տ-

չըզ, գէօթիրսան իմ սաւղիւլիս նասըլ վիւզալըր-
պէտք է նրան գէօրա գօվասանք տաս: Սմբատն
ասաւ բաշիւստայ, և սանթուրն լարեց նւագեց մի
աջամի մօխամբազ և Սօֆիային դովեց այսպէս.

Սմբատն

Ով լուսոյ աստղ լուսարեբ, լոյս առաւօտեան նա-
զելի,

Պայծառ անունդ խօսում է բարբ Պարսկաստան
նազելի,

Ճիշտ մի հրեղէն հիւրի ևս դու եղեմական նազելի
Երկնային հրեշտակներից ունիս սլահապան նազելի.
Սմեն ժամ քեզ հետ միասին կուրախանան ցնծան
նազելի.

Զր կարծեմ թէ մի հսկեղէն գտնուի քո նմանակդ,
Չատ ու չատ տեղեր ման եկայ, մի տեղ չտեսայ
տեսակդ,

Իրան, Թուրան Չամ, Սլեվան երբէք չկայ օրինակդ,
Զին, Դարբանդ, Հինդ ու Երեան քաշում են սիրոյ
փափազդ

Ոչ Հայաստան կայ քեզի պէս. ոչ էլ Վրաստան,
նազելի.

Գեղեցկութեան կողմանից ոչ ոք քեզ նման չի լինի.
Քո երեսիդ պէս լուսատու լուսինն էլ այնքան չի
լինի.

Միմիայն արևն է քեզ պէս, քեզնից գովական չի
լինի,
Ով որ քեզ տեսնի ողջ մնայ, նա հոգի կենդան չի
լինի,
Ուրեմն դու ես մարդկային հոգւոց հոգեհան նազելի:
Չէ լսուած, չէ իմացուած և չէ տեսնուած քեզի պէս
Մինչև այսօր մի մահկանացու դեռ չի ստեղծուած
քեզի պէս.
Որ ոչ նոր աշխարհ է գալու ոչ էլ է եկած քեզի
պէս,
Վերջապէս էլ ինչ տեսմ չկայ արարած քեզի պէս,
Բա Սմբատն ինչպէս կարենայ տայ քեզ գովասանք
նազելի:

Չահղատուն այս գովասանքին շատ հաւանեց և
իր մէջքի ոսկէ գօտին արձակելով կայեց Սմբատի
մէջքն, և ասաւ շատ սաղ էլեխս աշըղ, հս էլ քեզ,
ձեռնաթող շեմ անի, բանի որ կենդանի եմ. Սօ-
ֆիէն էլ իւր կողմից մի ոսկի ընծայեց Սմատին,
իբրև նա աշըղ և ինքն թաւուհի և առաւ շահղա-
տէ, բաւական ժամանակ է որ ես այստեղ եմ, ոչ
մի երգիչ ինձ այսպէս չէր կարողացել ուրախացնել
ինչպէս այս երգիչն. շահղատուն ասաւ, անհոգ եղիր
Սօֆիա, այդ աշըղն կ'յանձնեմ քո իրաւասութեան
ինչքան որ կամենաս մօտդ պահիր, բայց երբեմն
ինձ մօտ էլ ուղարկիր երգելու. շատ լաւ ասաւ
Սօֆիան, որովհետև մեր պայմանաժամն էլ արդէն

մօտ է որ մինք մեր նպատակին հասնինք, հարստ-
 նիքի համար, էլ սրանից լաւ երգիչ նրտեղից պի-
 տի ճարենք: Չահգատէն հաջուծիւն տուեց Սօֆիա-
 յի կամքին: Սմբատին թողեց նորա մօտ և ինքը
 գնաց իւր պալատն: Երբոր շահգատէն հեռացաւ
 նրանց մօտից, Սօֆիէն իր նաժիշտներին առաւ, աղ-
 ջիկներ, շէ որ իմ բոլոր գազտնիքներն ձեզ յայտնի
 է. եկէք ինձ. ուզիզն խոստովանէք, թէ ամեն մի
 բանի մէջ, մինչի վերջն ինձ հաւատարիմ պիտի
 մնաք, նրանք հրդուժով հաստատեցին իրանց խոս-
 տումը, Սօֆիէն ասաւ, աշխարհ որ իրարանցում
 լինի և շահգատէն ինձ հազար կտոր անէ թէ արի
 հաւատդ ուրացիր, ես մինչև իմ վերջին շունչն պի-
 տի դիմադրեմ և իմ հաւատիս համար զոհուելով
 Սմբատից չպիտի ձեռք բաշիմ. 'ի վերջոյ նաժիշտ-
 ներին համոզել և խրատելուց յետոյ նրանց ասաւ,
 մի քիչ առանձնացէք. նրանք գեացին և Սմբատն
 ու Սօֆիէն երկար ժամանակ առանձնուծեան մէջ
 լալով համբուրվում էին. երկու միմեանց սիրով
 վառուած սրտերն էլ շէին կամենում յետ բաշուել
 միմեանց փաթաթուելու և համբուրելուց, վերջա-
 պէս նրանք իրանց սիրոյ կարօտն յագեցնելուց յե-
 ստոյ, նստան իրար մօտ և սկսեցին իրանց ազա-
 տուծեան ճանապարհի վերայ մտածել. նրանք իրա-
 բու յոյս տալով և իրանց յոյսն Աստծոյ վերայ գը-
 նելով ամենակարողի ողորմութիւնն էին խնդրում:
 Յանկարծ Սմբատի միտքն եկաւ այն խօսքն, որ

Սօֆիան ասաւ շահգատին թէ, արդէն երեք ամիս է մնացել ու բմեր պայմանաժամն լրանայ: Հարցրեց Սմբատն թէ, ինչ պայման կայ ձեր մէջ. Սօֆիան ասաւ իմ սիրելի Սմբատ, որովհետև Աստուած գիտէր որ իմ միտքն իւր վրայ հաստատ է, նրա համար ինձ կարողութիւն տուաւ, որ ես այս պայմանաւ նրան խաբել եմ մինչև հիմա: Ինձ որ նոր բերին այստեղ, արդէն յանձնուեցայ շահգատին, նա կամենում էր ինձ կին դարձնել, բայց ես տիրոջ մէն սովորած առի նրան. շահգատն, գիտեալ ինչ կայ, ասաւ ինչ է, ես առի որ, իմ ծնողներն երկար ժամանակ անդաւակ են եղել և միշտ ազօթել են Աստուծուն որ իրանց զաւակ տայ և Աստուած լսել է իմ ծնողաց ազօթքն և երանց տուել է մի աղջիկ զաւակ, որ ես եմ. բայց իւր հրեշտակի միջոցաւ նա յայտնել է իմ ծնողներին հետեալ գաղտնիքը, այն է որ, պէտք է ասելէ, երբ ձեր զաւակը կ'մեծանայ և երան կ'առնուանայնէք, պէտք է նա իւր նշանուած օրից մինչ մի տարի յրանայը անարատ կոյն մնայ, որպէս զի նորա կեանքը երկար լինի. եթէ չէր պահէ այս պատուէրը, նա շուտով կ'մահանայ և դուք դարձեալ անզաւակ կ'մնար:

Ես շահգատին խաբել եմ դրանով այս ինն ամիս է և մի տարին լրանալու համար երեք ամիս է մնացել, որովհետև ես գիտէի որ, դու իմ յետևից կգաս: Ուրեմն եթէ մի հնար ունիս արա, եթէ ոչ, պայմանաժամը որ լրացաւ, էլ անկարող կ'լինենք նրա

ձեռքից ազատուելի՛ Սմբատը սրտից մի խոր հառա-
 շանք հանելով ասաւ՝ մի յուսահատուիր սիրելի, թէև
 հիմայ այս բանը մեր մտքով անկարելի է թուում-
 բայց Աստուծոյ կողմից հնարաւոր է, ուրեմն գործը
 այնպէս անելու է, ոչոք չ'կարծիրաւորի, գուցէ պա-
 հապանները կ'նկատեն մեր արարքը և գործը կը վա-
 տանայ՝ Սմբատն ելաւ և գնաց շահգատի մօտ. այն-
 տեղ էլ մի քիչ հրգեց. գիշերը մնաց նրա մօտ և
 առաւօտը շահգատէն նորից զըրկեց Սօֆիայի մօտ,
 վերջապէս մի բանի օրում Սմստը իւր իմաստու-
 թեամբ բոլոր պայատականների ուշքը գրաւեց, նը-
 բանց մէջիտները գնում և գուռանից բարոզներ էր
 խօսում. երբ Սօֆիայի մօտն էր գալիս, աւետարա-
 նի խօսքերով նրան խրախուսում ու սիրտ էր տա-
 լիս. և շարունակ Աստծուն ազօթում էին իրանց
 ազատութեան համար. Չահգատէն Սօֆիայից գատ-
 իններ հատ կին ևս ունէր. շահգատէն մի սովորու-
 թիւն էլ ունէր. գիշերները որ կնոջ մօտ որ բնած
 լինէր, պիտի առաւօտը լողանար և այն կնոջ հետ
 ձի նստած պտտէր բաղաբում. Սմբատին էր յաճ-
 նուած ամբողջ ձիապանների իրաւունքը սրա իրա-
 ւամբ կ'բերէին և կ'տանէին ձիանները՝

Սմբատի այստեղ գալուց անցաւ երկու ամիս
 ու կէս, բայց այնքան ժամանակում չէր կարողա-
 նում մի յարմար միջոց ձեռք գցել, որ Սօֆիային
 տանէր։ Մի օր էլ հրբ շահգատէն օրսից վերադար-
 ձաւ տուն, ձին տուաւ Սմբատին ձիապաններին

յանձնելու և ասաւ Կնա՝ Սօֆիային երգով ուրախացրու որ այս Կիւզեր յոգնած եմ և կամենում եմ հանգստանալ։ Սմբատը ձին տուաւ ձիապանին. և ինքը սանթուրը առաւ Կնաց Սօֆիայի մօտ մի քիչ երգեց, Սօֆիան իր նաժիշտներին աչքով արաւ և նրանք հեռացան. առանձին մնալով Սօֆիան լալով ասաւ, ինչ էս անում Սմբատ ահա՛ մօտեցաւ և տասնուհինգ օր մնաց որ պայմաններս լրանայ, իսկ դու ոչինչ չես կարացէ անել։ Սմբատն ասաւ, ամեն բան Աստուծոյ է կախուած, արի աղօթենք, թերևս մի բան ցոյց տայ մեզ։ Նրանք ծնկաչոք երկու ժամուայ շափ աղօթեցին. Սմբատն ասաւ. մի քիչ սպասիր էս դուրս գնամ տեսնեմ ինչ կայ, դուրս Կնաց և տեսաւ որ դռան պահապանները քնած են յետ դարձաւ Սօֆիայի մօտ և ասաւ, Սօֆիա, Աստուած մէջ աղատելու պատրաստութիւն տեսել է, դրան պահապանների շորսն էլ քնել են ինչպէս անենք. Սօֆիան ասաւ, սրովհետև ձի բերելում բեղ վրայ կարծիր չ'կայ, զնայ աստուծոյ և երկու ձի պատրաստիր. իսկ ինձ մօտ շահգառէն երկու ձեռք լաւ հալուստ ունի պահ տուած, և երկու ձեռք զէնք, կ'հագնենք այդ հագուստները, և կ'զինուենք զէնքերով, Աստուծոյ անունը կ'յիշենք և կ'հեռանանք այս տեղից, Սօֆիայի տուած հրահանգը լսեց Սըմբատը, շտապեց աստուծոյ երկու լաւ նժոյգ դուրս բերեց, և երկուսն էլ լաւ զինուած հրեսները աղօթարան դարձրած խաչակնքեցին իրանց. հեծան

Նժոյգները և հեռացան տանից, բայց որովհետև քա-
ղարին անձանօթ էին, որքան պտըտուեցան եկան
դարձեալ շահգատի դրան առաջ, հրեք անդամայ-
պէս գնացին շուռ գալով չ'կարողացան ճանապարհ
գտնել որովհետև ձիերը այդ դուռը գալու սովոր էին
և եկան այդ դուռը, Հաւախօս եղաւ. դրանք մտը-
րուած չ'գիտէին իսչ անէին, յաց եղան և Աստուած
ապաւինելով վերջին անգամ գնացին, Տիրոջ աջակ-
ցութեամբ մի ճանապարհ բացուեց նրանց առաջ և
այդ ճանապարհով դուրս եկան քաղարից և հեռա-
ցան. մինչև լոյսը բացուելը բաւական ճանապարհ
գնացին. երբոր արեղակը դիպաւ Սմբատն ասաւ,
արի իջնենք ձիերիցս և մենք էլ հանգստանանք
որովհետև ամբողջ գիշերը չէին քնել: Սօֆիան աս-
աւ, սիրելի շտապիր առաջ գնանք որ հիմա սլար-
սից որդիքը ամբողջ զօրախմբով մեր յետևից կ'գան
Սմբատն ասաւ, անհոգ եղիք Սօֆիա, թէկուզ աշ-
խարհ թափի և թեզ իմ ձեռքից խլի անկարելի է:
Թող դրանք այդտեղ մի քիչ հանգստանան, մենք
ընթերցողին տանենք Թէհրան շտհատի պալատը:
Երբ որ լուսացաւ շահգատէն զարթնեց ընից և ու-
րախանոււմ էր մտքով թէ հարսանիքիս օրերը մօ-
տեցան յանկարծ Սմբատը միտքն եկաւ և մարդ ու-
ղարկեց որ նրան բերեն և հրգել տան, գնացին և
տեսան որ, ոչ Սմբատ կայ և ոչ Սօֆիէն, պահա-
պաններն էլ մնացել են շուարած, գնացին և շահ-
գատին պատմեցին անցքը, նրա ուրախութիւնը

տրտմութեան փոխուելոյ, նրա խելքը գլխից թռաւ
 և չէր իմանում ինչ տնէր, վերջապէս հրամայեց հա-
 զար ձիաւոր զօրք պատրաստելու, ինքը հեծաւ ձին
 և զօրքը առած ելաւ քաղաքից դուրս, բայց չ'գի-
 տէր որ ճանապարհով գնալը:

Մի առ ժամանակ շուռ գալով մի ճանապարհի
 վրայ ձիու հետք գտնն և այդ հետքով առաջ գը-
 նացին, մինչի կլ.ս օր հասան Սմբատի յեանից
 երբ՝ Սմբատը տեսաւ որ նրանք հկան Սօֆիային
 ասաւ, Սօֆիան, ահա անհաւատ պաղանր հկաւ,
 պէտքէ պատրաստուել, բայց չ'վախեանաս: Ասաւ և
 հեծաւ ձին զինուած ելաւ շահագառի գլխաց և ըս-
 կսեց ձի խաղացնել: Չահագառէն որ տեսաւ Սմբա-
 տին կէսը հայերէն կէսը պարսկերէն խօսելով ա-
 սում էր: «Բիճ քէօփէյ օղլի բիճ. զիւնհա մանմ
 աշըմնանան պարա պեայպըր, դու ինչ ջուռիաթ ու-
 նիս, որ իմ սաւկիւլս տանիս» այսպէս վրդովուած
 խօսում ու անարգում էր Սմբատին: Սմբատն ասաւ
 ներքի թագաւորի որդի. որովհետև բո աղ ու հացդ
 կերել եմ. դրա համար քեզ կ'խնայեմ, մի քիչ համ-
 բերէ, քեզ մի քանի խօսք ունիմ ասելու ասեմ,
 յետոյ կամքը քոնս է, ինչպէս կ'կամենաս այնպէս
 կ'վարուիմ: Չահագառէն ձիու սանձը քաշելով ասաւ,
 այ մուխաննաթ ուշաղի, նա բիպիաջաքոան թէչլի-
 կինան դէ բի, այսօր սանըն վերջի գիւնն դըր-
 Սմբատն սանթուրն առաւ և մի լաւ քլօռ ողլու եղա-
 նակ նուագեց, և ասաւ, թէ հայերէն ասեմ սա չի

Վարող հասկանալ, ուրեմն լաւ է տաճկերէն ասել
որ նա բոլորն էլ հասկանալ: Հիմա տեսնենք Սմբատը
ինչ կասէ և շահագատէն ինչ կ'պատասխանէ:

Ս մ ք ա տ ն

Չահմ մուրվաթ էլլայ էօղլուրմէ հարաս,
Ամանգը շավքեաթլմ, աման գիւնի դըր.
Իմտագրմա գեալդըն շէր շարիֆի էլլազ,
Մատաթ հրըշմայ գիւմէն գիւնի դըր:

Այս տունն ասելիս, շահագատէն բարկանալով
ասաւ, էյրմանի օղլի էյրմանի, սան էյա բիւլբիւսանքի
սանց դալաջադսըն. այշէն սրա ընէրմդըր, և նա էլ
սկսեց ասիլ այսպէս:

Շ ա հ գ ա դ է ն

Հալա բիրջա սաբրէթ շիմմի փարգասի.
Նազն բիլքի բէօգիւն համան գիւն դըր,
Վախթիրեան բուլ զինան բաշն շարասի,
Ղոյին թէք քեասարամ դուրբան գիւնի դըր:

Ս մ ք ա տ ն

Նէյ հայ հոյ դըր բիւմէմ, նէյ հալլա հալլահ,
Մէնէ բէօմէկ օլսուն օլ ազիմ ուլլահ,
Չեարեարամ զլըջի բեասարամ բեալլահ.
Ղտրուզա տէօդարիմ բոստան գիւնի դըր:

Շ ա հ գ ա տ է ն

Թալատըմ օլքեալար շափդըմ ալասի,
Երախըմ չհարլարըր բուռջու դալասի

Գլօ գիւշտա նէյ զեազար տաշան բալասի
Ղաւզա աղբլանգայ ասլան գիւնի գրբ:

Ս մ ք ա տ ն

Բալայ Սմբատ աղեար գիրսայ Մլյտանայ,
Տաղըզըր առքեարն հարի բիրեանայ,
Վարվալա սալարլմ արագիստանայ,
Ալամայ սէօյնսըն դէստէն գիւնիարբ:

Շ ա հ զ ա տ է ն

Իւֆիւրէսամ շրա բիմին սէօնէր սան.
Բիր սիլլէ վուրանգայ քիւլէ պէօնէսն,
Ղահգատէյի տր մլյտանտա թանալսըն,
Գէօրսէ. ժայտ առիլէ, շան գիւնի դըր:

Երգեցողութիւնը որ վերջացաւ, Սմբատն իմացաւ, որ այդ արիւնարբուն իրանից ձեռք քաշելու չէ, ձիու վրայից կռացաւ և պետնից մի քիչ հող առաւ զցեց բերանը և ասաւ, նվ Տէր դու այս հողը ինձ համար հաղորդութիւն համարես և ինձ շնորհական լինիս, ասաւ և սուրբ մերկացնելով ընկաւ պարսից զօրքի մէջ աջ ու ձախ հարուածելով անցաւ զօրքի միւս կողմը, և այնտեղից դարձեալ նմանապէս որքան որ ինքն էր ջարդում համարեայ մի այնքան էլ ձին էր իր ռաքերի տակ տրոյում: Եթէ յանկարծ Սմբատին շրջապատուած կամենում էին սրախողող անել նրա իմաստուն և ժոյզը այնպէս էր տակից դուրս թռչում, որ նրանց սրերը միմեանց էին սպանում: Խէ ձին և թէ Սմբատը

պատեննագմական սւռուսով կատարելագործուած լինելով, ամբողջ վեց ժամ պատերազմեց հազարից աւել մարդ կոտորեց, միայն ողջ էր շահգատէն, որ իրան պաշտպանոււմ էր վահանով, և մի ժամուայ շափ էլ նրա հետ կռուելուց յետոյ վերջապէս մի թունդ հարուածով էլ նրան գլխից ձիուց ցած, և ինքն էլ ձիուց իջաւ դաշոյնը հորա սիրտը խրելով ուղարկեց իրանց Ալիի և Աբրասի մօտ: Փառք տուեց Աստծուն իւր սուրը սրբեց, հեծաւ ձին և գրնաց գէպի Սօֆիային: Տեսաւ որ Սօֆիան այնքան լաց է եղել որ աշրերից արտասուքի տեղ արինն է եկել: Սմբատն ասաւ, ինչու ես այդչափ լացել Սօֆիա, նա ասաւ ինչպէս չլայի, որովհետև դօրքի բազմութիւնն որ տեսայ յայսրս կտրուեց, հիմայ փառք Աստծու որ ողջ եկար ինձ մօտ:

Այսպէս Տիրոջը փառք և գոհութիւն տալով, հեծան ձիերը և շարունակեցին իրենց ճանապարհը: Վերջապէս մթնեց օրը, արեղակը մայր մտաւ. նըրանք դարձեալ գնում էին, մի յուսնեակ գիշեր էր, մօտեցան մի քարայրի և մտածեցին որ այդ այրում գիշերեն, ձիանքը բռնեցին այրի դուռը. երբ կամեանում էին իջնել, յանկարծ մի գորդոցլտեցին Սըմբատն ասաւ, Սօֆիա, դու այստեղ մի քիչ սպասիր, ես առաջ դնամ և տեսնեմ ինչ դրդիւն է Սըմբատը պատրաստ առաջ անցաւ և տեսաւ որ մի ասագին բանակ. դու մի ասիլ միւս կողմից էլ շահատի հայրը Իսքիանդար շահը ասագին թուով դօրք

առած Սմբատի յետեիցն է եկել, ամբողջ օրը փնտրել և չնն կարողացել նրան գտնել, եկել են և այստեղ բանակ դրել:

Նրանց պահապանները խոսյն տեսան Սմբատին և ձիուց ճանաչեցին որ նա Սմբատն է, գնացին և շահին յայտնեցին թէ, Սմբատն այստեղ երևաց. Խսրեանդար շահն հրաման տուեց ամբողջ զօրքը պատրաստուելու և ինքը զինուած դուրս եկաւ Սըմբատի դէմ. նա որ Սմբատին տեսաւ գոյնը, թռաւ և կատաղի գայլի նման կարմրած աչքերով տեսաւ որ Սօֆիան չ'կայ Սմբատը մենակ է, նա, կարծեց թէ Ջահգատէն անպատճառ Սօֆիային տարած և սրան արձակած կ'լինի, պաղանի նման դռնաբաց անաւ, իլան բալասի, մապեամ Ջահգատէ սէնի սնդ մի բրախմիչ, հայաեափաշ, բիր ալըմայ դիւշերտէն, գուրգ ու գուշա ետրրիմ. Սմբատը տաճկերէն հասկանալի լեզուով ասաւ, շարիֆ շէքէթլըմ, դադաբննան սախլաբի, երի բեաշմա, ջափաթ. դիշլմայ գեալտի, դէիմ, սնդան սօգրա ամրը սաննդըք Ջահ Խսրեանդարը. ձիու սանձը քաշեց, և ասաւ, իսթէք դէ, իսթէկր դէմայ, սալըղըն բիր իբի դախսէ դալմիչ դէ գէօրիմ, բի, նէ դիաջագսն: Սմբատն սանթուրը առաւ և նուագեց պարսից ջանգի քոռ օղլու եղանակով այսպէս:

Ս մ ք ա տ ն

Նա բոխսի բասրբոսան տարլմնան բիլմամ,

Ջարր էյլամայ ինդի դարըն ագելէր,
Քէօյլանի մինանդա դահի զավթ օլմամ,
Էար բեալալար սօղան քիմի պէօքիւլիւր:

Այս տունը որ ասաւ, շահն ասաւ, մուստաւ
էրմանի ճ դատար արբիչի օլուոյ սան հան. սազրն
քի սրա մանըմ դր:

Շ ա հ ը

Ստըմ բիւմիանայ գեարակ բիւտրիմ,
Ղարզի թափրատանտա բէլմ բիւքիւլիւր
Ղըլըն տալի ինան սանի օյլգիւրիմ.
Ջամգաքն այսոյ ալթրնդա խեաք օլուր:

Ս մ ը ա տ ն

Սարր էթ սանն ու ջալդրմ ենտրիմ,
Սու բողլէիփ օջաղնդի սէճնդիւրիմ,
Աթաշ սալիմ մէմլէրեաթն հանդրիմ,
Քէտէնն տաղգիմ բուրջըն սէօքիւլիւր:

Շ ա հ ը

Թիլքինն փէշասի թեզմէքդր դաթի,
Սարէին դէօրթ հանի դաշմասն դաթի,
Յըղարամ Թէհրանի Թաւրիզ Թօղաթի
Օնդա գիւզէլ օլուր իշն թիքելլր:

Ս մ ը ա տ ն

Քալայ Սմըատ հար մէյտանայ գիրանդայ,
Հոփլաը դօշար ղըլըն ղընդան սեյրանդայ:

Եայօխ օյնադանդայ հայ գշխրանդայ
 Չաշբառ շալկլթրսի արշա շեարիլր:

Շ ա հ ը

Մէն շահ խրեանդարամ, սէն նէ ըեարասան,
 Գիւջ էյլէյիպ աջ դուրտ իւստէ վարասան
 Ինադ էլթմէմ ադեար թոյեա վերահան.

Եօխսամ դանն տադտան տադա աքեալլթ:

Բանալիսիւր որ վերջացաւ, Սմբատը դարձաւ
 դէպի արեւելք հրեք տնգամ ինրն իրան խաչակնքեց
 և առաջուայ նման ուրր մերկացրած Աստուծոյ
 օգնութեանը ասպաւնելով բանակի մէջ, աջ ու ձախ
 հարուածելով սարսափ գցելով նրանց մէջ, գիշեր ժա-
 մանակ զօրքը շփոթուած իրար էին հարուածում,
 որերի սաշխնը. վահանների դոփիւնը և ձիերի
 փռնչոցը օդը թնդանցնում էր, ահագին կոտորածի
 մէջ ընկաւ նաև շահը. մնացող մի քանի զինուորն
 էլ բռնեցին Պարսկաստանի ճանապարհը թայց Սմ-
 բատը նրանց շթոյեց Թէհրան լուր տանելու այլ
 նրանց էլ միւսների հետ հասցրեց Մահմետի գոքը:
 Ամբողջ գիշերը Սմբատը պարպեց այդ ահագին բա-
 նակը և այդ դաշտը դիակներով լցրեց և արեան
 հեղեղատներ վազզեցրեց, շնայելով որ պարսից այդ
 զօրքերը բոլորն էլ բաջ և արունարբու գազաններ
 էին: Յետոյ ընկած դիակների միջից գտաւ շահ Իս-
 կեանդարի դիակը, կտրեց նորա գլուխը և նիզա-
 կի ծայրը գարկեց տարաւ Ասֆիայի մօտ և ասաւ

Նազելի Սոֆիայ, ահա շահն էլ ընդ մատաղ արի, ահա նրա գլուխը, բայց այդքան զարուբհելի պատերազմի և կոտորածի մէջ, Աստու զօրութեամբ և իւր վերա Կտնուած աղօթքագրերի օգնութեամբ ոչ մի վէրքի նշոյլ անգամ չկար Սմբատի վերայ, սրովհետև Սմբատին և Սոֆիային սիրոյ բաժակը խմցանոցը ու Սարգիսն էր, նրա համար էլ, նրանց օգնում և սլաշտպանում էր ամեն մի դէպրում, սր և ձեզ էլ օգնէ և սլաշտպանէ ամենակարող Ասու-լած ամէն:

Նրանք հանդուտացան և շահի գլուխը վեր առան ու հեծնելով արարական նժոյգները զնային դէպի Զէյթուն. թէև այդ տեղից Արմաւիրը աւելի մօտէր, բայց Սմբատը դիտմամբ չ'զնայ Արմաւիր, որպէս զի, Սոֆիին տանի իւր հայրենի բաղաբը և մօր տխրութիւնը զօնէ Սոֆիայի միջոցաւ, մի թիշ ուրախութեան փոխել կարողանայ Վերջապէսքոան օր շարունակ ճանապարհորդութիւն արին և հասան Կիլիկիոյ սահմանը. իրանք իրտնց ապահոված դիտնայով իջան մի յարմարաւոր տեղ, ապահով և հանդիստ սրտով ազատողին գահութիւն և փառք վերառաքեցին, որ և ազատէ նոյն ազատարարն ամէն մի անտէր և անօգնական մնացողներին. այստեղից հեծան ձիաններն և մինչ մուլթը ընկնելը հասան մի փոքրիկ պիւղ, նրանք իջևանեցին մի մարդու տուն և այդ մարդուն պատմեցին իրանց գլխին եկած սնորքը, ցոյց տուին նրան, նաև շահի կտրուած գլ-

լուխը, որի պակներն հաստացած և կատացած և ատամները բաց մնացած, գանգի մէջ տեղը կընտած էր, տեսնողները մնացել էին զարմացած նրա անպատմելի բազուկեան վրայ: Գեցցես, ասում էին նրանք, որ ազատեցիր բոյրիկիս, երեք օր այդ մարդը Սոֆիային և Սմբատին չթողեց զնայու. այդ տեղ մի լաւ հանգստացաւ, և Սմբատը մի սամակ գրեց և ուղարկեց Ջէյթուն իւր պօքանջին (Վառվառին) և Յովսէփ իշխանին, թէ ահա ես ձեր սիրելի որդի Սմբատը ողջ առողջ գալիս եմ Սոֆիայիս հետ. այդ պիւղից մինչ Ջէյթուն մի օրուայ ճանապարհ էր, նամակն ստացաւ Յովսէփ իշխանը և մեծ ուրախութեամբ, և կարգաց Սոֆիայի Սմբատի դալստեան լուրը հաղորդեց Վառվառին, և ինքը տէրութեան կողմից վեր առաւ հարիւրի շափ ձիաւորներ և դէմ գնաց Սմբատին: Սմբատը և Սոֆիան ճանապարհ որ ելան այդ գիւղից, մինչ այդ տեղը տղամարդի հագուստներով էր Սոֆիան, ճանապարհին Սմբատն ասաւ. Սոֆիան հանիր այդ հագուստները և բո իսկական հայաւն հագիր գնանք: Սոֆիան կատարեց Սմբատի խօսքը և գալով մօտեցան Ջէյթունին: Յովսէփը իր հետ ունեցած հարիւր ձիաւորներով դուրս եկաւ Սմբատի առաջ քաղցր և ջերմ սիրով ողջունեցին, միմեանց և միասին գնացին, երբ որ մտան քաղաք, Վառվառէն էլ իր բարեկամներով եկաւ Սմբատին առաջ, և ուրախ զուարթ գնացին տուն, Յովսէփ իշխանը այս ձիաւորներին ուղարկեց իրանց

գործին, իսկ իրանք մտան Տիրգրան վաճառականի
տունը: Չառվառէն մի ձեռքը գցեց Սմբատի և մի
ձեռքը Սօֆիայի վիզը և համբուրում էր նրանց և
Տիրոջը փառք տալիս, դուրէյիթ եղանակով այսպէս
երգում էր:

Մ ա յ ը ն

Սյսօր ինձ հաղար աւետիք,
Սյսինչ բարի օր է այսօր,
Մեծ տօնախումբ նաւակատիկ,
Տեղով տաղաւար է այսօր:

Սօֆիան ասաւ մայրիկ, այդ խօսքերդ իրաւ է
բայց սպասիր հերթով ասենք և ինքը սկսեց:

Սյս օրս միշտ տօն կատարէ,
Ամէ ամ յօրդորէ մայրիկ,
Սյս մի բարի բան համարէ
Մեզ պատիւ շնորհէ մայրիկ:

Մ ա յ ը ն

Յառաջ մէ վատ գնաց վարդս
Աստուծմէ չը կտրի փառքն,
Նօրոգուեց բաժնն աշխարքս,
Երկինք երկիր նոր է այսօր:

Ս օ ֆ ի է ն

Չար շահաատա Սուլէյմանը,
Ջօրքերով կկաւ դաղանը,
Անօրէն մահմէդականը
Գամէր մեզ կոտորէ մայրիկ:

Մ ա յ ը ն

Վառւթաւն եմ մէջ ուրախութեան
Աստուծուն փառք ու գոհարան,
Մէկ կողմս վարդ մէկս շուշան,
Մէկս էլ նունուֆարէ այսօր:

Ս Օ Փ ի է ն

Տես Սմբատս ինչեր արեց.
Չահն ու շահգատին գլօրեց,
Սօֆիայիդ գերուց յետ բերեց
Քաջ, գօրեղ զինուոր է մայրիկ:

Երգեցողութիւնը վերջացաւ. նրանք նստան ու-
րախացան: Յօլսէփ իշխանը տասաւ, դէհ Սմբատ
ջան, պատմիր տեսնինք ինչպէս կարողացար այդ
պատառող գազաններէ ճանկից ազատել և բերել
Սօֆիային: Սմբատը պատմեց իւր պլխու հկած բո-
լոր անցքերը, և ցոյց տուաւ շահի կոտորուած ա-
տամները. բայց մնացած գլուխը երբոր տեսան
մնացին զարմացած և նոր հաւատացին որ Սմբա-
տի բոլոր ասածները ուղիւ են, ուրախութիւն ա-
նելով միմեանց աչքալոյս էին տալիս, մի բանի
մեծամեծ մարդիք ևս կանչեց և շահի գլուխը ցոյց
տուաւ, և այդ մարդոց հետ վեր առաւ շահի գը-
լուխը և տարաւ քաղաքի դարբասի վերի սեմին
գամեց, որ անց ու դարձ անողները տեսնին և
տեսնողները ի հարկէ կասեն այս և ահա աշխար-
հաւէր շահի գլուխը, և ամեն մի տեսնող գովել էր

սկսում Մմբատի բաջայաղթ անունը, որով հռչակ-
 ուեցաւ նրա բաջութիւնը ամբողջ հայաստանում:
 Յովսէփ իշխանը Սոֆիային և Մմբատին հրաւիրեց
 իւր տուն, և իր բոլոր բարեկամներով երեք օր
 շարունակ կերուխում արին, որովհետև Մմբատն էր
 որ նոյեմզարին (Յովսէփի հարսը) յաղթեց և Յով-
 սէփ իշխանի որդոյ հետ ամուսնացրաւ, դրանց հա-
 մար Յովսէփը շատ մեծ յարգանք ցոյց տվաւ Սրմ-
 բատին և Սոֆիային և իւր ստացուածքից նրանց
 ամեն մէկին հօթը ձեռք ծիրանապոյն հանդերձ
 րնծայեց, Սոֆիային, սլարանոցի ոսկի մանեակ ոս-
 կի արարանջան և մատանիներ շնորհեց. և արկղը
 բանալով բաւական էլ ճանապարհածախս ոսկի տը-
 լաւ: Եւ այն տեղից գնացին Վառվառի տունը,
 մի չորս օր էլ այնտեղ մնացին, հօթ որ լրա-
 ցաւ, ութներորդ օրը, Մմբատը հայրենիք գնալու
 թոյլտուութիւն խնդրեց, թէ Վառվառն և թէ պ-
 Յովսէփը արժան համարեցին ճանապարհ գցելու ու
 սասցին, մի այս օր էլ սպասեցէք վաղը շուտով
 ձեզ ճանապարհ կ'ձգենք, այո օրը Վառվառէն տա-
 սը բռնակիր գրաստներ պատրաստեց, օրից հօթը
 իր տնական օժիտը բարձեց և երեքը, Յովսէփի
 րնծաները՝ Վառվառէն խնդրեց պ. Յովսէփին թէ,
 Մմբատին պէտք է զօրքերով յուղարկաւարես, Յով-
 սէփին ասաւ, առանց քո խնդրելուն ես արդէն եր-
 կու հարիւրի չափ զօրք պատրաստել եմ, Մմբատին
 մինչև իր հօր բաղաբը, Ամաւիր տանելու: Միւս

առաւօտ ամեն րան պատրաստ էր, մնաս բարով
ասացին և Սօֆիայի օժիտով բեռնաւորուած գը-
րաստները առաջներն արած, երկու հարիւր դօր-
քով մեծ ուրախութեամբ քաղաքից դուրս ելան և
գնացին դէպի Արարատեան աշխարհը: Քաղաքից
քաղաք իջևանից իջևան անցնելով եկան մի ամ-
սոյ շափ ճանապարհ, և հասան Ալաշկերտ, հրք
այդ տեղիցն առաջ գնացին, արդէն մօտ էր Արա-
րատ մեծ սարր որի կտարը շատ հեռուիցն էլ
կարող է տեսնուիլ, երբ այդ հսկայատիւ սարը
երևաց Սմբատի տէքերին, նրա որտին կարծես մի
տեսակ ցնծութիւն եկաւ, որի համար ասաւ. Սօ-
ֆիա, տեսնում ես այդ վիժխարի լեռաը այդ է
Արարատ կամ Մասիս ասուած սարը, որի վերայ է
ասում են Նոյեան տապանը:

Սպասիր Սօֆիայ, այդ սարի էլ սիրտը շահե-
լու համար մի քանի խօսք էլ դրա վերայ ասեմ,
սանժուրը առաւ դուրէյիժի ելանալով, երբեց
այսպէս:

Սյուր սիրտս ուրախացաւ

Որ տեսայ Արարատ բեզի,

Բոլոր հոգսերս հեռացաւ

Որ տեսայ Արարատ բեզի:

Միշտ քաշում էի կարօտդ,

Բարով տեսայ ստորստդ

Քաղցր բուրանց անուշ հոտդ:

Երբ տեսայ Արարատ քեզի՛,
Գու ես հայոց վեհարանը,
Նոյա յարդի իջեանը,
Մխտըս ընկաւ սուրբ տապանդ,
Երբ տեսայ Արարատ քեզի՛:

Սշխարհ խօսում է անունդ,
Նոյա հիւրընկալութիւնդ
Ինձ այցելեց շարս անկիւնդ
Երբ տեսայ Արարատ քեզի՛:

Սմբատն եմ շուռ եկայ աշխարհը,
Ձկայ քեզ պէս բաձրահասակ,
Փառք սուրբոցիս հազար փառք,
Որ տեսայ Արարատ քեզի՛:

Երգը աւարտեց և շարունակեցին ճանապարհը միւս օրը մտան Արմաւիրի սահմանը և արդէն մնաց մի ժամուայ ճանապարհ որ հասնին Արմաւիր. մի դաշտավայրում ձիերից իջան հանգստանալու և այդ տեղ Սմբատը մի նամակ գրեց իւր հօրը և յանձնեց իւր ձիաւորներէց մէկին որ տանի Արմաւիր և յանձնէ իւր հօրը. Ձիաւորը տարաւ նամակը և յանձնեց Սողաթէլին, Սմբատի հօրը, նա կարդաց և իմացաւ որ, Սմբատը ողջ և առողջ Սոֆիայի հետ գալիս են, իւր կին Մարգարիտի հետ օւրախութեամբ լցուած, մի կառք նստան և վնացին Սմբատի առաջ, տեսան որ Սմբատն էլ միւս կողմից իւր

ձիււորներով գալիս է: Երբոր մօտեցան միմեանց Սմբատը ու Սոֆիէն ձիերից իջան ու ոտով գնացին հօր կառքի առաջ նորա ուրախութիւնից լաց էին լինում և այդպէս լալով ողջունեցին միմեանց և համբուրվեցին, յետոյ Սմբատն ու Սոֆիէն էլ հեծան կառքը, Սմբատը իւր մօր մօտ և Սոֆիան իւր սկեսրայրի մօտ նստեց և զինուորներն էլ նրանց բոլորը փաթթած մտան քաղաքը, Երբ քաղաքացիք լսեցին Սաղաթելի որդի Սմբատի գալը, դզրդաց ամբողջ քաղաքը և բոլոր էլ կրպակները կողպելով դուրս ելան Սմբատին տեսնելու որովհետև այդ քաղաքի ամբողջ ժողովուրդը Սմբատով էր պարծենում թէ զիտութեան և թէ քաջութեան կողմից Սմբատի անունը տարածել էր ամեն տեղ, ժողովուրդը միմեանց տրորելով առաջ էին անցնում նրան տեսնելու: Երբոր Սմբատը քաղաքի դըրութիւնը նկատեց, սանթուրը ձեռքը առաւ և սկսեց մի դուբէյիթ բռնօղլու թեթև եղանակով, և երգեց:

Ս մ ք ա տ ն

Բացուիր մայրիկ ուրախացի,
Ճնձա այսօր որ ես եկայ,
Գնալուս տրտում գնացի
Հիմա ծիծաղ երես եկայ:

Այս տունը օր ասաւ, մայրն ասաւ, ապրիս
Սմբատ ջան, ապրիս, սպասիր որ ես էլ ասեմ իմ
ջանկացածը և ասաւ:

Մ ա յ ը ը

Լուրդ առայ Քէյրան գնացիր
Ողջ ու ազատ ինչպէս եկար,
Պահող Աստուածմէ գոհացիր
Գժւար է շատ ինչպէս եկար:

Ս մ բ ա տ ն

Զուր չ'գեաց աշխատանքս
Տէրն յիշեց դառը տանջանքս
Աղաչելով աղերսանքս
Աստուած չառաւ անտես, եկայ:

Մ ա յ ը ը

Որդի, ես քո կեանքիդ մատաղ
Բազում աշխատանքիդ մատաղ,
Քաշած չարշարանքիդ մատաղ,
Մեծ փառ էր այդ, ինչպէս եկար:

Ս մ ը ա տ ն

Սմբատն եմ Արմաւիրցի,
Ողջ Պարսկաստան աւերեցի,
Անթիւ զօրրեր կոտորեցի
Ազատեցի Սոֆիէս, եկայ:

Մ ա յ ը ը

Մարդարիտն եմ չարըդ տանիմ,
Այսուհետե թող մեռանիմ
Յոյս չունէի բեզ տեսանիմ
Այսօր ականառես եկար:

Այսպէս մայր ու որդի երգելով հասան իրանց

տան դուռը, ժողովուրդը մինը միւսի ուսերի վի-
րայ էր բարձրանում Սմբատին ու Սոֆիային տես-
նելու, դրա համար էլ նրանք ժողովրդեան ցանկա-
ցածին լրութիւն տալու համար երկու ժամի շափ-
դռանը մնացին որպէս զի ամենք էլ տեսնին նը-
րանց, բոլորն էլ տեսան խնդացին և վերադար-
ձան ամենքը իրան գործին: Սաղաթէլը հրամայեց
ժառանգրին ամբողջ ուղեկից զօրքերի ձիանները
տեղաւորեցին, և ինքը այդ բոլոր զօրքը պատուով
պահպանեց մինչև Սմբատի հարսանեաց աւարտը,
յետոյ առանձին, առանձին ընծաներ տալով մեծ-
պատուով վերադարձրաւ իրանց տեղը՝ Զէյթուն-
Երբոր Սաղաթէլը պատրաստուում էր հարսանիք ա-
նելու Սմբատն ասաւ, հայրիկ ես մի խնդիր ունիմ
քեզ: Հայրն ասաւ. ինչ է Սմբատ ջան, ասա տես-
նիմ, ինչ որ կամենում ես պատրաստ եմ կատարե-
լու: Սմբատը ասաւ, ինչ որ իմ հարսանեաց հա-
մար պէտք է, լսիր որ ես երբով ասեմ, ու սկսեց
դասթանի հղանակով կրպել այսպէս.

Հայր իմ գերապատիւ ներք դու ներէ,
ներէ որ քեզանից բաներ շատ կուզեմ.
Ինչ որ կուզեմ ուրախութեամբ կատարէ,
Կայր ու ստացուածքիդ համեմատ կուզեմ:

Սկզբէն պատրաստէ անուշ խմելիքներ,
նրա հետ պատրաստէ նուշ ու շամիչներ.
Չախանակի կթօն ընկուզի միջներ

Պաանց շափր, անկշիռ և անհատ կուզեմ:
Ամենայն մի բանը կարգով տեղն ու տեղ,
Յիսուն եզ մաացու վաթսուն ֆունտ տարտեղ,
Եւթանասուն լիտր մարուր կովի եղ-
Հայած ու մարած անարատ կուզեմ:
Կուզեմ կիրակուրներ համեղ պատուական,
Հաւի միս ծնեփակ ձուկը բաւական
Խորովածցու գառներ երկու ամսական
Համրանքով պատրաստուած 100 հատ կուզեմ:
Բոլոր սենեակներդ պատրաստէ վագով,
Խայտապղէտ, պայծառ գոյնզգոյն դեղով,
Հոտաւէտ ծաղկունքով, նարթոսի իւղով,
Բազմոցներդ փռուած պատէ պատ կուզեմ:
Պարզադրէ քառասուն տեղ եփեն հաց,
Ամեն բանի վերատեսուչ ինքդ կաց
Օրստ օրէ աւելացրու սրտարաց,
Զօր, գիշեր սեղանդ լիտուտ կուզեմ:
Քառասուն բեռ գինի, քառասուն օղի,
Քառասուն բեռ պատրաստ լինի խաղողի,
Քառասուն բեռ միրք ու մազա խմողի,
Քառասուն գրաստի բեռ փշատ կուզեմ:
Յետոյ կանչէ աւագ հրաւիրակներ,
Համայն ընտիր ազնուական զաւակներ,
Երամ երամ ժողովէ մեր հպատակներ,
Վազմէ հարսանիքս շրջապատ կուզեմ:


Մեծամեծ մարդկանց դատ դատ օթևան:
Քեհեղէ բարձ, փղոսկրէ նստարան
Չարքով աշտանակներ դիր շարուէշարան
Արծաթեալ ջահերը մսմապատ կուզեմ:
Ուզածս կատարէ դու անվրիպակ,
Ընարէ մի բանի սեսեալ նուիրակ
Երբոր հարսանիքս լինի բոլորակ,
Կանգնած ծառաներս անարատ կուզեմ:
Հանդիսաւորները նոտեցրու դաս, դաս,
Սպասաւորներիդ պատուէրներ կտաս,
Լցնեն անուշ դինին բաժնեն անպակաս,
Ինչպէս վազման ջրի, գետ եփրատ կուզեմ:
Ձեռք, ձեռք նուազարան համրանքով քսան,
Երգիչներն հաճելի երգով խօսան,
Տասը կամ քսան ձեռք սրինգ ու գուռնայ,
Իմ ազրունանքներս սլայազատ կուզեմ:
Մէկ կողմս խաղ լինի, մէկ կողմը խնդալ,
Օշալ ակներ մեղրով շինուած եղձեալ
Սպրեշումէ ջնջօց ոսկեցէ գդալ,
Գինու բաժակները ողջ արծաթ կուզեմ:
Աստուածանից ելաւ այս նպատակս,
Վերջը յաջող դարձաւ ահեակ վիճակս,
Խնդրէք որ վայելեմ թագ ու պսակս.
Մինչի մահ Սոփիայէս ան անջատ կուզեմ:
Հայցեմ 'ի քէն եօթն անուն ս. Կարապետ,
ՏՆՆՐ բարի վայելում իմ Սօփիայիս հետ,

Լիառատ պարգևիչ շնորհատու վարպետ,
Յաւերժ ես բեղանից բարի խրատ կուզեմ:

Գիւլպեագեանը սիրեց Մմբատ անունըս
Աշխատանքով դրեց զիր պատմութիւնս
Յիշատակի համար կազմեց մատեանս
Ով լսէ, ողորմի տայ հաստատ կուզեմ:

Մմբատի բոլոր ասածները, դեռ մի օր շան-
ցած, Մաղաթէլը կատարեց առատօրէն, և միւս
օրը ամբողջ ազգ ու երամով, հարսանիրը բոլորեց,
եօթն օր, եօթն գիշեր, ուրախացան հարսի և փե-
սայի վրայ: Եւ իրանք ինչպէս հասան իրանց ցան-
կալի նպատակին, դուք էլ հասնիք ձեր բարի նը-
պատակներին, ամէն:

Վ Ե Պ Ջ



Handwritten text at the top of the page, possibly a title or header, which is mirrored.

4475 80 1111

Handwritten text in the center of the page, possibly a date or reference number, which is mirrored.

Handwritten text at the bottom of the page, possibly a footer or signature, which is mirrored.

30704

Աղուանի եւ Օսանի հեքիաթը գինն է 50 կոպ.



ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել՝ Александрополь, Типографія «Ширак»





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039001

A ¹/₃₉₆₁